ԵԱՀԿ
Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
Երևանի գրասենյակ

Հոսանքաբաշխիչ կրթության կենտրոն ասոցիացիա

Նիդերլանդների թագավորություն

ԿԱՆԱՅՔ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ 2013

ՀԱՍԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՄԲ ԿԱՆԱՆՑ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ԿԱՆԱՅՔ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանում 2012 թ. խորհրդարանական ընտրությունների նախաշեմին և ավարտից հետո անցկացված հարցազրույցների ժողովածու

ԵՐԵՎԱՆ
«ԱՍՈՂԻԿ»
2013

ՀՏԴ 396.9
ԳՄԴ 66.74
Կ 200

«Կանայք քաղաքականության մեջ և քաղաքականության մասին»
Հայաստանում 2012 թ. խորհրդարանական ընտրությունների նախաշեմին և
ավարտից հետո անցկացված հարցազրույցների ժողովածուն
հրատարակվել է
«Կանանց քաղաքական մասնակցությունը Հայաստանում 2012 թվականի
խորհրդարանական և տեղական ինքնակառավարման մարմինների
ընտրություններին» ծրագրի շրջանակներում
Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի
Գենդերային հետազոտությունների կենտրոնի կողմից,
ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ և Վրաստանում Նիդեռլանդների
Թագավորության դեսպանատան ֆինանսավորմամբ:

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան երախտագիտություն է հայտնում չորրորդ և հինգերորդ գումարման ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներին, քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների լիդերներին և ակտիվիստներին, բոլորին, ովքեր ժամանակ հատկացրին հարցազրույցների անցկացման համար և աջակցեցին ժողովածուի պատրաստմանը:

Հատուկ երախտագիտություն ենք հայտնում ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ժողովրդավարացման բաժնին՝ գրքի հրատարակմանն աջակցելու համար:

Կանայք քաղաքականության մեջ և քաղաքականության
Կ 200 մասին: Հայաստանում 2012 թ. խորհրդարանական ընտրությունների նախաշեմին և ավարտից հետո անցկացված հարցազրույցների ժողովածու/ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա; Գենդերային հետազոտությունների կենտրոն.-
Եր.: Ասողիկ, 2013.- 156 էջ:

ՀՏԴ 396.9
ԳՄԴ 66.74

ISBN: 978-92-9234-171-8
ISBN: 978-9939-50-214-4

© OSCE
© Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, 2013

Նյութերի օգտագործման դեպքում հղումը պարտադիր է:

ARMENIAN ASSOCIATION OF WOMEN WITH
UNIVERSITY EDUCATION
CENTER FOR GENDER STUDIES

WOMEN IN POLITICS AND ABOUT POLITICS

Collection of interviews conducted immediately before and in the aftermath of the 2012 parliamentary elections in Armenia

YEREVAN
ASOGHIK Publishers
2013

Organization for Security and Co-operation in Europe
Office in Yerevan

Armenian Association of Women with University Education

Kingdom of the Netherlands

Women in Politics and about Politics
The collection of interviews conducted immediately before and after the 2012 parliamentary elections in Armenia has been published by the Center for Gender Studies of Armenian Association of Women with University Education within the framework of the Project Women's political participation in the 2012 parliamentary and local self-government bodies elections in Armenia with the support of the OSCE Office in Yerevan and with funding provided by the Embassy of the Kingdom of the Netherlands in Georgia

Armenian Association of Women with University Education wishes to express its gratitude to members of the RoA National Assembly of the Fourth and Fifth Convocations, to leaders and activists of political parties and non-governmental organizations and to all other individuals who gave their time for interviews to be conducted and who helped with the preparation of the publication.

Our special thanks go to the Democratization Section of the OSCE Office in Yerevan for the support of the publication of the book.

ISBN: 978-92-9234-171-8
ISBN: 978-9939-50-214-4

© OSCE
© Armenian Association of Women with University Education, 2013

A reference must be made to this publication in any use of these materials.

Հետաքրքրությունը քաղաքական գործընթացների նկատմամբ կյանքի նորմ է դարձել ժամանակակից կանանց համար

Մենք հետաքրքիր ժամանակներ ենք ապրում… Վերջին ավելի քան 20 տարիների ժողովրդավարական գործընթացներն ամբողջ հասարակությունը, այդ թվում և մեզ՝ կանանց, ներքաշել են քաղաքական, տնտեսական և սոցիալական փոփոխությունների հորձանուտը:

Եվ ինչքան ջանասիրաբար էին փորձում կանանց «փակել» խոհանոցային կյանքի նեղ հատվածում, այնքան լրջորեն էին խորհում նրանք, թե որտեղ է կյանքում իրենց տեղը:

Կանանց ճնշող մեծամասնության համար այսօր կյանքի նորմ են դարձել ոչ միայն ընտանիքի կենսապահովման, երեխաների կրթության, առողջության, ինչ թաքցնենք, նաև ամուսինների խնդիրները, այլև հետաքրքրությունը քաղաքական գործընթացների նկատմամբ:

Մենք մեր իրավունքների համար քաղաքական պայքարի փորձ չենք ունեցել, քանզի հենց հայ տղամարդիկ են, որ կանանց դերը, նրանց կրթությունը և քաղաքական մասնակցությունը որպես ազգային գաղափարախոսության և ծրագրի մաս դիտելով՝ Հայաստանի կանանց դեռ 1918-20 թվականներին ընտրելու և օրենսդիր բարձրագույն մարմնում՝ խորհրդարանում ընտրվելու իրավունք են վերապահել:

Այսօր Հայաստանի կանայք ավելի լայնախոհ են դարձել և սկսել են գնահատել այն իրավիճակը, որում հայտնվել ենք մենք և մեր երկիրը, և, անշուշտ, սկսել են ելք փնտրել ստեղծված դժվարությունները հաղթահարելու համար:

Ձևավորվել է այն ըմբռնումը, որ կանայք միայն քաղաքականությանը մասնակցելով կարող են իրապես ազդել երկրի կենսագործունեության բոլոր ոլորտների փոփոխությունների վրա:

Կանանց քաղաքական մասնակցության հիմնախնդիրը վաղուց է դարձել հասարակական բանավեճերի առարկա, և որքան էլ զարմանալի է, ոչ միայն տղամարդիկ, այլև կանանց մի որոշակի հատվածն էր իրեն տեսնում ընտանեկան կյանքի նեղ շրջանակներում:

Տարիներ պահանջվեցին, որպեսզի կանանց քաղաքական մասնակցության հիմնախնդիրը, հասարակական բանավեճերի դիսկուրսից դուրս գալով, որոշակի օրենսդրական ուրվագծեր ստանար և նպաստեր հասարակական գիտակցության մեջ քաղաքական իշխանության մակարդակի կառավարման համակարգում կանանց ներկայացվածության հրատապության ու անհրաժեշտության ըմբռնման ձևավորմանը:

Այո, շատ բան է փոխվել թե՛ հասարակական գիտակցության, թե՛ օրենսդրության մեջ. ներդրվել են գենդերային քվոտաներ, որոնք 5%-ից բարձրացել են մինչև 20%, Ազգային ժողովի անցյալ՝ 4-րդ գումարման համեմատ՝ որոշ, թեպետ չնչին, առաջընթաց է տեղի ունեցել խորհրդարանում կանանց ներկայացվածության առումով:

Սակայն կարևոր են ոչ այնքան աննշան դրական տեղաշարժերը, որքան հասարակական կարծիքի փոփոխությունները կանանց քաղաքական մասնակցության կարևորության մասին, իրենց իսկ կանանց գիտակցության փոփոխությունները, քաղաքական մասնակցության պատրաստակամությունը, քաղաքական խնդիրների լուծման որոշումներին մասնակցելու իրավունքները պաշտպանելու պատրաստակամությունը:

Ազգային ժողովի 2012 թ. ընտրությունների նախաշեմին և ընտրություններից հետո հարցազրույցներ են անցկացվել այն քաղաքական գործիչ կանանց հետ, որոնք պատրաստվում և մասնակցում էին ընտրություններին, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների և հասարակական շարժման կանանց հետ:

Այդ հարցազրույցները, որոնք մեկտեղված են այս ժողովածուում, պատկերացում են տալիս քաղաքական գործընթացներում կին քաղաքական գործիչների դիրքորոշման, նրանց դժվարությունների ու մտահոգությունների, կանանց քաղաքական մասնակցության վիճակի և հնարավորությունների ընդլայնման, ինչպես նաև հասարակական կարծիքի մեջ տեղի ունեցած փոփոխությունների և կարծրատիպերի հաղթահարման մասին: Կարծում ենք՝ նրանց մտորումներն ու գնահատականները հետաքրքրություն են ներկայացնում թե՛ ուսումնասիրողների, թե՛ ընթերցող լայն շրջանների համար:

Ջեմմա Հասրաթյան
Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ,
մանկավարժական գիտությունների թեկնածու

INTEREST IN POLITICAL PROCESSES HAS BECOME AN INSEPARABLE PART OF LIFE OF TODAY'S WOMEN…

We live in interesting times … The developments in the course of the democratic transformations that have been underway for over 20 years have drawn the society at large, including us, women, into the whirlpool of political, economic and social changes …

And the more actively the efforts were made to drive us women into a modest sphere of the kitchen life, the more actively we started thinking about where our place should be in this life! …

For the overwhelming majority of women today not only the problems of family livelihood, husbands, education of children, health … but also interest in political processes have become an inseparable part of life!

We, women of Armenia, did not have an experience of political struggle for our rights since Armenian men granted us the right to elect and be elected to the supreme legislative body of Armenia, the Parliament, as far back as 1918-1920 because they regarded the role, education and political participation of women as a part of the national ideology and program.

Today women of Armenia started thinking in broader terms and assessing our and the country's situation from a more concrete perspective and, of course, trying to find a way out of current difficulties…

We have come to the realization that women can have serious influence on changes in all spheres of the country's life only through political participation. The issue of women's political participation has become a theme of public discussions and, strange as it may sound, not only men but also some groups of women thought that they should confine themselves to family life only…

It took years for the issue of women's political participation to turn from a topic in the public discourse into concrete legislative initiatives. It has been instrumental in getting general public to realize the timeliness and necessity of women's representation in political power and decision-making.

Yes, much has changed both in the public mind and in the legislation: gender quotas had been introduced and then raised from 5% to 20%. In terms of women's representation some progress has been registered in comparison to the parliament composition of the previous convocation.

However, it is not so much some small positive changes that are important as the changes in the public mind due to the realization of the importance of women's political participation, changes in women's minds and their readiness for political participation and their willingness to defend their right to participation in the solution of political problems!

Right before and in the aftermath of the 2012 parliamentary elections interviews were conducted with women politicians, with women who were readying themselves to participation and then participated in the elections and with women from political parties and non-governmental organizations who engage in politics. I believe that their views and assessments of the political processes are of interest to researchers and broad segments of the public.

Jemma Hasratyan,
President, Armenian Association of Women
with University Education,
Ph D in Education

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ

Հերմինե Նաղդալյան *- ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ.....12*

Էլինար Վարդանյան *- ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, «Բարգավաճ Հայաստան»խմբակցություն.....19*

Մարգարիտ Եսայան *- ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ, «Հանրապետական» (ՀՀԿ)խմբակցություն.....23*

Կարինե Աճեմյան *– ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ,«Հանրապետական»(ՀՀԿ)խմբակցություն.....27*

Նաիրա Կարապետյան *- ՀՀ ԱԺ եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի անդամ, «Հանրապետական» (ՀՀԿ) խմբակցություն, ՄԻԱԿ կուսակցության անդամ.....35*

Արփինե Հովհաննիսյան *- ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ,«Հանրապետական»(ՀՀԿ)խմբակցություն.....39*

Ռուզաննա Մուրադյան *- ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ,«Հանրապետական»(ՀՀԿ)խմբակցություն.....43*

Լյուդմիլա Մարգսյան *- ՀՀ ԱԺ առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողովի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ, «Հայ ազգային կոնգրես» խմբակցություն, Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության ատենապետ.....49*

Զարուհի Փոստանջյան *- ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ, «Ժառանգություն» խմբակցություն.....58*

ՉՈՐՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ

Լարիսա Ալավերդյան *- «Ժառանգություն» խմբակցություն.....67*

Ռուզաննա Առաքելյան *- Հայ Յեղափոխական Դաշնակցության խմբակցություն.....74*

Անահիտ Բախշյան *- «Ժառանգություն» խմբակցություն.....80*

Լիլիթ Գալստյան *- Հայ Յեղափոխական Դաշնակցության խմբակցություն.....84*

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2012 թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ԿԱՆԱՅՔ

Լիլիթ Մակունց *- առաջադրվել է համամասնական ընտրակարգով «Հայ ազգային կոնգրես» կուսակցությունների դաշինքից.....92*

Նվարդ Մանասյան *- առաջադրվել է համամասնական ընտրակարգով Հայ Յեղափոխական դաշնակցության կողմից.....97*

Նատալյա Մարտիրոսյան *- առաջադրվել է համամասնական ընտրակարգով «Հայ ազգային կոնգրես» կուսակցությունների դաշինքից.....102*

Սաթիկ Մեյրանյան *- առաջադրվել է մեծամասնական ընտրակարգով թիվ 4 ընտրատարածքում (ք. Երևան).....107*

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՆ ԼԻԴԵՐՆԵՐԸ ԵՎ ԱԿՏԻՎԻՍՏՆԵՐԸ

Մարիամ Ապերյան *- «Բարգավաճ Հայաստան» կուսակցության Վանաձոր-Գուգարք տարածքային կազմակերպության «Կանանց, երեխաների, տարեցների» հանձնախմբի ղեկավար.....113*

Նարինե Ստեփանյան *- «Ժառանգություն» կուսակցության Արարատի մարզի վարչության անդամ.....120*

Ելենա Վարդանյան *- ՀՀ նախագահին առընթեր Հանրային խորհրդի գենդերային հարցերի և ժողովրդագրության հանձնաժողովի նախագահ, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Գյումրու մասնաճյուղի նախագահ.....125*

Մարիա Թիթիզյան *- Երևանում «Հրայր Մարուխյան» հիմնադրամի տնօրեն.....132*

Աիդա Թոփուզյան *- Կանանց հանրապետական խորհրդի նախագահ, «Կին ընտրողներ ի լիգա» հասարակական կազմակերպության հիմնադիր նախագահ.....137*

Աղավնի Կարախանյան *- «Քաղաքացիական հասարակության և տարածաշրջանային զարգացման ինստիտուտ» ՀԿ-ի տնօրեն.....141*

Նոննա Մարգարյան *- «Պրոֆեսիոնալները հանուն քաղաքացիական հասարակության» ՀԿ-ի նախագահ.....146*

Գոհար Շահնազարյան *- «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի համահիմնադիր.....150*

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ

Հերմինե Նաղդալյան *- ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ*

Էլինար Վարդանյան *- ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն*

Մարգարիտ Եսայան *- ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ, «Հանրապետական» (ՀՀԿ) խմբակցություն*

Կարինե Աճեմյան *– ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ, «Հանրապետական» (ՀՀԿ) խմբակցություն*

Նաիրա Կարապետյան *- ՀՀ ԱԺ եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի անդամ, «Հանրապետական» (ՀՀԿ) խմբակցություն, ՄԻԱԿ կուսակցության անդամ*

Արփինե Հովհաննիսյան *- ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ, «Հանրապետական» (ՀՀԿ) խմբակցություն*

Ռուզաննա Մուրադյան *- ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ, «Հանրապետական» (ՀՀԿ) խմբակցություն*

Լյուդմիլա Սարգսյան *- ՀՀ ԱԺ առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողովի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ, «Հայ ազգային կոնգրես» խմբակցություն, Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության ատենապետ*

Զարուհի Փոստանջյան *- ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ, «Ժառանգություն» խմբակցություն*

Հերմինե Նաղդալյան

«Եթե պատրաստված ես, կամային անձնավորություն ես և աշխատում ես, քեզ չեն կարող լուրջ չընդունել»

Ծնվել է 1960 թ. հուլիսի 28-ին Երևանում:

1981 թ. ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը: Տնտեսագետ: Տնտեսագիտության թեկնածու:

1981-1989 թթ.՝ Սպառողական կոոպերացիայի համամիութենական ԳՀԻ հայկական մասնաճյուղում աշխատել է կրտսեր գիտաշխատող, ավագ գիտաշխատող, ենթաբաժնի վարիչ, բաժնի վարիչ: 1989-1991 թթ. եղել է Հայաստանի կոոպերատիվների միության գործադիր տնօրեն, 1991 թ.՝ Հայաստանի ձեռնարկատերերի միության նախագահ:

1995-1999 թթ.՝ Ազգային ժողովի պատգամավոր (թիվ 49 ընտրատարածք): Ազգային ժողովի ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ: «Հանրապետություն» խմբակցության, ապա «Երկրապահ» պատգամավորական խմբի անդամ:

1999-2003 թթ.՝ Ազգային ժողովի պատգամավոր (համամասնական ընտրակարգ, «Միասնություն» դաշինք): Ազգային ժողովի ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ: «Միասնություն» խմբակցության անդամ:

2003-2007 թթ.՝ Ազգային ժողովի պատգամավոր (համամասնական ընտրակարգ, ՀՀԿ): Ազգային ժողովի ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ: ՀՀԿ խմբակցության անդամ:

2007-2012 թթ. Ազգային ժողովի պատգամավոր (համամասնական ընտրակարգ, ՀՀԿ): 2007-2012 թթ.՝ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ, 2008-2009 թթ.՝ 2008 թ. մարտի 1-2-ը Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի անդամ:

2011 թ. փետրվարի 25-ին ընտրվել է ԵԽԽՎ տնտեսական և զարգացման հարցերի հանձնաժողովի նախագահ:

2012 թ. մայիսի 6-ին Ազգային ժողովի պատգամավոր է ընտրվել համամասնական ընտրակարգով Հայաստանի հանրապետական կուսակցությունից:

2012 թ. մայիսի 31-ին ընտրվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի տեղակալ:

Ամուսնացած է:

- Ի՞նչ կրթություն ունի Հերմինե Նաղդալյանն ու ի՞նչ ճանապարհ է անցել մինչ պատգամավոր ընտրվելը:

- 1981-ին ավարտել եմ Երևանի Ժողովրդական տնտեսության ինստիտուտը տնտեսական գործունեության վերլուծություն և հաշվապահական հաշվառում մասնագիտության գծով: Այնուհետև ավարտել եմ ասպիրանտուրան: Գիտական աշխատանքս վերաբերում էր շուկայական կոմերցիոն աշխատանքին: Մասնագիտությամբ շուկայագետ եմ: Խորհրդային ժամանակաշրջանում երկար ժամանակ այս մասնագիտությունը չկար: Հետագայում անցել եմ աշխատանքի գիտահետազոտական ինստիտուտում: 80-ականների կեսերին Խորհրդային Միությունում սկսվեց կոոպերատիվ շարժումը, դա նշանակում էր ազատ մրցակցության հենքի վրա սեփական նախաձեռնությամբ ղեկավարվող տնտեսվարողների շարժում: Այն հանգեցրեց այսօրվա ձեռնարկատիրական կառույցների ստեղծմանն ու զարգացմանը: Որպես քաղաքացի՝ եղել եմ կոոպերատիվ շարժման ակունքներում:

- Շատերի կյանքում 88-ի շարժումը ճակատագրական եղավ: Ձեր կյանքում Արցախյան շարժումն ի՞նչ հետք թողեց:

- Անկախ պետականությունը, որ ծնվեց շարժման արդյունքում, կարծես մեր երեխան լինի և տարիքային իմաստով համընկավ իմ սերնդի մարդկանց այն տարիքի հետ, երբ առավել ստեղծագործող ես, արդյունավետ: Սա մի վերաբերմունք է, որ պետք է մշտապես ունենաս քո մեջ: Պետությունը քեզ համար ամենաթանկն է, ամենահարազատը, քո երեխայի պես:

- Մասնակցե՞լ եք հանրահավաքներին:

- Բնականաբար մասնակցել եմ: Երբ սկսվեց Ղարաբաղյան պատերազմը, անցա ռազմի նախապատրաստական և սպասարկման գործին: Ավելի քան երկու տարի զբաղվել եմ Գետաշեն, Մարտունաշեն գյուղերի ինքնապաշտպանական մարտերի գործերով և համարում եմ, որ Արցախյան ազատամարտը նաև իմ կենսագրության մեջ հիմնարար դեր ունեցավ:

- Պատերազմը շատերի կյանքն է փոխել: Ընկալումների և մտածելակերպի առումով Դուք պատերազմից հետո նո՞ւյնն էիք:

- Ես երկար եմ խորհել այս հարցի շուրջ: Համարում եմ, որ յուրաքանչյուր քաղաքացու համար պատերազմը կամ ազգային պայքարը պետք է լինի այն, որին մասնակցես, տրվես անմնացորդ, իսկ ավարտից հետո փակես

այդ էջն ու անցնես խաղաղ աշխատանքի: Թույլ չտաս, որ պատերազմը քո բնավորության և մտածելակերպի վրա ազդեցություն ունենա, որովհետև մեզանում շատ եղան մարդիկ, որոնք մնացին պատերազմում, չուզեցին, որ պատերազմից դուրս գան, կամ պատերազմն իրենցից դուրս գա: Պատերազմը դառն ու ծանր անհրաժեշտություն է, ես կուզենայի, որ իմ որդիները կյանքի բոլոր պահերին միշտ պատրաստ լինեին զենք վերցնելու և պաշտպանելու իրենց հայրենիքը: Ես դրա համար ամեն ինչ արել եմ, բայց կուզենայի, որ իրենց կյանքը դասավորեին պատերազմից դուրս:

- Ասում են՝ խաղաղության գինն ամենից շատ հասկանում ու գնահատում են այն մարդիկ, որոնք պատերազմի բովով անցել են, ընկեր են կորցրել, մահ տեսել:

- Շատ ճիշտ է, դրանք կորուստներ են, որոնք երբեք չեն սպիանում: Հատկապես մարտադաշտում կորցրած ընկերների կորուստը երբեք չի մոռացվում կամ լրացվում: Լավագույն բանաձևը Արցախյան պատերազմի ժամանակ տվել է Վազգեն Սարգսյանը. «Ես այս պատերազմին տվել եմ ինչ կարող էի և ձեռք եմ բերել անկախություն»: Երբեմն ինձ թվում է, որ ես էլ ինչ կարող էի տվել եմ և ձեռք եմ բերել հպարտություն:

- Պատերազմից հետո սկսվեց Ձեր քաղաքական գործունեության առավել բուռն շրջանը:

- Այդ ամենը շաղկապված է: Քանի որ երկիրը գնում էր ապակենտրոնացման ճանապարհով, օրենսդրական դաշտն էր փոխվում և օրենքներ էին ստեղծվում, ես՝ որպես հասարակական կազմակերպության ղեկավար, եկա այն գիտակցության, որ միայն հասարակական աշխատանքը քիչ է և պետք է ավելի արմատական ու հիմնարար մասնակցություն ունենալ քաղաքական գործընթացներում, հատկապես շուկայական դաշտի իմաստով օրենսդրական բաց ունենինք, և այն հարկավոր էր լրացնել ճիշտ օրենքներով, որոնք կնպաստեին ազատ տնտեսվարման զարգացմանը: Այդ տարիներին տրվեց լուծում՝ գնալ խորհրդարան և քաղաքական հարթակում ներկայացնել երկրի համար այդ կարևոր խավի խնդիրներն ու շահերը:
1994-ին առաջին անգամ առաջադրվեցի մեծամասնական ընտրակարգով, այդ տարի չընտրվեցի, որովհետև քվորում չեղավ: Ութ թեկնածուների մեջ ես ստացա երեք անգամ ավելի շատ ձայներ, քան մնացած յոթը միասին վերցրած: Շատ ծանր ժամանակներ էին, և մարդիկ չէին գալիս ընտրության, իսկ այն ժամանակվա ընտրական օրենսգրքի պահանջներից էր նաև քվորումի առկայությունը: Հենց այդ ժամանակ առաջին անգամ հասկացա, որ կարելի է հաղթել բոլորին, ժողովրդին հաղթել չես կարող:

1995-ին առաջադրվեցի մեծամասնական ընտրակարգով, ծանր ընտրություն էր: Այդ ընտրատարածքում էլ 19 տղամարդ թեկնածուներ կային, ես այդ ընտրատարածքի անունը դրել էի «19+1»: Պայքարն աչքի էր ընկնում նրանով, որ տղամարդիկ համախմբված պայքարում էին ոչ թե իրենց համար, այլ իմ դեմ: Սա մեր ընտրապայքարի և մեր տղամարդկանց հետաքրքրական մտածելակերպի դրսևորումներից է, չեն կարողանում պարտվել կնոջը: Իմիջիայլոց, հետագայում, երբ ԵԽԽՎ-ում առաջադրված էի տնտեսական հանձնաժողովի նախագահի թեկնածու և պայքարում էի մի իտալացի խորհրդարանականի հետ ու հաղթեցի, նա նույնպես ծանր էր տանում հատկապես այն հանգամանքը, որ հաղթողը կին է:

- Փաստորեն, այդ խտրական մտածելակերպին առաջին անգամ հանդիպել եք 1995-ին, բայց մինչև օրս այն առկա է, ոչ միայն Հայաստանում, այլև Եվրոպայում:

- Այո, շատ ճիշտ նկատեցիք: 1995-ին, երբ եկա խորհրդարան, փորձեցի առաջին հերթին տնտեսական քաղաքականություն իրականացնել: Այդ տարիներին սկսեց ձևավորվել «փոքր և միջին բիզնես» հասկացությունը: Այդ ամենը շատ դժվար էր առաջ գնում, և մեծ ջանքեր էին անհրաժեշտ պետական, քաղաքական ու տնտեսական գործիչներին ապացուցելու համար, որ կան բազմաթիվ քաղաքական, տնտեսական, սոցիալական և այլ փաստարկներ, որոնցից ելնելով՝ պետությունը պետք է հատուկ աջակցություն և պայմաններ ստեղծի փոքր տնտեսվարողների համար, հատկապես՝ միջին խավի:

- Ուրեմն քաղաքականություն մտնելու առաջին նպատակը տնտեսական խնդիրները վեր հանելն էր:

- Այո, այդ տարիներին դա իմ գլխավոր առաքելությունն էր, բայց այդ երեք տարվա ընթացքում հասկացա, որ մենակ կարող ես դրոշ լինել, բայց հաջողության հասնելու, կյանքի պայմաններ փոխելու, օրենքներ ստեղծելու համար պետք է թիմ ունենաս, ուժեղ թիկունք:

- Եվ ա՞յդ ժամանակ սկսվեց ՀՀԿ-ի հետ սերտ համագործակցությունը:

- Այո, ես հասկացա, որ կազմակերպված ուժի ներկայացուցիչ լինելով՝ կարող եմ հասնել որոշակի արդյունքի: Սկսեցի փնտրել համախոհների, մարդկանց, ովքեր կընդունեն իմ գաղափարները, և այդ գիտակցությունն ինձ տարավ Հանրապետական կուսակցություն: Ճանաչում էի շատերին ՀՀԿ-ից, բայց ինձ համար կարևոր էր Անդրանիկ Մարգարյանի դերակատարությունը: Աշոտ Նավասարդյանին նույնպես ճանաչում էի, սակայն ավելի

դիպվածային, իսկ Մարգարյանի հետ շփումներն ու համագործակցությունը շատ էին հատկապես պատերազմի շրջանում, և հենց այդ արժեհամակարգն ու գաղափարախոսությունն ինձ բերեց Հանրապետական կուսակցություն:

- Հանրապետականը պահպանողական կուսակցություն է, ինչպե՞ս ընդունվեց Ձեր մուտքը կուսակցություն:

- Այո, այդպես է: Այդ պահպանողականությունը, ընդհանուր առմամբ, նաև գենդերային է: Դրա մեջ օբյեկտիվ պատճառներ էլ կային, բայց ժամանակը թելադրում է իրենը, ժամանակի շունչը չես կարող չզգալ, իսկ Հանրապետականի դեպքում դա ցցուն երևում է, քանի որ մեծ դեր ստանձնած կուսակցություն է: Հանրապետականը զգաց, որ ժամանակին համահունչ պետք է լինի: Այդ գործընթացում մեծ դեր ունեցան նաև կուսակցական կանայք, որոնք ակտիվ էին և դիրքորոշում ունեին, ընդհատակի տարիների, ապա պատերազմի ժամանակ իրենց ազդեցությունն են ունեցել տղամարդկաց վրա: Իսկ խաղաղ ժամանակաշրջանում արդեն նրանք մեծ դերակատարություն ունեցան կուսակցական կյանքում:

- Այո, սակայն կուսակցական ժողովներում արհեստական խոչընդոտներ չէ՞ին ստեղծվում կնոջը կոտրելու համար:

- Գիտեք, մեր կուսակցությունները մինչ օրս մնացել են այսպես ասած «мужские клубы»: Շատ կուսակցություններում կա այդ խտրականությունը, և կինը պետք է շատ պատրաստված, ակտիվ, խելացի լինի, որ կարողանա դիմակայել, տղամարդկային շրջապատում իր դիրքը ապահովել և կեցվածք պահել: Ե՛վ կանացիությունդ պահես, և՛ կարողանաս խնդիրներ բարձրացնել: Բայց ես կարծում եմ՝ այն կանայք, որոնք մտել են քաղաքականություն, հասկանում են, որ պետք է ուժեղ լինեն և կռվանները մաքսիմալ օգտագործեն: Ես եկել եմ այն եզրակացության, որ որքան կանայք լուրջ բաներ են ասում, այնքան մեզ ավելի լուրջ են վերաբերվում: Ինչքան էլ տղամարդկային շրջապատը թելադրում է իրենը, եթե պատրաստված ես, կամային անձնավորություն ես և աշխատում ես, քեզ չեն կարող լուրջ չընդունել:

- Դուք ՀՀԿ կանանց խորհրդի նախագահն եք: Մե՞ծ է խորհրդի կազմը, և ի՞նչ գործունեություն եք իրականացնում:

- ՀՀԿ շարքերում 80 հազար կին կա, և նրանք ներկայացնում են բոլոր ոլորտները: Կանանց դերակատարությունը մեծ է և գնալով ավելի է մեծանում: Կանանց խորհուրդը՝ որպես քաղաքական կազմակերպության խորհուրդ, իր առջև նպատակ է դրել տարածել կուսակցության գաղափարախոսությունն

ու զբաղվել կազմակերպչական աշխատանքով: Գաղտնիք չէ, որ բուրգի ներքևի մասում ներգրավվածությունը 50/50 է, հետո որքան բարձրանում է, այնքան կանայք տեղը զիջում են: Տարածքային կազմակերպությունների խորհուրդների ղեկավարների մեջ ընդամենը երկու կին կա: Սակայն պետք է նշեմ, որ վերջին տարիներին ներկուսակցական ժողովրդավարությունն աճել է, և կանանց ներկայացվածությունը ղեկավար օղակներում մեծացել է: Եթե նախկինում կուսակցության խորհրդի կազմում կին չի եղել, այսօր կա: Այսօր գործադիր մարմնում երկու կին կա: Կարևոր եմ համարում նաև այն փաստը, որ այսօր խորհրդարանում կանայք առավելագույնը ներգրավված են ՀՀԿ-ից, ունենք նաև կին համայնքի ղեկավարներ:

- Տիկի՛ն Նաղդալյան, Ձեզ չեմ հարցնի կուսակցության աջակցության կամ գնահատանքի մասին, որովհետև փաստերն արդեն խոսուն են՝ ԱԺ փոխնախագահ, ՀՀԿ կանանց խորհրդի նախագահ: Հետաքրքրական է, որ Ձեզ սիրում ու հարգում են նաև Եվրոպայում:

- Քաղաքական հարթակում եթե աշխատասեր ես, նվիրված և ունես գիտելիքներ, կարող ես հասնել հաջողության: Իմ երիտասարդ գործընկերուհիներին միշտ ասում եմ՝ աշխատիր և անպայման կգնահատվես:

- Դուք Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի պատվավոր անդամ եք:

- Այո: Դա կապված է այն հանգամանքի հետ, որ ԵԽԽՎ կանոնակարգով10-ամյա աշխատանքային ստաժ ունեցող և բարձր պաշտոն զբաղեցրած ու ակտիվ գործունեություն իրականացրած պատվիրակներին նման տիտղոս է տալիս: Պատվավոր անդամն իրավունք ունի ցանկացած ժամանակ մուտք գործել ԵԽ շենք, ելույթ ունենալ և հարցեր բարձրացնել: Ինձ համար դա կարևոր է այն իմաստով, որ սակավաթիվ մարդիկ են նման կոչման արժանացել: Փոքրիկ երկիր, հետխորհրդային տարածք, հայ, կին, խիստ մրցակցություն ու պայքար և նման կոչում, ինչի համար շատ ուրախ եմ: 84 պատվիրակների քվեարկության արդյունքում նախ ընտրվեցի տնտեսական հանձնաժողովի նախագահ, և անցած տարիների իմ աշխատանքը հանգեցրեց նրան, որ երբ դաղարեցրի գործունեությունս, որոշում կայացվեց ԵԽԽՎ պատվավոր անդամի կոչում տալ ու պարգևատրել համապատասխան մեդալով:

- Քաղաքականությունից, տնտեսությունից, ՀՀԿ-ից, ԵԽԽՎ-ից ու ՀՀԿ կանանց խորհրդից դուրս ինչպիսի՞ն է Հերմինե Նաղդալյանը:

- Աշխատանքից դուրս ընտանիքի մայր եմ, ունեմ դժվարահաճ ու պահանջկոտ ամուսին, մեծ ընտանիք ունեմ՝ 5 երեխա: Ընտանիքում ուշադրությունն ու աջակցությունը փոխադարձ գործընթաց է, որքան տալիս ես, կրկնակի կամ եռակի ստանում ես: Փոքրիկ ծաղկանոց ունեմ, որ ինքս եմ խնամում. ինքս հագնում եմ ձեռնոցները, վերցնում մկրատն ու խնամում, կտրում, ջրում: Հանգստություն ու թեթևություն եմ զգում իմ ծաղկանոցում: Սիրում եմ գրականություն, թեև գնալով կարդալու ավելի քիչ ժամանակ եմ ունենում, սիրում եմ երաժշտություն: Հաճախ թխվածք եմ պատրաստում երեխաներիս համար:

- Ի՞նչ խորհուրդ կտաք այն կանանց, որոնք նոր եմ մտնում քաղաքական դաշտ:

- Աշխատանք, գիտելիք և կամք: Վստահ եմ, որ եթե այս երեքով օժտված ես, անպայման կհասնես հաջողության: Որքան էլ կարիերայի կամ քաղաքականության մեջ հասնես հաջողության, կնոջ համար շատ կարևոր է նաև ընտանիք ունենալը, որն ամենամեծ հարստությունն է: Ցանկացած ոլորտում հաջողության հասնելու համար գլխավոր հենարանն ընտանիքն է, և գլխավոր աջակիցը ամուսինն ու երեխաներն են:

Էլինար Վարդանյան

«Կինը պետք է կարողանա իրեն դրսևորել այնպես, որ քաղաքականությունը մաքրվի իր շնորհիվ»

Ծնվել է 1978 թ. նոյեմբերի 18-ին Երևանում:

2000 թ. ավարտել է Երևանի դատական փորձաքննությունների ինստիտուտը: 2008 թ.՝ ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտուրան: Իրավագետ-փորձագետ:

2000-2002 թթ. դասավանդել է Երևանի դատական փորձաքննությունների ինստիտուտում, 2005-2007 թթ.՝ Հյուսիսային համալսարանում: 2002-2008 թթ. աշխատել է Հասարակական երկխոսության և զարգացումների կենտրոնի գործադիր տնօրեն, 2005-2009 թթ.՝ «Էլեկտրաապարատ» ԲԲԸ իրավախորհրդատու, 2008-2012 թթ.՝ «Առաջին հիփոթեքային ընկերություն» ունիվերսալ վարկային կազմակերպության իրավախորհրդատու: 2009-2012 թթ. եղել է «Միջազգային խորհրդատվական խումբ» ՓԲԸ տնօրեն: 2008-2012 թթ.՝ «Գագիկ Ծառուկյան» բարեգործական հիմնադրամի «Հեռանկար» ծրագրի համակարգող:

2001 թ. ՀՀ փաստաբանների պալատի անդամ է, փաստաբան:

Գիտական մի շարք աշխատությունների հեղինակ է:

2012 թ. մայիսի 6-ին Ազգային ժողովի պատգամավոր է ընտրվել համամասնական ընտրակարգով «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունից:

ՀՀ ԱԺ Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահն է:

Ամուսնացած է, ունի երկու զավակ:

- Ինչպե՞ս հասարակական գործունեության դաշտից տեղափոխվեցիք քաղաքական ոլորտ:

- Դա եղավ շատ սահուն, բնականոն: Այնպես չէ, որ մի ոլորտը մյուսից խիստ առանձնացված է, և անցումը մի ոլորտից մյուսը՝ տարօրինակ: Հասարակական գործունեությամբ զբաղվելիս շատ առնչություններ կային օրենքների, իշխանության հետ: Բնականաբար, որպես հասարակական կազմակերպության ղեկավար, գործ եմ ունեցել և՛ իշխանության ներկայացուցիչների, և՛ օրենսդրական ակտերի հետ, և՛ օրենքների

քննարկումների եմ մասնակցել: Կապը հասարակական և քաղաքական դաշտերի միջև սերտ է: Որքան էլ հասարակական կազմակերպությունները քաղաքականացված չլինեն, միևնույն է, կապն ամուր է:

- Իսկ տանն ինչպե՞ս են վերաբերվում Ձեր քաղաքականությամբ զբաղվելուն:

- Ամուսինս մի քիչ վերապահորեն էր վերաբերվում՝ փոքր երեխաներ ունես, և այլն: Բայց անկեղծ զրույցից հետո եկանք այն եզրակացության, որ մեկը մյուսին չպետք է խանգարի: Մեր կուսակցությունը շատ ճկուն է, բացի այդ, կինն ունակ է մի շարք գործեր համատեղելու և առաջնահերթություններն ի մի բերելու: Այսինքն՝ հասկանալով, որ մեկը մյուսին չի խանգարելու, համարձակ քայլ կատարեցի:

Ես միշտ ասում եմ, որ սովորաբար կանանց ուժ են տալիս ամուսինները, եթե մանավանդ ուժեղ ամուսին են: Իսկ եթե ամուսինն այնքան ուժեղ է, որ հասկանում է իր կնոջը, ապա վստահ է, որ կինը սկսած գործը հաջողությամբ կիրականացնի:

- Նախորդ ընտրություններում որևէ մասնակցություն ունեցե՞լ եք:

- Մեր հասարակական կազմակերպությունը դիտորդական առաքելություն էր իրականացնում: Հիմնականը, ինչ սովորեցի այդ ժամանակ, այն էր, որ եթե տեսնում ես ինչ-որ խախտում, պետք է վախը, կաշկանդվածությունը մի կողմ դնես: Եթե ուզում ենք, որ ընտրությունները լինեն արդար և թափանցիկ, պետք է կարողանանք պայքարել դրա համար: Երբեմն նույնիսկ աղմկելով այդ մասին:

- Ձեր կարծիքով՝ կանանց նկատմամբ խտրականություն կա՞ Հայաստանում:

- Ինքս իմ նկատմամբ երբևէ չեմ զգացել, և շրջապատումս էլ չկա մի կին, որն ակնհայտորեն խտրականության է ենթարկվում: Անկեղծ եմ ասում: Եվ օրենսդրական առումով խտրականությունը՝ որպես այդպիսին, տեսանելի չէ, այսինքն՝ օրենքները հավասար իրավունքներ են տալիս և՛ կանանց, և՛ տղամարդկանց: Մեր կուսակցությունում էլ խտրականություն չեմ նկատել, անձը գնահատվում է իր կատարած աշխատանքով, իր գաղափարներով և ծրագրերով: Բայց մի ուրիշ բան էլ պիտի անպայման շեշտեմ՝ կնոջ մտածելակերպը, և դա ես համարում եմ կանանց քաղաքական մասնակցության ամենալուրջ խոչընդոտը: Մեր հասարակությունում կինը,

այսպես ասեմ՝ կանանց մի խումբ դեռևս պատրաստ չէ օգտվելու հավասար իրավունքներից: Կնոջը փոքր տարիքից դաստիարակում են, որ նա պետք է լինի հնազանդ, պետք է լինի հեզ, ընտանիքի մայր, հարմարվող և այլն, և մենք հանկարծ այդ կնոջից պահանջում ենք, որ վստահի իր ուժերին կամ ավելի ակտիվ լինի: Ես կարծում եմ, որ պետք է առաջին հերթին կնոջ մտածելակերպը փոխել, հետո արդեն՝ հետևանքները:

- Կանանց քաղաքական մասնակցության ի՞նչ խոչընդոտ կարող եք նշել:

- Մեզանում կան կարծրատիպեր, նաև տղամարդկանց մեջ, որոնք պետք է հաղթահարվեն դաստիարակության միջոցով, սկսած մանուկ հասակից: Ես միշտ մտածում էի, որ մեր երիտասարդներն ավելի առաջադեմ են, ավելի կիրթ, աչքաբաց: Բայց առանձին դեպքերում համոզվում ես, որ բոլորովին ուրիշ ոլորտներում են առաջադեմ ու աչքաբաց: Իսկ երբ հարցը հասնում է կնոջը ու հատկապես՝ իրենց տիկնոջը, պահպանողական են, նաև ելնում են «բա ինչ կասեն» մոտեցումից, որը մեզ շատ է խանգարում: Իհարկե, նախորդ տարիների համեմատ՝ մի փոքր առաջընթաց, որոշ տեղաշարժ նկատվում է, բայց միևնույն է, փոխելու շատ բան կա: Նախ՝ կինը պետք է իմանա իր իրավունքները, որ կարողանա դրանք պաշտպանել: Այդ դեպքում տղամարդիկ էլ տեղ կտան: Այնպես չէ, որ մենք ունենք հավասար դաշտ ու միասին ձևավորվելով՝ պետք է առաջ գնանք: Արդեն կան ձևավորված որոշակի տեսակետներ, արդեն կան կարծրատիպեր, ու չպետք է մտածել, թե տղամարդիկ այդ հավասարության համար կպայքարեն: Կարծրատիպեր փոխելը դժվար է:

Ուզում եմ շեշտել, որ քաղաքականության մեջ կնոջ դերը և՛ բարձր է, և՛ կարևոր, որովհետև կինը շատ ավելի հանդուրժողական է, շատ ավելի ճկուն մտածելակերպ ունի և առանձին հարցեր լուծելիս շատ արագ կարող է կողմնորոշվել: Իհարկե, դա չի նշանակում, որ առաջնությունը պետք է տրվի կնոջը: Այս դեպքում պետք է նրան դիտել որպես քաղաքագետի, ոչ թե որպես կնոջ կամ տղամարդու:

- Ձեր կարծիքով, եթե քվոտաները չլինեին, այսքան կին կլինե՞ր ցուցակներում:

- Մեր ցուցակում կարծում եմ՝ այո: Որովհետև ցուցակում ընդգրկվել են իրենց աշխատանքով աչքի ընկած մարդիկ: Բայց ընդհանուր առմամբ համամասնական ցուցակներում քվոտաների ապահովման պահանջը դրական նշանակություն ունեցավ: Կարծրատիպերի առկայության դեպքում

քվոտաները պարտադիր էին, և երևի առաջիկայում անհրաժեշտ կլինի ավելացնել դրանք՝ ելնելով ապագա Ազգային ժողովի կազմից և որակից:

- Ձեր կարծիքով՝ կանայք քաղաքականության մեջ պե՞տք է ունենան որոշակի ոճ՝ տարբեր տղամարդկանց ոճից:

- Այո, կինը պետք է ունենա իր ոճը: Տեսակետ կա, թե քաղաքականությունը մարդուն փչացնում է: Կինը պետք է կարողանա իրեն դրսևորել այնպես, որ քաղաքականությունը մաքրվի իր շնորհիվ: Որովհետև, երբ տեսնում ես, որ դիմացինդ հանդուրժող է, ավելորդություններ, անձնական վիրավորանքներ թույլ չի տալիս իրեն, որոնք, ցավոք, լինում են ԱԺ-ում, ինքդ, բնականաբար, ավելի զուսպ ես դառնում: Ու այս անգամ հուսանք, որ Ազգային ժողովում ավելի շատ կանայք կլինեն. դա է ճիշտ խորհրդարանի համար: Որոշ առումով քանակը կարող է նաև որակ տալ: Որովհետև, որքան էլ մեր նախորդ գումարման Ազգային ժողովի կանայք կիրթ էին ու հանդուրժող, քանակական առումով քիչ էին. 131 պատգամավորից 8-ը չեն կարողանա շատ բան փոխել:

- Կարծում եք՝ Ձեր մայր լինելն անդրադառնո՞ւմ է Ձեզ վրա՝ որպես քաղաքական գործչի:

- Իհարկե, որովհետև շատ ես փոխվում: Չէի պատկերացնում, որ մայր լինելուց հետո բոլորովին այլ կերպ ես մտածում: Ես շատ ավելի հոգատար եմ դարձել նաև անծանոթ մարդկանց նկատմամբ: Եթե նախկինում ինձ որոշ բաներ կարող էին չանհանգստացնել, հիմա բոլորին ընդունում եմ որպես հարազատի ու մտածում եմ, որ միգուցե իմ երեխաների նկատմամբ մեկ ուրիշն այդպիսին կլինի: Փաստորեն, մայր լինելը հանգեցրեց նրան, որ ուզում ես ազգին մայրություն անել: Ինչպես ծնողները պարտականություն ունեն իրենց երեխաների նկատմամբ, այդպես էլ պետությունը պարտականություն ունի իր քաղաքացիների նկատմամբ, հետևաբար պետք է հասկանալ, որ պետությունը, պետական մարմինները պատասխանատու են քաղաքացիների առջև: Իմ կարծիքով՝ դա պետք է ոչ թե ակնկալել, այլ պարտադրել, պահանջել:

Մարգարիտ Եսայան

«Իմ կյանքում եկավ մի պահ, երբ որոշեցի ոչ թե վազել նորությունների հետևից, այլ մասնակցել դրանց ստեղծմանը»

Ծնվել է 1958 թ. հոկտեմբերի 24-ին Երևանում:

1982 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Հայոց լեզվի և գրականության մասնագետ:

Մասնակցել է ԱՄՆ կառավարության «Միջազգային այցելու» ծրագրի շրջանակներում անցկացված «Լրատվամիջոցների դերն ընտրական գործընթացներում» դասընթացին (2002 թ.):

1983-1996 թթ. եղել է «Պիոներ կանչ» (հետագայում՝ «Կանչ») մանկապատանեկան թերթի լրագրող, ապա՝ դպրոցական բաժնի խմբագիր: 1996-2012 թթ. աշխատել է որպես «Առավոտ» օրաթերթի քաղաքական լրագրող-մեկնաբան: 1999-2001 թթ. համագործակցել է «Ազատություն» ռադիոկայանի հետ: 2011 թ. դասավանդում է Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում:

2003 թ. արժանացել է ՀՀ սոցիալական ապահովության նախարարության շնորհակալագրի, 2008 թ.՝ «Տարվա լրագրող» կոչման («Դե ֆակտո» ամսագիր) 2010 թ.՝ ԵՄ «ՏԻ ռեպորտաժ» ծրագրի շնորհակալագրի, 2011 թ.՝ Երևանի մամուլի ակումբի «Լրագրողական հետաքննություն» մրցանակի՝ «Տիեզերական» գիրքը կազմելու և խմբագրելու համար: 2012 թ. պարգևատրվել է ՀՀ ՊՆ «Հայոց բանակի 20-ամյակ» հուշամեդալով:

2012 թ. մայիսի 6-ին Ազգային ժողովի պատգամավոր է ընտրվել համամասնական ընտրակարգով Հայաստանի Հանրապետական կուսակցությունից:

ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալն է:

Ամուսնացած է, ունի երեք զավակ:

- Ինչպիսի՞ն էր Ձեր մուտքը քաղաքականություն, ո՞րն էր քաղաքականությամբ զբաղվելու Ձեր շարժառիթը:

- Լրագրողները գիտեն ամեն ինչ կամ գրեթե ամեն ինչ, ճանաչում եմ բոլորին կամ գրեթե բոլորին, գիտեն քաղաքական գործիչների ուժեղ և թույլ կողմերը, գիտեն, թե ինչպես և որտեղ են կայացվում որոշումները: Լրագրողները շատ

բան գիտեն, և նաև լրագրողների շնորհիվ է կայանում քաղաքական դաշտը: Իհարկե, խոսքը իրական պրոֆեսիոնալ լրագրողների մասին է:

Ամբողջ աշխարհում կա այս միտումը, երբ երկարամյա լրագրողները որոշում են նորություններ լուսաբանողից, նորություններ հայթայթողից դառնալ այդ նորությունների ստեղծողը: Ես լրագրող եմ աշխատում արդեն շատ երկար, և իմ կյանքում եկավ մի պահ, երբ որոշեցի ոչ թե վազել նորությունների հետևից, այլ մասնակցել դրանց ստեղծմանը, քաղաքականություն լուսաբանողից դառնալ այդ քաղաքականության մասնակիցը, ինչո՞ւ ոչ, նաև ստեղծողներից մեկը: Եվ պարզապես ուրախ եմ, որ ինձ տրվեց այդ հնարավորությունը:

- Որքանո՞վ են աջակցում Ձեր շրջապատը, հարազատները Ձեր քաղաքական գործունեությանը:

- Մարդն առանց իր շրջապատի քիչ բան կարող է անել, մարդուն միշտ և բոլոր իրավիճակներում անհրաժեշտ է իր հարազատների, իր շրջապատի աջակցությունը: Իմ որոշումը շատ դրական ընդունելության արժանացավ ոչ միայն գործընկերներիս, այլև ինձ ճանաչող քաղաքական գործիչների կողմից: Եվ ամենից կարևորը՝ իմ ընտանիքի կողմից: Եթե չլիներ այդ աջակցությունը, ես դժվար թե գնայի այս արմատական փոփոխությանն իմ կյանքում:

- Ի՞նչ եք կարծում, Հայաստանում կանանց նկատմամբ խտրականության կա՞, Ձեր նկատմամբ դա երբևէ զգացե՞լ եք:

- Ինքս միշտ ակտիվ եմ եղել և իմ սեռային պատկանելությունը երբեք չեմ փորձել ընդգծել, ինքնուրույն եմ իմ բոլոր ձեռնարկներում, և երբևէ մտքովս չի անցել ներկայանալ որպես, այսպես կոչված, թույլ սեռի ներկայացուցիչ, քանի որ համոզված եմ՝ կինը ուժեղ տեսակ է, հաճախ շատ ավելի ուժեղ որոշ տղամարդկանցից: Իսկ խտրականություն, այնպիսին, ինչպիսին երբեմն տեսնում ենք աշխարհի որոշ ոչ առաջադեմ երկներում, մեզանում չկա, չի էլ կարող լինել (իհարկե, որոշ տհաճ բացառություններ կան), քանի որ հայ կնոջ տեսակը միշտ է եղել մարտնչող, կազմակերպող, համախմբող: Անգամ հայտնի արտահայտությունը՝ փափկասուն տիկնայք հայոց աշխարհի, մասամբ է ճիշտ: Հայ կինը միշտ էլ զենքը ձեռքին պայքարել է տղամարդկանց կողքին իր օջախի պահպանության և հայրենիքի ազատագրման համար:

- Հայաստանում կա՞ն կանանց քաղաքական մասնակցության խոչընդոտներ:

- Կարծում եմ՝ ոչ, պարզապես կանայք շատ ավելի զբաղված են իրենց մասնագիտական և ընտանեկան գործերով և քիչ ժամանակ են գտնում ամբողջովին ընկղմվելու քաղաքական թոհուբոհի մեջ:

- Ձեր կարծիքով՝ կանայք պե՞տք է իրենց ոճն ունենան քաղաքականության մեջ, տարբերվո՞ւմ է այն տղամարդկանց ոճից:

- Կանայք սովորաբար ավելի իմպուլսիվ են, տղամարդիկ՝ ավելի «ծանրաշարժ», դա երևում է նաև քաղաքականության մեջ: Համոզված եմ՝ նկատել եք, որ կանայք շատ ավելի բարձր են խոսում, երբ փորձում են ելույթ ունենալ, շատ ավելի ակտիվ շարժուձևով, երբ որևէ միջադեպ է տեղի ունենում հասարակական-քաղաքացիական միջոցառումների ժամանակ, կանանց ձայնը շատ ավելի բարձր է հնչում, և հիմնական իրարանցումը հենց կանայք են ստեղծում: Գուցե սա բնական է:

Իսկ կինը, այո, պետք է իր ոճն ունենա, կինն ունի մի կարևոր հատկանիշ, որը չունեն աշխարհի բոլոր տղամարդիկ միասին վերցրած. կինը զգում է այն, ինչը դեռ չկա, բայց կարող է լինել, քանի որ կինը կյանք է ծնում: Ուստի կանացի ոճը տղամարդկանց պետք է դաստիարակի և զգաստացնի:

- Ի՞նչ կցանկանայիք փոխել քաղաքականության մեջ:

- Որոշ դեմքեր, որոշ կարծրատիպեր. մեր հասարակությունը սարսափելի հոգնել է նույն դեմքերից թե՛ իշխանության մեջ և թե՛ ընդդիմության: Թարմություն չկա, նորությունները քիչ են, քաղաքական մշակույթը նոր որակների կարիք ունի, նոր խոսքի, նոր ճաշակի:

- Ի՞նչ պլաններով եք մտնում խորհրդարան, ո՞ր բնագավառում կարող եք դրսևորվել լավագույնս:

- Պատգամավորը պարտավոր է զբաղվել օրենսդրական գործունեությամբ, դա է պատգամավորի անելիքը: Մյուս կողմից, դառնալով հրապարակային, պատգամավորը պետք է իր խոսքը ներկայացնի հասարակությանը և լինի մարդկանց կողքին:

Ցավոք, մեզանում որոշ բաներ աղավաղված են, և մարդիկ մտածում են, թե պատգամավորը աշխատատեղ ստեղծող է: Ես հասկանում եմ՝ դա լավ օրից չէ, և հավատում եմ, որ շատ շուտով ամեն մեկը կզբաղվի իր գործով, և

կլուծվեն բոլոր խնդիրները, որոնք այսօր հուզում են մեր հասարակությանը: Ինքս ինձ ավելի շատ պատկերացնում եմ մարդու իրավունքների դաշտում:

- Ձեր վերաբերմունքը գենդերային քվոտաներին. ընտրական օրենսգրքում համամասնական ընտրակարգով գենդերային քվոտայի բարձրացումը 15 տոկոսից մինչև 20 տոկոս արդյունք տվե՞ց:

- Իհարկե, և դա առաջին հերթին երևաց Հանրապետական կուսակցության համամասնական ցուցակում, Հանրապետականն այսօր կանանց ամենամեծ թիվն ունի խորհրդարանում, նախկին երկու կնոջ փոխարեն՝ ինը կին: Կարծում եմ՝ հետագայում այս թիվն ավելի կմեծանա:

- Ինչպիսի՞ն էր ՁԼՄ-ների վերաբերմունքը կին թեկնածուների նկատմամբ:

- Կարծում եմ՝ լավ, բոլոր լրատվամիջոցներն էլ իրենց զուսպ պահեցին, հատկապես՝ կին թեկնածուների նկատմամբ, չհաշված որոշ կոպիտ դրսևորումներ:

Կարինե Աճեմյան

«Եթե մտել ես քաղաքականություն, ապա պետք է հասկանաս, որ դու շղթայի մի մասնիկն ես»

Ծնվել է 1962 թ. Երևանում:

Ավարտել է Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի դաշնամուրի բաժինը: 1984-1988 թթ. սովորել է Երևանի պետական գեղարվեստա-թատերական ինստիտուտի Հր. Ղափլանյանի դերասանական կուրսում: Սովորել է Հայ-բրիտանական բիզնես դպրոցում, ստացել գործարար-մենեջերի որակավորում:

Աշխատել է Երևանի Ստ. Զորաշյանի անվան թիվ 8 երաժշտական դպրոցում՝ որպես դաշնամուրի դասատու և կոնցերտմայստեր, 1988 թ.՝ մշակույթի նախարարության գիտամեթոդական կենտրոնում որպես ռեժիսոր, ավագ գիտաշխատող, 1992 թ.՝ հեռուստատեսության դրամատիկական հաղորդումների գլխավոր խմբագրությունում որպես ռեժիսոր: 1994-1996 թթ. եղել է «Մետրո» թատրոնի տնօրեն, Շախմատի համահայկական բարեգործական «Նավակ» հիմնադրամի «Նավակ-1» Դ/Ձ-ի տնօրեն: 1998 թ. աշխատել է Հայխնայբանկում, սկզբում՝ որպես գլխավոր տնօրենի խորհրդական, այնուհետև՝ աշխատակազմի և քարտուղարության ղեկավար: 2000 թ. եղել է Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի տնօրենի խորհրդականը: 2002 թ. աշխատել է GTMC ՓԲԸ-ում որպես ֆինանսական բաժնի պետ, 2004-2005 թթ.՝ «Քանաքեռ» ՓԲԸ-ի տնօրենի գլխավոր խորհրդական: 2005-2009 թթ. աշխատել է «Արվեստ» հիմնադրամում որպես գլխավոր տնօրեն, 2008 թ.՝ մշակույթի նախարարի խորհրդական, 2009 թ.՝ «Խորեոգրաֆիայի պետական թատրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն:

2009-2012 թթ.՝ Ազգային ժողովի պատգամավոր (համամասնական ընտրակարգ, ՀՀԿ): 2012 թ. մայիսի 6-ին Ազգային ժողովի պատգամավոր է ընտրվել համամասնական ընտրակարգով Հայաստանի Հանրապետական կուսակցությունից:

Կարինե Աճեմյանը 2005-ից Հայաստանի Հանրապետական կուսակցության կանանց խորհրդի անդամ է, մշակույթի հանձնախմբի ղեկավար:

Ամուսնացած է, ունի մեկ զավակ:

- Ո՞վ էր Կարինե Աճեմյանը մինչ պատգամավոր դառնալը:

- Միանգամից երկու դպրոց եմ ավարտել՝ անգլիական թեքումով և Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցը: Առաջին մասնագիտությամբ դաշնակահարուհի եմ, ավարտել եմ Ռոմանոս Մելիքյանի անվան ուսումնարանի դաշնամուրի ֆակուլտետը: Ավարտելուց հետո երեք տարի դաշնամուր եմ դասավանդել Ջրբաշյանի անվան երաժշտական դպրոցում, եղել եմ կոնցերտմայստեր: Հետո որոշեցի ընդունվել թատերական ինստիտուտ: Երբեք չեմ երազել դերասանուհի դառնալու մասին, ուզում էի դառնալ թատերագետ, սակայն թատերագիտության ֆակուլտետի բացումը ձգձգվում էր, և ես Հրաչյա Ղափլանյանի խորհրդով ընդունվեցի դերասանության ֆակուլտետ: Նա ասաց, որ կարող եմ շատ լավ դերասանուհի դառնալ: Ընդունվեցի և հիմա սիրով ու հաճույքով եմ հիշում այդ տարիները: Ինձ համար շատ կարևոր էին այդ տարիները, որովհետև հանդիպեցի ամուսնուս, մենք սիրահարվեցինք ու ամուսնացանք:

- Բեմում խաղացե՞լ եք:

- Որոշ դերեր խաղացել եմ ուսանողական տարիներին ու շատ քիչ՝ Դրամատիկական թատրոնում, սակայն շատ լավ հասկանում էի, որ դա իմը չէ, իմ մեջ ցանկություն չկար, թեպետ շատերն էին դրական կարծիք հայտնում իմ խաղի մասին: Այդպես էլ դերասանուհի չդարձա: Բացի այդ, ես համարում էի, որ այդ ասպարեզում ամուսինս ավելի տաղանդավոր է, ավելի շատ ապրում էի նրա հաջողություններով: Քանի որ դեռ մանկուց ունեցել եմ կազմակերպչական ջիղ, որոշ ժամանակ անց դարձա թատրոնի տնօրեն և գլխավորեցի «Մետրո» թատրոնը: Բնավորությամբ անհանգիստ եմ և չեմ սիրում միօրինակություն, ուստի տարբեր կազմակերպություններում եմ աշխատել, ինձ փորձել եմ տարբեր ոլորտներում ու հաջողությամբ եմ աշխատել: Աշխատել եմ բանկում որպես աշխատակազմի ղեկավար: Տարիների փորձն ինձ օգնեց քաղաքականություն մտնելու և մնալու:

- Ինչպիսի՞ն էր Ձեր մուտքը քաղաքական դաշտ:

- Այնպիսի ընտանիքում եմ մեծացել, որտեղ միշտ քննարկվել են հասարակական-քաղաքական խնդիրները: Մայրս անգլերենի դասախոս էր, հայրս՝ պաշտոնյա և կուսակցական: Ես էլ երիտասարդ տարիքից հետաքրքրվել եմ, թե ինչ է կատարվում իմ շուրջը, ինչպիսին է երկրի վիճակը: Բուռն իրադարձություններ տեղի ունեցան մեր երկրում, մենք էլ դրա մի մասն էինք ու ապրել ենք այդ ամենը: Եվ 2005 թվականին, երբ Հանրապետական կուսակցությունն առաջարկեց ընդգրկվել իր կազմում, թեպետ զգում էի, որ

պատրաստ եմ, շատ մեծ պատասխանատվությամբ մոտեցա այդ հարցին: Հիմա չեմ փոշմանել, որ ՀՀԿ անդամ եմ: Ես հասուն մարդ էի՝ որոշակի կենսափորձով և անցած ճանապարհով: Երբ դարձա ՀՀԿ անդամ, այն ժամանակվա վարչապետ Անդրանիկ Մարգարյանի կարգադրությամբ դարձա ՀՀԿ Կանանց խորհրդի սպորտի և մշակույթի հանձնաժողովի ղեկավար: Այդ ժամանակվանից իմ մասնակցությունը քաղաքական կյանքին շատ ավելի ակտիվ էր, կուսակցությունում նույնպես շատ ակտիվ գործունեություն եմ ծավալել:

- Քաղաքականության մեջ մտնելու նպատակն ի՞նչ էր:

- Գործողություններն են հանգեցրել նպատակի իրագործմանը: Ես երբեք կարիերայի առումով իմ առջև որոշակի խնդիրներ չեմ դրել: Նույնիսկ երբ դարձա ՀՀԿ անդամ, չէի մտածում, որ պատգամավոր եմ լինելու: Ինձ համար անսպասելի էր ցուցակում ընդգրկվելը: Սակայն աշխատանքի բնույթն ու տեմպը հանգեցրին նրան, որ դարձա պատգամավոր: Կուսակցության ղեկավարությունն էլ գնահատեց իմ աշխատանքն ու 2009-ին, երբ Դաշնակցությունը դուրս եկավ կոալիցիայից, և Արմեն Աշոտյանը դարձավ կրթության ու գիտության նախարարը, ցուցակով նրան հաջորդում էի ես և մտա խորհրդարան:

- Փաստորեն, դուք այն բացառիկ կին պատգամավորներից եք, որոնց կուսակցությունն աջակցել ու վստահել է:

- Կուսակցությունը շատ է աջակցել ու գնահատել իմ կատարած աշխատանքը: Պատգամավորական աշխատանքն այն տրամաբանական շարունակությունն էր, որ կատարում էի կուսակցությունում: Կուսակցական աշխատանքը շատ ակտիվ է: Ես կարծում եմ, որ քաղաքականությամբ զբաղվող մարդիկ պարտադիր պետք է կուսակցական աշխատանքով զբաղվեն, և նրանք, ովքեր գալիս են խորհրդարան, պետք է այդ բովով անցնեն: Որովհետև կուսակցական աշխատանքով շատ ես հմտանում և փորձ ձեռք բերում: Քաղաքականությունը բարդ ոլորտ է, և միանգամից ոչ ոք չի կարող պատգամավոր դառնալ:

- Դուք արտաքինից փխրուն կին եք, իսկ աշխատանքում ինչպիսի՞ն է Կարինե Աճեմյանը:

- Այո, ինձ դուր է գալիս, որ արտաքինից փխրուն եմ: Ես կին եմ, և այդուհանդերձ աշխատել եմ այնպիսի կազմակերպություններում, որտեղ շատ լուրջ հնտություններ են պետք եղել, կազմակերպչական ջիղ և

խստություն: Փխրունը լավ է, բայց ոչ երբ թատրոն ես ղեկավարում, որն ամենահնտրիգային հաստատություններից է, որովհետև բուռն էմոցիաներ են իշխում: Թատրոն ղեկավարելը շատ դժվար է: Ես այդ տարիներին մեծ փորձ ձեռք բերեցի, կարողացա կառավարել: Բանկում դժվար էր աշխատելը, քանի որ նման փորձ նախկինում չունեի, բայց որոշ ժամանակ անց հմտացա և կարողացա կառավարել: Դրանք դժվարություններ են, որոնք մարդ պետք է հաղթահարի ու ևս մեկ աստիճանով բարձրանա: Շատ կարևոր է, որ կարողանաս պահպանել կանացիությունը, աշխատանքի մեջ չկոպտանաս, բայց լինես խիստ ու պահանջկոտ:

- Ձեզ ինչպե՞ս կբնութագրեք:

- Շատ զգացմունքային եմ, դա ինձ շատ էր խանգարում: Հետագայում դա հաղթահարեցի և շատ դեպքերում այլևս չի դրսևորվում: Շատ համբերատար եմ: Առաջ ավելի արագ էի աշխատանքի արդյունքն ակնկալում, հիմա շատ ավելի համբերատար եմ դարձել, ինչը քաղաքական գործչի համար շատ կարևոր է: Նպատակասլաց եմ, կազմակերպված ու պատասխանատու: Շատ զգուշավոր մարդ եմ, ու դա գուցե ինձ խանգարել է, քանի որ երբ չափից շատ զգուշավոր ես, ռիսկային քայլերի չես դիմում, իսկ ռիսկային քայլերի դիմելու դեպքում գուցե հասնես ավելի մեծ հաջողությունների: Բայց ես համարում եմ, որ այդ կերպ խուսափել եմ նաև շատ մեծ սխալներից:

Կարծում եմ՝ կնոջ սխալը քաղաքականության մեջ կարող է ճակատագրական լինել: Ոչ միայն իր, այլև իր կուսակցության համար: Կանայք կարծես խոշորացույցի տակ լինեն: Ես համարում եմ, որ քաղաքականությունը տղամարդկանց աշխարհ է, և եթե այնտեղ ես, ապա պոտենցիալ մրցակից ես, և եթե սխալ բան ես անում, ասում են՝ ավելի լավ է՝ սխալներով տղամարդ, քան կին: Այդ առումով ոչ միայն քեզ ես անախորժություն պատճառում, այլև այն կուսակցությանը, որը ներկայացնում ես: Իսկ ես համարում եմ, որ կորպորատիվ շահն առավել կարևոր է: Շատ հարցերում գուցե այլ կերպ հանդես գաս, բայց քանի որ ներկայացնում ես քաղաքական ուժ, սխալվելու իրավունք չունես: Ինչքան էլ ասենք՝ Հանրապետականը մեծ քայլ կատարեց՝ նպաստելով, որ կանանց քանակը մեծանա, կարծում եմ, որ միայն քանակը կարևոր չէ: Յուրաքանչյուր ոլորտում կարևոր են հմտությունը, խելքը, և եթե կինը շատ լավ գործիչ կարող է դառնալ, կդառնա: Եթե մենք կանանց տանում ենք Ազգային ժողով միայն նրա համար, որ քանակ ապահովենք, ապա դրանով մեզ վնասում ենք: Հինգերորդ գումարման ԱԺ-ում 14 կանանցից 9-ը ներկայացնում են ՀՀԿ-ն: Իհարկե, դա մեծ առաջընթաց է, բայց նաև մեծ պատասխանատվություն է: Ժամանակը ցույց կտա՝ սխալվել ենք, թե ոչ:

- Ըստ Ձեզ, պատգամավորն ինչպիսի՞ն պետք է լինի:

- Գոյություն ունեն մի շարք չափանիշներ, որոնք պարտադիր են, և չես կարող անտեսել դրանք: Երեք-չորս հարթություն կա: Նախ՝ պետք է հասարակության հետ կապը պահպանես ու լինես շատ մատչելի: Դա նախապայման է, որ պատգամավորն իր գործունեությունը կարգին իրականացնի: Պատգամավորը պետք է օրենսդիր աշխատանքով զբաղվի, տեղյակ լինի օրենքներից: Այս հարցում ինձ շատ է օգնել բանկային գործունեու-թյունը: Այնտեղ պեղանտության աստիճանի է հասցվում փաստաթղթի հետ աշխատանքը, և ես զգում եմ, որ հիմա խորհրդարանում նույն կերպ, շատ մեծ պատասխանատվությամբ եմ վերաբերվում օրենքներին: Այսինքն՝ համարում եմ, որ օրենքը կարևորագույն փաստաթուղթ է, և սխալները պետք է հասցվեն նվազագույնի: Օրենսդիր աշխատանքը շատ կարևոր է: Շփումն ու աշխատանքը լրագրողների հետ՝ նույնպես: Երբեք հեռախոսս չեմ անջատում, որևէ լրագրողի չեմ մերժում և համարում եմ, որ պատգամավորը պետք է առավելագույնս բաց լինի:

- Ի՞նչ փոխվեց Ձեր կյանքում պատգամավորի մանդատ ստանալուց հետո:

- Շատ բան: Մեծացել է պատասխանատվությունը: Կին պատգամավորը պետք է իմանա, որ եթե ուզում է իր հետևից բացել դռները այլ կանանց համար, պետք է իր արարքների ու խոսքերի համար պատասխանատու լինի և հետևի դրանց: Ես գիտեմ, որ հանրային ոլորտում ինձ շատերն են ճանաչում: Առաջին օրվանից մտածել եմ, որ չեմ կարող թույլ տալ մի արարք կամ խոսք, որի համար հետո կարող եմ ամաչել, կամ իմ կուսակցությունը կարող է վատ զգալ: Իմ շփումներն են շատացել: Թեպետ միշտ էլ շփվող անձնավորություն եմ եղել և դա համարում եմ իմ լավագույն հատկանիշներից մեկը: Պատգամավոր դառնալուց հետո իմ գործառույթներն ավելացան, սակայն ժամանակի առումով միշտ էլ տեմպի մեջ եմ եղել ու միշտ էլ աշխատել եմ, հետևաբար առանձնակի փոփոխություն չեմ զգում:

- Եթե հետադարձ հայացք գցենք նախորդ չորս տարիների գործունեության վրա, գո՞հ եք Ձեր կատարած աշխատանքից և ի՞նչը կառանձնացնեիք:

- Երբեք իմ աշխատանքից բացարձակ գոհ չեմ լինում: Որովհետև գիտեմ, որ ինչքան էլ անեմ, շատ գործ կա անելու: Սակայն մեծ դժգոհության պահեր էլ չեմ ապրել: Բավարարվածություն եմ զգում, որ շատ հարցերում կարողացել եմ օգնել, օրենսդրական գործունեության մեջ ինձ դրսևորել եմ, կան օրենք-

ներ, որոնք ես եմ նախաձեռնել, ակտիվ օրենսդրական նախաձեռնությամբ եմ զբաղվել: Շատ եմ շփվել և շփվում եմ մարդկանց հետ: Ես այն պատգամավորներից եմ, որոնք կարծում են, որ ոչ միայն Հայաստանը, այլև Ղարաբաղն է իրենց ընտրողը, և բոլորի հանդեպ պատասխանատվություն ունեն: Չկա Հայաստանում մեկը, որ կարող է ինձ որևէ հարցով դիմել, և ես արհամարհեմ կամ չպատասխանեմ: Այլ հարց է, թե ինչքանով եմ կարողացել օգնել, բայց որևէ հարց օդում կախված չի մնացել:

- Առաջիկա հինգ տարին դուք շարունակելու եք աշխատել Ազգային ժողովում: Ի՞նչը կցանկանայիք փոխել:

- Կուզեի, որ արտագաղթը դադարեր, կուզեի, որ մեր հայրենակիցներից շատերը, որոնք սփյուռքում են ապրում և ի վիճակի են ու ցանկություն ունեն վերադառնալու հայրենիք, վերադառնան: Ուզում եմ, որ լուծենք սոցիալական խնդիրները, որպեսզի աղքատությունը հասնի նվազագույնի: Կուզենամ, որ մեր ընտանիքներն առողջ ու ամուր լինեն, որովհետև որևէ ազգ չի կարող առաջընթաց ապրել կամ զարգանալ, եթե ընտանիքներում խնդիրներ կան: Իսկ հիմա դա շատ մեծխնդիր է և՛ բարոյահոգեբանական, և՛ սոցիալ-տնտեսական առումով: Խորհրդարանում կցանկանայի փոխել բոլորի վերաբերմունքն իրենց աշխատանքի հանդեպ: Պատգամավորները ոչ թե անհատական փիառով կամ կարիերայով զբաղվեին, այլ կոնկրետ խնդիրներով, որոնք այնքան շատ են, ու անընդհատ էլ աշխատես, դրանք չեն վերջանա: Նպաստեն, որ մեր երկիրը զարգանա, և չանտեսեն, չարհամարհեն իրենց ընտրողին:

- Ձեր գործունեության ընթացքում խորհրդարանում որպես կին անհարմարություն զգացե՞լ եք:

- Որպես կին չեմ զգացել: Հենց սկզբից իմ հանդեպ շատ բարեհաճ վերաբերմունք է եղել տղամարդկանց կողմից: Իսկ հետագա ընթացքն ինքդ ես կառավարում: Եթե քեզ ճիշտ ես դրսևորում, տղամարդկանց հարգանքն ես վայելում: Այս առումով միշտ զգուշավոր եմ եղել և աշխատել եմ այնպես անել, որ հեղինակություն և իմ հանդեպ վստահություն ձեռք բերեմ ու պահպանեմ: Դա յուրաքանչյուրի մենաշնորհն է, և յուրաքանչյուրը պետք է այնպես աշխատի, իրեն դրսևորի, որ կարողանա ձեռք բերել դիմացինի հարգանքը: Ոչ միայն խորհրդարանում, այլև դրսում՝ հասարակության մեջ:

- Պատգամավորական գործունեությունը համապատասխանո՞ւմ է այն պատկերացումներին, որ ունեիք չորս տարի առաջ, երբ դեռ պատգամավոր չէիք:

- Ճիշտն ասած, շատ մեծ տարբերություն չկա իմ պատկերացումների և իրականության միջև: Այն լրջությունն ու պատասխանատվությունը, որով եկա Ազգային ժողով, հիմա էլ կրկնապատկվել, եռապատկվել է: Պարզապես մանրամասներին տեղյակ չէի, ու քանի որ արագաշարժ ու ճկուն անձնավորություն եմ, շատ շուտ ընկալեցի ու հասկացա՝ ինչ պետք է անեմ:

- Խոսենք ձեր հետաքրքրությունների շրջանակի մասին: Խորհրդարանից, քաղաքականությունից և Հանրապետական կուսակցությունից դուրս ինչպիսի՞ն է Կարինե Ամեմյանը:

- Քանի որ արվեստի մարդ եմ և ինչ-որ չափով այդպիսին էլ մնացել եմ, շատ եմ սիրում մշակույթը, արվեստը, սիրում եմ դաշնամուր նվագել, կարդալ, մարդկանց հետ շփվել: Սիրում եմ հաճախել պատկերասրահներ, և առաջին վայրը, որտեղ լինում եմ արտասահմանում, թանգարաններն են: Իմ ընտանիքն է ինձ մեծ ուժ տալիս, և ազատ ժամերն անցկացնում եմ ամուսնուս և դստերս հետ: Ընտանեկան պարտականությունները, իհարկե, ոչ ոքի վրա չեմ թողնում և կատարում եմ մեծ հաճույքով:

- Ո՞ւմ գործերն եք առավել հաճախ կատարում:

- Իմ ռեպերտուարը բազմաբնույթ է: Ջազ էլ եմ նվագում, դասական երաժշտություն էլ, ժողովրդական էլ: Ամեն ինչ սիրում եմ, բայց լավը: Հիմա էլ խնջույքների ժամանակ ինձ հաճախ են խնդրում, որ նվագեմ, և ես հաճույքով նվագում եմ:

- Իսկ խոհանոցո՞ւմ:

- Երբ շատ զբաղված ես, դժվար է համատեղել խոհանոցն ու գրասենյակը, բայց ես փորձում եմ: Անգամ ամենազբաղված ժամանակ իմ տան ճաշը ես եմ եփել: Ընտանիքս միշտ գոհ է եղել, իսկ եթե չեմ հասցրել, ամուսինս ինձ օգնել է: Մենք ամեն ինչ միասին ենք անում:

- Անշուշտ, ամուսնու և ընտանիքի անդամների աջակցությունը շատ կարևոր է:

- Այո, մենք ոչ միայն ամուսիններ ենք, այլև լավ ընկերներ: Ամուսնուս հեղինակավոր դերասան լինելն էլ նպաստեց, որ արագ ճանաչված պատգամավոր դարձա: Նրան ոչ միայն ճանաչում են, այլև սիրում: Եվ իմ իմիջի ձևավորմանը դա շատ նպաստեց:

- Փողոցում առավել հաճախ ասում են՝ սա այն դերասանի կինն է, թե՞ սա այն պատգամավորի ամուսինն է:

- Ճիշտն ասած, ես առավել նախընտրում եմ, երբ ինձ ասում են, սա այն դերասանի կինն է: Հիմա երկուսիս էլ ճանաչում են, չէի ասի, թե հավասարապես, ամուսնուս ավելի շատ են ճանաչում, և ինձ համար դա շատ հաճելի է:

- Իսկ ի՞նչ խորհուրդ կտայիք այն կանանց, որոնք զբաղվում են քաղաքականությամբ:

- Առաջին՝ կարիերան չդարձնել գերխնդիր: Ես համարում եմ, որ իմ կյանքում քաղաքականությունը, խորհրդարանը տրամաբանական շարունակություն էին, դա աստիճանաբար եղավ, և դա շատ կարևոր է: Պետք է հասկանաս, թե ինչ ես ուզում այս կյանքից և ինչ ես ուզում անել: Եթե գերխնդիրը ճանաչված լինելն է, ապա կարող ես պարզապես նկարահանվել որևէ գովազդային տեսահոլովակում, և քեզ բոլորը կճանաչեն, իսկ եթե մտել ես քաղաքականություն, ապա պետք է հասկանաս, որ շղթայի մի մասնիկն ես, որ քեզ վստահված է այդ հատվածը, և պետք է փայլուն աշխատես: Ես միշտ խորհուրդ եմ տալիս, որ երբեք անձնական կյանքի ու ընտանիքի հաշվին կարիերա չստեղծեն, դա սխալ է: Ընտանիքը կնոջ կարևորագույն առաքելությունն է, և այդ առաքելությունը պետք է պատվով կատարել:

Նաիրա Կարապետյան

«Իմ ողջ գործունեության ընթացքում միշտ եղել եմ կանանց ակտիվ մասնակցության ջատագովը»

Ծնվել է 1977 թ. հոկտեմբերի 25-ին Գյումրիում:

1999 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետը: Արևելագետ-դիվանագետ: 2002 թ.՝ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի ասպիրանտուրան: 2004-2005 թթ. սովորել է Մոսկվայի «Իմիջլենդ PR» կազմակերպությունում: PR հմտությունների մասնագետ: Մասնակցել է «Քաղաքական հմտությունների զարգացում» ծրագրի դասընթացներին (2009 թ., «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի ուսուցողական կենտրոն, Դյուսելդորֆ և 2011 թ., Լոնդոն):

2004 թ. Հարավկովկասյան երիտասարդական ուսուցողական (թրեյներական) ցանցի (SCYTP) քաղաքական կարողությունների զարգացման դասընթացների ուսուցանող է (թրեյներ): 2005-2008 թթ. աշխատել է ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի (2008 թ. հունվարից՝ ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայություն) միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի վարչությունում՝ միջազգային ծրագրերի զարգացման և PR պատասխանատու: 2010-2012 թթ.՝ ՀՀ ճանապարհային երթևեկության անվտանգության ազգային խորհրդի քարտուղարության PR պատասխանատու:

1995-1997 թթ. եղել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի «Երջանիկ մանուկ» ծրագրի համակարգող խմբի անդամ և ԵՊՀ ուսխորհրդի մշակույթի հանձնաժողովի ղեկավար: 2003-2005 թթ.՝ ՀՀ ԱԺ պատգամավորի օգնական: 2010 թ. «Կանանց ակումբի» համահիմնադիր է:

Հեղինակ է գիտական մի շարք աշխատությունների:

2008 թ. ՄԻԱԿ կուսակցության անդամ է: 2009 թ.՝ կուսակցության խորհրդի և քարտուղարության անդամ:

2012 թ. մայիսի 6-ին Ազգային ժողովի պատգամավոր է ընտրվել համամասնական ընտրակարգով Հայաստանի Հանրապետական կուսակցությունից:

ՀՀ ԱԺ Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի անդամ է:

- Քաղաքական ի՞նչ գործունեություն եք ծավալել մինչ Ազգային ժողովում հայտնվելը: Քաղաքականությունը նո՞ր ոլորտ է Ձեզ համար:

- Արդեն չորս տարի է՝ ՄԻԱԿ-ի ղեկավար մարմնի անդամ եմ: Մեր կուսակցությունը քաղաքական դաշտում առանձնանում է քաղաքական սերնդափոխության բացառիկ առաջարկով, որն այսօր տեղ է գտել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի նախընտրական ծրագրում և ակտիվորեն իրականացվում է: Նաև մեր կուսակցության առանձնահատկություններից մեկն այն է, որ ՄԻԱԿ-ն ուժեղ կադրային ռեսուրս է, մեծ թվով երիտասարդ մասնագետներ ունի տարբեր ոլորտներից, և այսօր ՀՀԿ-ում ՄԻԱԿ-ի պատվիրակների առաքելությունը ՀՀԿ խորհրդարանական խմբակցությունում մեր կուսակցության տեսակետներն ու մոտեցումները տեղ հասցնելն է:

- Մինչ օրս Ձեր մաշկի վրա զգացե՞լ եք՝ ինչ է գենդերային անհավասարությունը և խտրականությունը:

- Ես իմ հանդեպ երբևէ չեմ զգացել խտրականություն, որովհետև երևի ընտրել եմ ճիշտ կուսակցություն: Նման դրսևորումները, կարելի է ասել, իմ կողքով են անցել: Ես անգամ համոզված եմ, որ Հայաստանի քաղաքական դաշտում կնոջ հանդեպ գենդերային խտրականություն կամ առհասարակ խտրականություն անհնարին է: Ինչքան էլ բարձր հնչի, բայց հայերը, իրոք, կնամեծար ազգ են:

Մեր խնդիրն իրականում այլ է. կանայք հաճախ չեն ցանկանում զբաղվել քաղաքականությամբ: Եվ ոչ թե նրանց թույլ չեն տալիս դա անել, այլ նրանք պարզապես նման ցանկություն չեն ունենում: Ի դեպ, ՄԻԱԿ-ն իր գործունեության ընթացքում նաև այդ ոլորտին է անդրադարձել. կանանց մեջ հետաքրքրություն առաջացնել շարժումներին մասնակից լինելու համար, լինի հասարակական թե քաղաքական ոլորտում:

- Այսինքն՝ Դուք, լինելով Ազգային ժողովում, այդ քաղաքականությունը կշարունակե՞ք:

- Իմ ողջ գործունեության ընթացքում, լինի դա հասարակական թե քաղաքական դաշտում, միշտ էլ եղել եմ կանանց ակտիվ մասնակցության ջատագովը: Քանի որ Ազգային ժողովում նոր եմ, ու ժամանակ է պետք հասկանալու, թե որ մշտական հանձնաժողովում եմ ներկայացված լինելու ու կոնկրետ որ ոլորտում եմ առավել ակտիվ գործելու, հիմա դժվար է ուրվագծել գալիք գործունեության ուղղությունները: Բայց լիահույս եմ, որ ամեն տեղ,

որտեղ կտեսնեմ կանանց իրավունքների ոտնահարման դեպքեր, առաջին բարձրաձայնողներից մեկը կլինեմ:

- Անցյալ տարի Ազգային ժողովն ընդունեց ընտրական նոր օրենսգիրքը, որով կանանց ներկայացվածությունը խորհրդարանում պետք է ավելացման միտումներ ունենար: Սակայն խորհրդարանական ընտրություններից հետո պարզ դարձավ, որ 2007 թ. ընտրությունների համեմատ՝ հինգերորդ գումարման Ազգային ժողովն ընդամենը 2 կին պատգամավորով է ավելացել:

- Համաձայն եմ՝ ցուցանիշն իսկապես գոհացուցիչ չէ, թեև, օրինակ, Հայաստանի հանրապետական կուսակցության խմբակցությունում կանանց թիվն աճել է, մենք նաև ունենք մեծամասնական ընտրակարգով ընտրված կին պատգամավոր: Բայց ինքս խնդիրը տեսնում եմ հետևյալում. օրենքով պահանջվում է, որ կանանց թիվը կուսակցության կողմից ներկայացվելիք համամասնական ցուցակում մեծ լինի, բայց ոչ թե Ազգային ժողովում:

Այսինքն՝ պահանջ չի դրվում, որ ցուցակից ինքնաբացարկ հայտնած կին թեկնածուի փոխարեն Ազգային ժողով գա մյուս կին թեկնածուն և ոչ թե նրան հաջորդող տղամարդը: Կարծում եմ՝ օրենքի բացը հենց դա է, և այսօր դա է պատճառը, որ ԱԺ-ում, ի տարբերություն օրենքով նախատեսված քվոտավորված ցուցակների, կանանց ներկայացվածությունն այդքան էլ մեծ չէ: Նայում ենք ցուցակներին՝ իդեալական են կազմված, բայց…

- Իսկ պատրաստվո՞ւմ եք Ձեր այդ նկատառումը ներկայացնել օրենսդրական նախաձեռնությամբ:

- Իհարկե: Կարծում եմ՝ դրա ժամանակը կգա անպայման, ու կանայք պետք է համախմբվեն այդ գաղափարի շուրջ՝ անկախ կուսակցական պատկանելությունից: Իսկապես, ակնհայտ է, որ օրենքի բացը հենց դա է: Ինքնաբացարկ հայտնողից հետո գալիս է հաջորդ թեկնածուն, իսկ մենք շատ լավ գիտենք՝ ինչ սկզբունքով են կազմված ցուցակները. կին թեկնածուից հետո չորս տղամարդ է և հետո միայն հաջորդ կին թեկնածուն:

- Իսկ ինչպե՞ս է ընկալվում, երբ Դուք առաջ եք տանում կնոջ՝ քաղաքականությամբ ու առհասարակ ակտիվ հասարակական գործունեությամբ զբաղվելու իրավունքը:

- Իրականում իրավիճակն այսօր փոքր-ինչ այլ է: Ես հետադարձ հայացք եմ գցում, ու ակնհայտ է, որ գոնե վերջին 15 տարում այս իմաստով մեծ առաջընթաց կա Հայաստանի քաղաքական ու հասարակական կյանքում: Եթե նախկինում քաղաքականության մեջ կինն ընկալվում էր օգնականի կամ խորհրդականի դերում, ապա այսօր առաջին շարքերում ու կարևոր պաշտոններում է: Եվ հեռու չգնալու համար էլ բերեմ նորընտիր Ազգային Ժողովի օրինակը. հինգերորդ գումարման Ազգային Ժողովում ԱԺ նախագահի փոխխոսնակ ընտրվեց ՀՀԿ-ական Հերմինե Նաղդալյանը: Եվ սա, ըստ իս, բոլորիս հաղթանակն է:

Արփինե Հովհաննիսյան

«Ուզում եմ քաղաքականության մեջ ասել իմ՝ որպես մասնագետի խոսքը»

Ծնվել է 1983 թ. դեկտեմբերի 4-ին Երևանում:

2004 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, 2006 թ.՝ նույն ֆակուլտետի մագիստրատուրան: Իրավաբան: 2009 թ. ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի ասպիրանտուրան: Իրավաբանական գիտությունների թեկնածու:

2003-2006 թթ. աշխատել է որպես ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի դատահիրավական բարեփոխումների վարչության քրեակատարողական ծառայության բարեփոխումների բաժնի առաջին կարգի մասնագետ, 2006-2007 թթ.՝ առաջատար մասնագետ: 2007 թ. ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս է: 2007-2008 թթ. եղել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության վարչության պետի տեղակալ: 2008-2008 թթ.՝ ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի օգնական: 2008-2011 թթ.՝ ԱԺ նախագահի խորհրդական:

2012 թ. մայիսի 6-ին Ազգային ժողովի պատգամավոր է ընտրվել համամասնական ընտրակարգով Հայաստանի հանրապետական կուսակցությունից:

ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ է:

- Ձեր՝ որպես կնոջ նկատմամբ երբևէ խտրականություն զգացե՞լ եք:

- Ես խտրականության երկու տեսակ կառանձնացնեի. արտաքին բնույթի խտրականություն և հենց կանանց ներսում եղած ինքնասահմանափակում: Երբ կինն ինքն իրեն չի պատկերացնում հասարակական գործընթացներում և կարիերային աճի չի ձգտում, բնական է, որ նման ինքնասահմանափակումը կհանգեցնի նաև արտաքին խտրականության՝ այսպես կոչված «ապակյա առաստաղի», եթե գենդերային եզրույթներով խոսենք: Որոշ առումներով բոլոր կանայք էլ բախվում են խտրականության, սակայն կարծում եմ՝ յուրաքանչյուրը պետք է իր ներսում հաղթահարի այդ բարդույթները, որից հետո միայն կկարողանա հաղթահարել արտաքին խոչընդոտները:

Ինքս ընդգծված խտրականության չեմ բախվել, սակայն մասնավոր դեպքեր եղել են: Օրինակ, երբ ասպիրանտուրա էի ընդունվում, միասնական քննություններին մասնակցողների ճնշող մեծամասնությունը տղաներ էին, որոնք շատ հետաքրքիր հայացքով էին նայում, անգամ մեկը չկարողացավ զսպել իրեն և ասաց. «Ձեր ֆակուլտետում տղա չկա՞ր, որ Դուք եք եկել....»:

«Ընդհանրապես կյանքում հեղափոխական զարգացումներ չեմ սիրում, էվոլյուցիոն ճանապարհի կողմնակիցն եմ: Ինձ մոտ էլ է այդպես եղել. քայլ առ քայլ, ամեն անգամ աստիճանաբար է հասունացել գաղափարը, որ կարող եմ անել ավելին: Իմ մուտքն էլ քաղաքականություն բնականոն ու օրինաչափ զարգացման արդյունք էր», - ասում է նա:

Ի դեպ, նրան կարելի է դասել գենդերայնորեն զգայուն պատգամավորների շարքը, համենայն դեպս Womennet.am-ի հարցերին պատասխանելիս շեշտեց, որ ժամանակին ավարտել է նաև Համալսարանական կրթությամբ ասոցիացիայի կանանց լիդերության դպրոցը և շատ է կարևորում այդ ուսուցումը:

- Իսկ կանանց քաղաքական մասնակցության առումով ի՞նչ խոչընդոտներ եք տեսնում:

- Կարծում եմ, որ եթե անգամ կան էլ, ապա դարձյալ մեծապես պայմանավորված են այն հանգամանքով, որ կանայք իրենք պետք է պատկերացնեն՝ ինչ են ուզում, ուր են գնում, ու ինչու, այդ ժամանակ բոլոր պատնեշները կանցնեն ու առաջ կգնան:

- Որո՞նք են կանանց՝ պատգամավորական մանդատից հրաժարվելու դրդապատճառները, և կարելի՞ է որակել այդ երևույթը որպես ճնշում և թաքնված խտրականություն կանանց նկատմամբ:

- Դրդապատճառները տարբեր կարող են լինել, չեմ կարծում՝ ճիշտ է ընդհանուր եզրահանգումներ անել, յուրաքանչյուր դեպքի հետ կապված՝ պետք է առանձին դիտարկել խտրականության հավանականությունը և նոր միայն դատողություններ անել:

- Ձեր վերաբերմունքը գենդերային քվոտային, արդյունք տվե՞ց դրա բարձրացումը 15 տոկոսից մինչև 20 տոկոս:

- Կարծում եմ, հասարակության ազգային հոգեկերտվածքի բոլորիս հայտնի առանձնահատկությունները հաշվի առնելով, այս պահին խնդրի կարգավորումը դրական էր: Ընդհանրապես պոզիտիվ խտրականությունը

հասարակական զարգացման այս փուլում և իրավագիտակցության այս անցումային մակարդակում դրական երևույթ եմ համարում: Այն արդեն իսկ տվել է իր արդյունքը, քանի որ օրենքի պահանջի պահպանման տեսանկյունից նպաստում է կանանց քաղաքականություն մտնելու գործընթացին:

- Ի՞նչ փոփոխություններ եք տեսնում կանանց մասնակցության առումով նախորդ՝ 2007 թ. ընտրությունների համեմատությամբ:

- Փոփոխություններ, անկասկած, կային, նախկինի հետ համեմատած՝ ունեինք մեծամասնական ընտրակարգով առաջադրված բավական շատ թվով կին թեկնածուներ: Անկեղծ ասած, կարևոր չէ՝ քանիսը հաղթանակ տոնեցին, քանիսը՝ ոչ: Երևույթն ինքնին դրական ազդակ էր առ այն, որ կանայք իրենց առաջնային դերին զուգահեռ (ընտանիքի պահապան և մայր) չեն մոռանում նաև հասարակության լիարժեք անդամ լինելու մասին և օգտվում են քաղաքական գործընթացներին մասնակցելու իրենց ընձեռված իրավունքներից:

- Իսկ կարելի՞ է գնահատել կանանց մասնակցությունը 2012-ի ընտրություններում որպես հաջողություն:

- Կարծում եմ՝ ցանկացած երևույթ պետք է դիտարկել համեմատության մեջ: Կարող ենք ասել, որ նախորդ փուլերի համեմատությամբ՝ կանայք ավելի լայնորեն էին ներգրավված քաղաքական գործընթացներում և ունեցան նկատելի հաջողություններ: Կոնկրետ ՀՀԿ-ի կողմից երկու կին մեծամասնական ընտրակարգով անցավ, և խմբակցությունում այսօր ինը կին պատգամավորներ են ընդգրկված:

- Կանայք պե՞տք է իրենց ոճն ունենան քաղաքականության մեջ: Տարբերվու՞մ է այն տղամարդկանց ոճից:

- Համոզված եմ, որ այն բնական առանձնահատկությունները, որոնք գոյություն ունեն կանանց և տղամարդկանց մտածողության մեջ, չեն կարող չդրսևորվել նաև քաղաքականության ոլորտում: Ոչինչ արհեստական չպետք է անել, ի վերջո, ժողովրդի խնդիրները բոլորի համար միասնական են, դրանք լուծելու ուղիներն ու ցանկությունները՝ նույնպես:

- Ի՞նչ կցանկանայիք փոխել քաղաքականության մեջ:

- Այնպես, ինչպես յուրաքանչյուր մարդկային հարաբերության մեջ մարդիկ ձգտում են ազնվությամբ և «խաղի կանոնների» պահպանմամբ առաջնորդվել, կցանկանայի, որ քաղաքականության մեջ էլ այդպես լիներ. լիներ ավելի շատ ազնվություն:

- Ինչպիսի՞ն էր ՁԼՄ-ների վերաբերմունքը կին թեկնածուների նկատմամբ:

- Չէի ասի, թե ամեն ինչ միանշանակ է, կարծում եմ՝ նայած լրատվամիջոց, նայած լրագրող և նայած կյանքում կնոջ դերի մասին տվյալ լրագրողի ունեցած պատկերացում:

- Հետևելով Ձեր ֆեյսբուքյան էջին՝ կարող ենք փաստել, որ բավականին ակտիվ եք, պատգամավոր դառնալու հանգամանքը կսահմանափակի՞ Ձեր ազատությունը սոցիալական կայքում:

- Ես կարծում եմ, որ այն ազատությունը, որ ֆեյսբուքն է ինձ տվել, շարունակվելու է, քանի որ դա իմ անձնական տիրույթն է, բայց, բնականաբար, գործունեության հետ կապված ոչ թե սահմանափակումներ կլինեն, այլ՝ փոքր ձևաչափային փոփոխություններ:

- Խոսեցինք կանանց նկատմամբ դրսևորվող խտրականության մասին, սակայն որոշ խտրական վերաբերմունք կա նաև երիտասարդների նկատմամբ, այն առումով, որ երիտասարդ մասնագետներից շատերի նկատմամբ անվստահություն է դրսևորվում: Բախվե՞լ եք նման խնդիրների՝ պայմանավորված տարիքով:

- Այո, եղել են նման իրավիճակներ: Երբ 22 տարեկան էի, տարբեր ծրագրերի շրջանակներում դասախոսություններ էի կարդում բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար: Առաջին դասերին բախվում էի անվստահության՝ կապված տարիքիս հետ: Ընթացքում այն հաղթահարվում էր: Կարծում եմ՝ միայն ես չէ, որ նման խնդրի առաջ եմ կանգնել: Դա ինչ-որ չափով նաև բնական երևույթ է, երբ փորձառությունը և երիտասարդությունը միմյանց պահանջներ ունեն ներկայացնելու: Իրականում հասարակության համար իդեալական տարբերակն այդ երկուսի համադրումն է:



Ռուզաննա Մուրադյան

«Պետք է գտնել լուսավոր կետ և այդ լուսավորության վրա կառուցել միջանձնային հարաբերությունները»

Ծնվել է 1963 թ. հունիսի 28-ին Երևանում:

1985 թ. ավարտել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկայի ֆակուլտետը: Մանկավարժական գիտությունների թեկնածու:

1985-1996 թթ. Ավ. Իսահակյանի անվան թիվ 16 դպրոցում աշխատել է ֆիզիկայի և աստղագիտության ուսուցչուհի, 1996-1999 թթ.՝ ուսումնաղաստիարակչական գծով փոխտնօրեն: 1999-2012 թթ. եղել է Գր. Զոհրապի անվան թիվ 43 դպրոցի տնօրեն:

2002 թ. «Կրթություն առանց սահմանի» ՀԿ-ի հիմնադիր նախագահն է: 2006 թ.՝ ՀՀԿ կանանց խորհրդի անդամ, գաղափարաքարոզչական հանձնախմբի նախագահ: 2010 թ.՝ «Դպրոց-կենտրոնների միություն» իրավաբանական անձանց միության նախագահ:

2006 թ. անկախության 15-ամյակի կապակցությամբ պարգևատրվել է ՀՀ վարչապետի շնորհակալագրով, հաղթող է ճանաչվել ՀՀ դպրոցների «Տարվա լավագույն տնօրեն» մրցույթում, պարգևատրվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության «Ոսկե հուշամեդալով», տեղական ինքնակառավարման մարմինների կազմավորման 10-ամյակի կապակցությամբ՝ ՀՀ վարչապետի շնորհակալագրով: 2008 թ.՝ ՀՀ ՊՆ «Գարեգին Նժդեհ» հուշամեդալով: 2011 թ՝ «ՀՀ Ազգային ժողովի Պատվո մեդալով:

Գիտամանկավարժական մի շարք հոդվածների և մեթոդական ձեռնարկների հեղինակ է:

2012 թ. մայիսի 6-ին Ազգային ժողովի պատգամավոր է ընտրվել համամասնական ընտրակարգով Հայաստանի հանրապետական կուսակցությունից:

ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ է:

Ամուսնացած է, ունի երկու զավակ:

- Տիկի՛ն Մուրադյան, ինչո՞վ եք զբաղվել մինչ պատգամավոր ընտրվելը:

- Ավարտել եմ Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը: Աշխատանքի եմ անցել Ավետիք Իսահակյանի անվան թիվ 16 դպրոցում, նույն դպրոցում եմ սովորել:

Նախ աշխատել եմ որպես ֆիզիկայի ուսուցիչ, հետո ղեկավարել եմ մեթոդմիավորումը, դպրոցի արհմիությունը, հետո ուսմասվար եմ եղել: Այդ ընթացքում ատենախոսություն եմ գրել՝ «Դպրոցի ուսումնաղաստիարակչական գործընթացի կառավարումը դպրոցի զարգացման պայմաններում», պաշտպանել ու ստացել մանկավարժական գիտությունների թեկնածուի աստիճան: Հետո նշանակվեցի տնօրեն Գրիգոր Զոհրապի անվան դպրոցում ու մինչ ԱԺ պատգամավոր դառնալն աշխատել եմ այնտեղ: Երևանի քաղաքապետարանի կողմից ճանաչվել եմ նաև տարվա լավագույն տնօրեն:

- Տեղյակ եմ, որ հիմնել եք հասարակական կազմակերպություն, որը զբաղվում է կրթական խնդիրներով:

- Այո: Ակտիվորեն մասնակցել եմ կրթությանը վերաբերող բոլոր սեմինարներին ու գիտաժողովներին: Այդ ծրագրերի շրջանակներում վերապատրաստում եմ անցել նաև երկրից դուրս: Երկու անգամ վերապատրաստում եմ անցել ԱՄՆ-ում, նախ ուսումնասիրել եմ տեղեկատվական տեխնոլոգիաները դպրոցի կառավարման գործում: Տասնմեկ տնօրեն երեքշաբաթյա դասընթաց անցավ Վերմունտի նահանգում: Վերադառնալուց հետո սեմինարներ անցկացրեցինք և մյուս տնօրեններին փոխանցեցինք մեր սովորածը: 2002-ին արդեն հիմնել էի «Կրթություն առանց սահմանների» հասարակական կազմակերպությունը, և սկսեցինք վերապատրաստման աշխատանքները: 2005-ին կրկին մեկնեցի ԱՄՆ՝ մասնակցելու դասընթացի Կալիֆոռնիայի համալսարանում:

- Ինչպե՞ս կրթության ոլորտի մասնագետը մտավ քաղաքական դաշտ:

- Քաղաքացիական ակտիվությունը, որը կուտակվել էր, իրացվելու կարիք ուներ, և այդ դաշտը հանդիսացավ Հանրապետական կուսակցությունը: Այնտեղ ես գտա այն գաղափարները, որոնք համահունչ էին իմ գաղափարներին, հետևաբար որոշեցի զբաղվել քաղաքական-հասարակական գործունեությամբ: Կուսակցությունում կանանց խորհուրդ ունենք, և ես նշանակվեցի գաղափարա-քարոզչական խմբի ղեկավար: Ուսումնասիրեցինք կուսակցության գաղափարական հենք հանդիսացող նժդեհյան ուսմունքը, կազմեցինք կուսակցության ծրագիրը, կանոնադրությունը: Սկսեցինք այդ ուսմունքը ներկայացնել մարդկանց, որպեսզի ոչ թե դառնան այս կամ այն կուսակցության անդամ, այլ համոզմունքներ ունենան և իմանան՝ ինչ գաղափարախոսության հիման վրա են դառնում կուսակցական: Այդ պարտականությունը ստանձնեցի ես: Կազմակերպեցի սեմինարներ՝ մարդկանց առավել մատչելի ներկայացնելու համար մեր կուսակցության գաղափարախոսությունը:

- Քաղաքականություն մտնելու նպատակն ի՞նչ էր:

- Առաջին հերթին՝ ոլորտի խնդիրների լուծումը: Ազգային ժողովում հավաքվում են տարբեր ոլորտների մանագետներ՝ լավագույնը համարվող մասնագետներ: Դա շատ մեծ օգուտ է և՛ առանձին ոլորտի, և՛ ընդհանուրի համար: Հետևաբար առաջին հերթին, եթե տվյալ ոլորտում ասելիք ունենք, ունենում ենք նաև դաշտ, որտեղ անմիջականորեն կարող ես մասնակից լինել օրենքների համապատասխան փոփոխություններին, որպեսզի արդյունքը ցանկալի լինի: Այս առումով ներկայիս կարգավիճակն ինձ համար շատ հոգեհարազատ է, քանի որ մասնակից եմ լինում կրթության վերաբերյալ օրենքների փոփոխմանը կամ ընդունմանը: Այժմ հանրակրթության մասին օրենքն է քննարկվում, և ես առաջարկել եմ մի շարք կետերի փոփոխություններ: Այն, ինչ կցանկանայի փոխել իմ ոլորտում: Բայց նախկինում կանգնած էի վերջում, հիմա ակունքներում եմ և կարծում եմ՝ համակարգի համար օգտակար կլինի իմ մասնակցությունը խորհրդարանում: Բայց իմ ուշադրությունից դուրս չեն մնա նաև սոցիալական ոլորտը, մարդու իրավունքները: Չեմ ցանկանում իմ ուժերն ապարդյուն վատնել և բոլոր հանձնաժողովներում աշխատել, այդ պարագայում շատ քիչ արդյունք կունենամ, բայց և մեկ ոլորտով էլ չեմ ուզում սահմանափակվել: Մի ոլորոտը մեկ այլ ոլորտի հետ եզրեր ունի, և ես փորձում եմ համագործակցության եզրերը չանցնել:

- Կուսակցության վերաբերմունքն ինչպիսի՞ն է կին անդամների ու կին պատգամավորների նկատմամբ:

- Միայն այն փաստը, որ կուսակցությունը 2006 թ. կանանց խորհուրդ ձևավորեց, արդեն վերաբերմունք է և խոսում է այն մասին, որ կանայք այսօր քաղաքականությանն անհրաժեշտ են: Բնությունից կանայք օժտված են դիվանագիտական այնպիսի հմտություններով, որոնք տղամարդիկ չունեն, և չօգտագործել դա քաղաքականության պես բարդ ոլորտում, որտեղ հարաբերություններ պետք է պարզվեն, կոնֆլիկտներ ու խնդիրներ լուծվեն, շատ ցավալի կլինի: Այս առումով մեր կուսակցությունը գիտակ մոտեցում ցուցաբերեց: Ձևավորվեց կանանց խորհուրդը: Այսօր մեր կուսակցության գրեթե կեսը կանայք են: 150 հազար անդամ ունեցող կուսակցության 70 հազարը կանայք են: Նրանք գալիս են այլ կանանց հետևից, այսինքն՝ առաջնորդ կանանց, որոնց վստահում են, և դա շարժիչ ուժ է: Որևէ կուսակցության կանանց խորհուրդ՝ որպես ինստիտուտ, հաստատ չի կարող մրցել ՀՀԿ կանանց խորհրդի հետ:

- Համամի՞տ եք, որ խորհրդարանում Դուք խոշորացույցի տակ եք, նաև օրինակ եք ուրիշ կանանց համար, որոնք դեռ չեն մտել քաղաքականություն:

- Իհարկե, այսօր խորհրդարան անցած կանայք համավում են շատ կանանց նպատակների մարմնավորողները: «Արդյոք հնարավո՞ր է, որ կինը քաղաքականության մեջ հասնի բարձր աստիճանի» հարցի պատասխանը դու տալիս ես սեփական փորձով: Նաև պետք է կերպարդ օրինակին համապատասխանի, հակառակ պարագայում կկանգնես անախորժ փաստի առջև: Մեր կուսակցությունն այս առումով շատ զգուշավոր է և շատ պահպանողական, միաժամանակ շատ ժողովրդավար և հատկապես այս ընտրություններում գենդերային հավասարության առումով շատ մեծ քայլ կատարեց, չմոռանանք, որ 14 կանանցից 9-ը Հանրապետական կուսակցության կանայք են, իսկ դա պարտավորեցնող իրողություն է: Ե՛վ կուսակցության առաջ ես պատասխանատու, և՛ հասարակության, որովհետև շատերը նայում են քեզ, և Ձեր ասած խոշորացույցը շատ տեղին է: Իմ պատկերացումն Ազգային ժողովի առնչությամբ այդպիսին չէր: Մենք ապրում, աշխատում և գործում ենք թափանցիկ ապակիների ետևում, և խոշորացույցը դեռ շատ մեղմ է ասված: Անգամ ամենափոքր վրիպումը, որ քեզ համար այդ պահին տեսանելի չէ, մարդիկ տեսնում են: Հետևաբար ինչքա՞ն պետք է աշխատես քեզ վրա, որ ստեղծես կնոջ այն կատարելատիպը, որին մարդիկ վստահեն:

Խորհրդարանում աշխատելն ու այդ աշխատանքները կողքից դիտարկելը տարբեր բաներ են: Երբ կողքից ենք նայում, մեզ համար անտեսանելի է այն աշխատանքը, որ կատարվում է դահլիճից դուրս: Մենք տեսնում ենք պատգամավորին դահլիճում նստած, օրենքները քննարկելիս, կոճակ է սեղմում, երբեմն ելույթ է ունենում, հարցեր է բարձրացնում, բայց դրանից առաջ ինչ աշխատանք է կատարում՝ չի երևում: Երբ ինձ ասում էին՝ Ռուզաննա, դու ակտիվ մարդ ես, ո՞նց ես գնալու ու պատգամավոր դառնաս, չգիտեի՝ ինչ պատասխանել: Մարդկանց մեջ տպավորությունն այնպիսին է, որ գնալու ես, կոճակ սեղմես, մի երկու ելույթ ունենաս, ու վերջ: Բայց երբ տեսա, թե որքան շատ աշխատանք կա անելու… Եվ սա այն ոլորտն է, որտեղ դու ես քո անելիքը պլանավորում: Որևէ մեկը քեզ չի պարտադրում, որ ելույթ ունենաս, հարց տաս, մասնակցես հանձնաժողովի նիստերին: Քաղաքական գործիչն ինքն է որոշում իր ճանապարհն ու զարգացման ընթացքը: Հիմա հարց տվողներին ասում եմ. «Խորհրդարանում գրեթե ազատ ժամանակ չունեմ»:

- Շատ քիչ ժամանակ է անցել, ինչ խորհրդարան եք մտել, սակայն կարո՞ղ եք ամփոփել այս ամիսների ընթացքում կատարած աշխատանքը:

- Ակտիվորեն մասնակցել եմ խորհրդարանական նիստերին, ոչ մի բացակայություն չեմ ունեցել: Նիստերի ընթացքում էլ եմ ակտիվ եղել, հատկապես կրթության մասին, հանդես եմ եկել հարակից զեկույցով «Հանրակրթության մասին» օրենքի վերաբերյալ: Հեռուստատեսության վերաբերյալ օրենքի քննարկման ժամանակ էլ ելույթներ եմ ունեցել: Այս ամիսների ընթացքում իմ կատարած գործունեության առավել ամփոփ տեղեկատվություն կա, ես բլոգ եմ բացել, և այնտեղ ներկայացնում եմ իմ ամենօրյա աշխատանքը: Նպատակն է առավել հասանելի լինել հասարակությանը և ներկայացնել, թե իրենց ընտրած կուսակցության ներկայացուցիչն ինչ գործունեություն է իրականացնում: Դա ընդունված չափանիշ է բազմաթիվ երկրներում: Ես ամեն ամիս հանդիպում եմ տարբեր մարզերի ուսուցիչների և տնօրենների հետ:

- Որո՞նք են այն հատկանիշները, որոնց շնորհիվ հասել եք հաջողության:

- Իմ բոլոր հաջողություններին հասել եմ ամենակարևոր հատկության շնորհիվ: Ինձ ասում են, որ ես նպատակասլաց եմ: Համաձայն եմ: Չի կարելի հրաժարվել նպատակներից: Շատ սիրում եմ հստակ ու լավ նպատակներ դնել իմ առջև: Նաև հավատը. ես լավատես եմ: Պետք է գտնել լուսավոր կետ և այդ լուսավորության վրա կառուցել միջանձնային հարաբերությունները: Նույնը վերաբերում է ապագայի հետ կապված միտումներին: Կիսով չափ դատարկ բաժակը ես միշտ կիսով չափ լիքն եմ տեսնում: Կան նաև հատկանիշներ, որոնք ինձ խանգարում են: Դրանք բոլորի մեջ էլ կան: Առաջ մարդկանց շատ էի հավատում, էդպես ավելի հեշտ է և՛ ապրելը, և՛ հարաբերվելը: Եթե ամեն մեկին կասկածես, ճիշտ չի լինի: Բայց վերջերս ուսումնասիրեցի որոշ իմաստունների գործերը, հատկապես չինական փիլիսոփայության մեջ խորացա, այնտեղ ասվում է. «Առաջ լսում էի մարդկանց գործերն ու հավատում դրանց, հիմա լսում եմ մարդկանց գործերի մասին ու նայում դրանց»: Հիմա փորձում եմ այդ կերպ ապրել: Հաճախ ինձ բռնացնում եմ այն մտքի վրա, որ հավատը մարդկանց հանդեպ ինձ խանգարել է:

- Ըստ Ձեզ՝ պատգամավորն ինչպիսի՞ հատկանիշ պետք է ունենա:

- Առաջին հերթին լավ հաղորդակցվող անձ լինի, հռետորության ձիրք ունենա, նպատակասլացություն, համոզմունքներ, հետևողականություն, մարդկանց հետ հավասարը հավասարի պես շփվելու, ընկալելու և տեսնելու կարողություն:

- Մանկավարժությունից, կրթությունից և խորհրդարանից դուրս ինչպիսի՞ նախասիրություններ ունեք:

- Ստեղծագործում եմ և բազմաթիվ մասնագիտական գրքերի հեղինակ եմ: «Դասղեկ» գիրք ունեմ, որն արդեն լայն ճանաչում ունի Հայաստանում: Երբ մարզերում հանդիպումներ էի ունենում, մարդիկ ինձ մոտենում էին ու ասում. «Ձեր դեմքն ինձ շատ ծանոթ է, դուք «Դասղեկ» գրքի հեղինակն եք, մենք այն կարդացել ենք, ու այն մեր սեղանի գիրքն է»: Սիրում եմ գրել, զբաղվել գիտական ուսումնասիրությամբ: Փորձում եմ մարդկանց համար ինչ-որ օգտակար բան անել, ինչ-որ բան թողնել: Շատ սիրում եմ կարդալ, սիրում եմ նաև ճամփորդել:

- Ի՞նչ խորհուրդ կտաք այն կանանց, որոնք ցանկանում են մտնել քաղաքականություն:

- Շատ բարդ հարց եք տալիս, այդ հարցին կպատասխանեմ այն ժամանակ, երբ ինքս կդառնամ լավ քաղաքական գործիչ, բայց ես նոր եմ սկսում, ինձ համար էլ այդ ուղին դեռ լիովին հստակ չէ, ու ես ինքս ունեմ առավել փորձառու պատգամավորների խորհրդի կարիքը, ինչը լսում եմ սիրով և ընդունում:

Լյուդմիլա Սարգսյան

«Բոլոր կանայք չէ, որ կարող են բավարարվել՝ զուտ կին լինելով և խոհանոցում աշխատելով»

Ծնվել է 1959 թ. մարտի 30-ին Թբիլիսիում:

1982 թ. ավարտել է Երևանի Էլեկտրոնային հաշվիչ մեքենաների տեխնիկումը: Տեխնիկ, մաթեմատիկոս-ծրագրավորող: 2011 թ. ընդունվել է Հյուսիսային համալսարանի ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա (ծրագրավորում) ֆակուլտետ:

1977-1979 թթ. Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտում աշխատել է լաբորանտ, 1984-1985 թթ. ԽՍՀՄ տեղական արդյունաբերության մինիստրության ԳԱՄ հաշվողական կենտրոնում՝ տեխնիկ, 1985-1995 թթ. առողջապահության նախարարության համակարգում՝ ճարտարագետ (Մ. Հերացու անվան բժշկական համալսարանի քիթ-կոկորդ-ականջ ամբիոնի ծրագիր): 1997-1999 թթ. եղել է «Արաբկիր» ՓԲԸ հաշվապահ:

2003 թ. Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության անդամ է, 2004թ.՝ ատենապետ:

2009 թ. ընտրվել է Երևանի ավագանու անդամ համամասնական ընտրակարգով «Հայ ազգային կոնգրես» կուսակցությունների դաշինքից:

2012 թ. մայիսի 6-ին Ազգային ժողովի պատգամավոր է ընտրվել համամասնական ընտրակարգով «Հայ ազգային կոնգրես» կուսակցությունների դաշինքից:

ՀՀ ԱԺ առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողովի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ է:

Ամուսնացած է, ունի երկու զավակ:

- Ի՞նչն էր քաղաքականությամբ զբաղվելու Ձեր դրդապատճառը:

- Քաղաքականությամբ զբաղվելու համար շարժառիթ պետք չէ: Մարդը կա՛մ մտածող է, կա՛մ մտածող չէ, կա՛մ մտահոգ է, կա՛մ՝ ոչ, կա՛մ տեսնում է, կա՛մ՝ ոչ: Ես և՛ մտահոգ եմ, և՛ տեսնում եմ, և՛ մտածում եմ: Երբեք ինձ չեմ համարել քաղաքական գործընթացներից դուրս, որովհետև մշտապես ինձ մտահոգել է այն, ինչ կատարվում է երկրում: Եվ բնական է՝ այդ մտահոգությունը քեզ ստիպում է կողմնորոշվել. քեզ ուղղակի տեսնում ես որպես քաղաքացի՞, որը դիտորդի կարգավիճակո՞ւմ է, թե՞ քաղաքացի, որը ցանկանում է

գործընթացներին ազդելու հնարավորություն ունենալ և այս երկրում ինչ-որ բարեփոխման գործընթացի մասնակցել:

Մեզանից յուրաքանչյուրն ինչ անում է, անում է զավակների, սերնդի համար, և եթե ինչ-որ հարցում թերանում է կամ անտարբեր է, ապա դա անտարբերություն է սեփական երկրի, ժողովրդի, սեփական զավակի նկատմամբ: Իսկ եթե անտաբեր չես, կամա-ակամա մասնակցում ես բոլոր քաղաքական գործընթացներին: Մենք ապրում ենք մի երկրում, որտեղ տարվող քաղաքականության հետևանքով ամեն քայլափոխի ոտնահարվում են մեր իրավունքները, ոչնչացվում է մեր ապագան: Սոցիալական վիճակն այնքան ծանր է, որ պետք է տեսնես պատճառա-հետևանքային կապը, որը մեկն է՝ իշխանությունները գալիս են, վերարտադրվում միայն մեկ նպատակով՝ պահպանելու և ավելի զարգացնելու սեփական հնարավորություններն ու լցնելու գրպանները:

Մեր ժողովուրդը քաղաքականացված է, և դրա ապացույցը մարտյան իրադարձություններն էին: Հնարավոր չէր անտարբեր մնալ այն ամենի նկատմամբ, ինչ տեղի էր ունենում մեր երկրում: Դրանից հետո մեր քաղաքացին դարձավ ավելի մտահոգ, քանի որ չի տեսնում ապագա և չի վստահում իշխանությանը: Իսկ երբ վստահություն չունես իշխանության նկատմամբ, վստահություն չունես վաղվա օրվա նկատմամբ…

- Հե՞շտ էր ձեր մուտքը քաղաքական կյանք:

- Ոչինչ այս կյանքում հեշտ չի լինում: Բնույթով սոցիալ-դեմոկրատ եմ, և այս կուսակցությունն ամենահոգեհարազատն էր ինձ համար, մանավանդ որ սա մայր կուսակցություն է, որից հետո առաջացել են այլ քաղաքական ուժեր՝ գիտակցելով, որ միայն համախմբված պայքարի արդյունքում կարող ես խնդիր լուծել: ՍԴՀԿ շարքերն ընդունվել եմ 2003-ին և յոթ ամիս անց դարձել եմ ՍԴՀԿ ատենապետ: Շատ դժվար էր: Տղամարդկանց կողմից հեշտ չէ ընդունել կին լիդերի գործունեությունն ու գոյությունը: Սկզբնական շրջանում վարչությունը, որի առաջարկությամբ դարձա ատենապետ, մարդիկ էին, որոնք ինձ գործի մեջ տեսել էին և համարեցին, որ ես այն մարդն եմ, որը կարող է ստանձնել այդ պարտականությունները:

Իհարկե, այդ ժամանակ ես պատրաստ չէի մտնելու մեծ քաղաքականություն, որովհետև կուսակցական առաջխաղացման ճանապարհը շատ կարճ տևեց, և ես ամեն ինչ սովորում էի: Կային խորչընդոտներ սփյուռքի կողմից, որովհետև 125 տարվա պատմության մեջ կին ատենապետ չի եղել, հատկապես՝ հայաստանյան կառույցում, քանի որ Հայաստանը միակ երկիրն է, որտեղ պաշտոնապես կուսակցությունը գրանցված է և ի վիճակի ազդելու քաղաքական գործընթացների վրա: Կուսակցությունը միայն

Հայաստանում կարող է գալ իշխանության, և հանկարծ՝ կին ղեկավար, սփյուռքի կամքից անկախ, ինքնուրույն վարչության որոշմամբ: Հեշտ չէր ընդունելը: Ինչպես տեսնում եք, մինչ այսօր էլ հեշտ չէ այդ փաստն ընդունել: Բայց դաշտը ինձ ընդունել է:

- Ձեր ո՞ր հատկանիշների համար վարչությունը որոշեց, որ յոթամսյա կուսակցիցը պետք է դառնա ատենապետ:

- Երևի այդ պահին ամենահարմար մարդը ես էի: Ամենագործունյան ես էի: Կարծում եմ, որ դա հատկանիշների կոմպլեքս է: Եթե մեկը բացակայում է, ու դու թերանում ես, ապա այդ կայացումը համարյա անհնար է դառնում: Պետք է կարողանաս մարդկանց հետ ճիշտ հարաբերվել, կազմակերպչական ջիղ ունենաս, հավատաս այն ամենին, ինչ անում և ասում ես: Ոչ թե մարդկանցից պահանջես, որ քեզ հարգեն, այլ այդ մարդիկ ընդունեն, որ դու արժանի ես գնահատանքի: Եվ դու դա ամեն օր պետք է ապացուցես:

Իհարկե, սրան գումարած նաև խառնվածքը, վճռականությունը, հստակ դիրքորոշումը: Շատ կարևոր է նաև մարդկային հմայքը: Իսկ կնոջ դեպքում դա շատ կարևոր է: Եթե որպես կին հմայիչ չես, ավելի քիչ ես ընդունելի տղամարդկանց կողմից: Հմայքը պետք է ներքուստ լինի, աշխատանքի ընթացքում օգնի, որ մարդկանց կողմից ընդունելի դառնաս: Չեմ կարծում, որ լիդերը նա է, ով ամեն վայրկյան ձեռքով հարվածում է սեղանին կամ տղամարդու պահվածք է որդեգրում: Կին լիդերն առանձին դեպք է: Կին լիդերը պետք է մնա կին, բայց նրա մեջ այնքան իմաստություն և վճռականություն լինի, որ տղամարդը տեսնի այդ կնոջը:

- Այսինքն՝ կանայք ուրի՞շ ոճով պետք է մտնեն քաղաքականություն:

- Միանշանակ, առ այսօր մեր քաղաքական դաշտը ճանաչել է շատ կանանց և մտածել, որ կին լիդերը պետք է տղամարդու նման լինի: Ես այդպես չեմ մտածել և երբեք այդպիսին չեմ դառնա: Կարծում եմ, որ պետք է կարողանալ ուրույն կերպար ստեղծել, դա պետք է քոնը լինի, չպետք է նմանվես: Որ տեսնեն՝ կա նաև բոլորովին այլ կերպար, որն ավելի ընդունելի է, թեպետ կին է: Ե՛վ կանացի, և՛ համառ, և՛ գեղեցիկ, և՛ պայքարող: Շատ կարևոր է այս ամենը: Հանձին ինձ պետք է տեսնեն մեկ այլ լիդերի, որը գիտի պայքարել, վճռական է, բայց երբ դրա անհրաժեշտությունը չկա, խրոխտ կեցվածքի կարիք չկա, շարունակի մնալ կին:

- Թերևս Ձեր օրինակը կարելի է բացառիկների շարքը դասել, խոստովանենք, որ այսօր Հայաստանում կին քաղաքական գործիչների նկատմամբ խտրականություն կա: Նրանց հանդեպ այլ վերաբերմունք կա: Ինքներդ զգացե՞լ եք այդ խտրականությունը:

- Միանշանակ: Տղամարդիկ կաղապարված են հայկական մենթալիտետով: Դա ինձ էլ է հարազատ, ես ընդունում եմ այն, ինչ հայկական է, բայց պետք է կարողանալ տարբերել կանանց տարբեր տեսակներ: Բոլոր կանայք չէ, որ կարող են բավարարվել՝ զուտ կին լինելով և խոհանոցում աշխատելով: Պետք է հասկանալ նաև, որ կան այլ տեսակի կանայք, որոնք կարող են ավելին անել, քան տասնյակ տղամարդիկ: Հետևաբար նման կնոջը չի կարելի նույն չափանիշներով գնահատել: Պետք է կարողանալ դա տեսնել: Եվ դա խնդիր է այսօր:

Մի հանգամանք էլ կա, երբ բոլորը տղամարդիկ են, իսկ դու միակ կինն ես, տղամարդկանց համար դիսկոմֆորտ է առաջանում, որովհետև սովոր են այլ ոճով խոսել, այլ կերպ նստել, այլ կարգի արտահայտություններ անել, իսկ կնոջ ներկայությունը նրանց զսպում է, եթե, իհարկե, այն կինն է, որի ներկայությամբ ունեն այդ զսպվածությունը: Դա կաշկանդում է տղամարդկանց, ես դա հասկանում եմ, երբեմն ներողամտաբար թույլ եմ տալիս որոշ չափով ազատ զգալ իրենց, երբեմն փորձում եմ այնպես պահել, որ շատ «չընդարձակվեն», բայց դա նրանց համար դիսկոմֆորտ է: Բայց երբ քեզ ընդունում են, և դառնում ես իրենց մի մասնիկը, իրենք էլ սկսում են քո կարևորությունը տեսնել ու գնահատել: Դաշտն ինձ ընդունել է:

Կնոջը հեշտ չեն ընդունում, առավել ևս, երբ այդ կինը կուսակցության ղեկավար է: Դեպքերը շատ են, երբ մեկ-երկու ամսով ստեղծվում են կուսակցություններ, կինը դառնում է ղեկավար, և կարճ ժամանակ անց կուսակցությունը լուծարվում է: Կամ տղամարդիկ կարողանում են վերցնել այդ պաշտոնը: Բարեբախտություն էր, չգիտեմ, թե ինչպես որակեմ իմ վիճակը, բայց ես պայքարել եմ, մեծ փորձություններով եմ անցել: 2004-ին ամիսներ շարունակ Սփյուռք-Հայաստան պատերազմն էր, 2009-ին կուսակցությունը պառակտվեց, և ես լուրջ դժվարություններով անցա: Բայց կա թիմ, կան քաղաքական այրեր, որոնք գնահատել ու կարևորել են ինձ, և նրանց բարոյական աջակցությամբ ես մնացի կուսակցությունում, նաև Հայ ազգային կոնգրեսի, որն անմիջական մասնակցություն չուներ, բայց գիտեի, որ նրանք ցանկանում են, որ պահեմ այս ամենը:

- Համամի՞տ եք, որ այսօր քաղաքական դաշտում կանայք մեծ մասամբ կարծես անգլիական թագուհու կարգավիճակում են:

- Որոշ չափով՝ այո: Համենայն դեպս, կան մի քանի ակտիվ կանայք: Ընդունելի լինեն ինձ համար, թե ոչ, բայց նրանք լուրջ քաղաքական ազդեցություն ունեն. Հերմինե Նաղդալյան, Զարուհի Փոստանջյան, Հեղինե Բիշարյան, Նաիրա Զոհրաբյան: Նրանք գործունեություն են ծավալում շատ ավելի արդյունավետ, քան իրենց տղամարդ կուսակիցները:

Չեմ կարող չնկատել և չգնահատել դա: Այլ հարց է, թե յուրաքանչյուրին ինչպես եմ վերաբերվում: Բայց որ նրանք դերակատար են և ավելի նվիրված են իրենց կուսակցություններին, քան շատ տղամարդիկ, ակնհայտ է: Բոլոր 131 պատգամավորների թվում, ես էլ ներառյալ, հինգ կին կա, որոնք քաղաքական գործունեությամբ են զբաղվում և փորձում են ազդել քաղաքական գործընթացների վրա:

Մյուսները պետք է կողմնորոշվեն՝ անգլիական թագուհի՞ են, թե՞ ոչ, արձանիկի դերո՞ւմ են լինելու, թե՞ կարողանալու են այլ դեր ստանձնել: Ես ուրախ կլինեի, եթե նրանք ստանձնեին այդ դերը, որովհետև կինն իր զսպվածությամբ, իմաստությամբ, վճռականությամբ և անշահախնդրությամբ, որն ավելի մեծ է, քան տղամարդկանց մեջ, կարող է լրջագույն ազդեցություն ունենալ հինգերորդ գումարման Ազգային ժողովում:

- Հավանաբար կհամաձայնեք, որ կան բազմաթիվ խելացի կանայք, որոնք կարող են քաղաքական գործունեություն ծավալել ու լուրջ հաջողություններ ունենալ, սակայն ասպարեզում չկան: Ինչո՞ւ: Ո՞վ է խոչընդոտում:

- Առկա է նաև մենթալիտետի հարցը. կինը միշտ չէ, որ կարողանում է հաղթահարել ներքին խնդիրներն ու հրապարակ դուրս գալ: Դա գալիս է մանկությունից, ընտանիքից: Մանկուց ազատ մարդ եմ եղել, հնարավորություն է տրվել ազատ կարծիք հայտնելու, ինչի համար շնորհակալ եմ հորս, որ ինձ տվել է մեծ ռեսուրս կայանալու համար: Ես ազատ եմ մեծացել, բայց միշտ պատասխանատու: Այդ երկուսի միաձուլումը, անձնական խառնվածքն ու տեսակը հնարավորություն տվեցին կայանալու: Նաև ճիշտ ժամանակին ճիշտ տեղում հայտնվեցի: Գուցե այլ կուսակցության անդամ լինեի՝ առաջին դեմք չլինեի:

Բայց ես գիտեմ, որ որտեղ էլ լինեի, տեսանելի կլինեի: Սակայն թող սխալ կարծիք չստեղծվի, թե այն, ինչ անում եմ, միայն տեսանելի լինելու համար է: Այն, ինչ անում եմ, լուրջ անհանգստության արդյունք է, և կատարվածը դառնում է տեսանելի: Պատճառը, թե ինչու կանայք քաղաքականության մեջ

քիչ են, վախն է, վճռականության պակասը, ինքնավստահության պակասը, ոչ բարեհաճ վերաբերմունքը, ամուսնու կարծիքը, երեխաների մոտեցումը: Իմ աղջիկներն ինձ նման են, ես էլ նրանց եմ այդպես դաստիարակել: Նրանք անտարբեր չեն որևէ բացասական երևույթի նկատմամբ, իսկ այդ դեպքում նրանք չեն կարող չխրախուսել քո գործունեությունը: Ես գտնում եմ, որ կան շատ խելացի կանայք, մեզանից էլ շատ խելացի, բայց ինչ-որ բան պակասում է: Ես քիչ առաջ նշեցի մի շարք հատկանիշներ, որոնք մարդ պետք է ունենա հաջողության հասնելու համար:

- Համաձա՞յն եք, որ Ձեր քաղաքական կարիերայում սեպտեմբերից նոր փուլ է սկսվում:

- Անշուշտ, կարող եմ նաև ասել, որ չնայած իմ կուսակցական փորձառությանը, խորհրդարանական աշխատանքը մութ անտառ է: Եվ ես, իրոք, դեռ չեմ էլ պատկերացնում իմ գործունեությունը, թե ինչ ձևով եմ այն իրականացնելու: Եթե ասեի՝ պատկերացնում եմ, միամիտ կլինեի: Սա դաշտ է, որն ինձ ծանոթ չէ, այստեղ պետք է հարաբերվես նաև իշխանական հատվածի հետ, տարբեր քաղաքական ուժերի հետ: Եթե ճանապարհ անցած չլինեի, կասեի՝ խնդիր չկա: Քանի որ մենք յոթ հոգով ենք ներկայացված, մեզանից յուրաքանչյուրի անելիքը շատ կարևոր է և պետք է տեսանելի լինի: Մենք ընտրվել ենք 108 հազար մարդկանց կողմից և պատասխանատվություն ենք կրում այդ ձայների համար:

- Մանդատ ստանալուց հետո Ձեր կյանքում ի՞նչ փոխվեց:

- Բացարձակապես ոչինչ: Չէր էլ կարող փոխվել: Մանդատի ո՛չ առավելությունն եմ զգում, ո՛չ էլ դա կարող է երջանկացնել: Դա լրջագույն պատասխանատվություն է, որովհետև այդքան մարդ վստահել է: Մենք չենք գնում Ազգային ժողով վայելելու, այլ գնում ենք աշխատելու: Երբ տեսնում եմ, թե որոշ պատգամավորներ ինչպես են կահավորում իրենց աշխատասենյակը, այն տպավորությունն է, որ հավիտյան այնտեղ են լինելու, քեֆեր են կազմակերպելու:

- Իսկ Դուք ձեր սենյակում ինչ-որ փոփոխություններ կատարե՞լ եք:

- Խնդրել եմ ինչ-որ բաներ փոփոխել, միգուցե ծաղիկներ դնեմ պատուհանի գոգին, որ պայծառացնեն մթնոլորտը:

- Արդեն որոշե՞լ եք, թե խորհրդարանական որ հանձնաժողովում եք աշխատելու:

- Մեր կուսակցությունը սոցիալական ուղղվածություն ունի, և այնտեղ ներկայացնելու եմ սոցիալական հանձնաժողովը, ինչպես նաև առողջապահության, մայրության, մանկության հանձնաժողովը, դա էլ տրամաբանական է, միակ կինն եմ խմբակցությունում, և երբ խմբակցության տղամարդիկ խնդրում են, չեմ կարող մերժել:

- Արդեն ծրագրե՞լ եք՝ ինչպիսի օրինագծեր, ինչպիսի առաջարկություններ եք ներկայացնելու այդ հանձնաժողովներում:

- Սուտ կլինի, եթե ասեմ, թե հստակ գիտեմ, ինչ եմ անելու: Նախ՝ պետք է հասկանամ, թե այդ հանձնաժողովն ինչ խնդիր է ցանկանում լուծել: Ինչ ակտիվությամբ է աշխատելու: Հաշվի առնենք, որ այդ հանձնաժողովում հիմնականում հանրապետականներն են լինելու: Բնականաբար, եթե հանրապետականներն իրենց մեջ կամք չգտնեն աշխատելու, ապա հանձնաժողովի աշխատանքը չի կարող արդյունավետ լինել. ինչ նախաձեռնություն էլ ներկայացնես, այնտեղ ոչնչանալու է: Մենք դա հասկանում ենք, սակայն պետք է փորձենք ազդել, նախաձեռնություններով խեղդել, համախոհներ գտնել:

- Ինչպիսի՞ն է Ձեր վերաբերմունքը գենդերային քվոտաներին:

- Ընդհանուր առմամբ, կողմ չեմ, երբ կանայք քվոտաներով են մտնում ԱԺ, բայց հասկանում եմ իրականությունը, այդ կերպ է լուծում տրվել խնդրին: Կանայք պետք է շահագրգռված լինեն, որ Ազգային ժողովում իրենց ներկայացուցիչներից շատ լինեն, բայց տեսեք՝ ինչ տեղի ունեցավ: Իրականում մենք պետք է 20 տոկոս կազմեինք, և կարծես թե ցուցակները կազմվել էին օրենքին համապատասխան, բայց ոտնահարվեցին կնոջ իրավունքները, ընտրություններից հետո 6 կնոջ հարկադրեցին ինքնաբացարկ ներկայացնել: Շատ վատ է, որ այդպես է: Լավ կլիներ, որ մրցակցություն լիներ նաև կանանց մեջ, դա առավել արդյունավետ կլիներ, և առավել տեսանելի կլիներ նրանց գործունեությունը:

- Այնուամենայնիվ, լուծումն այն չէր, ինչ սպասում էին:

- Այո, լուծումն այն չէր, որովհետև կիրառվող մեթոդներն անազնիվ են: Կանանց պետք է պահպանեին, որովհետև կանայք Ազգային ժողովում փոքրամասնություն են: Այստեղ խտրականություն կա կանանց նկատմամբ:

- Ի՞նչ եք կարծում, եթե մանդատից հրաժարվող կանայք ունենային անուն կամ կշիռ, հե՞շտ կլիներ նրանց ստիպել հրաժարվել մանդատից:

- Կարծում եմ՝ ավելի դժվար կլիներ, բայց կան կուսակցություններ, որոնք այլ տեխնոլոգիաներ են կիրառում, մինչև ընտրությունները հրաժարականների ու ինքնաբացարկների դիմումները հավաքում են, հետո խնդիր չի առաջանում: Եթե կա այդ մեթոդը, որքան ուզում ես ազդեցիկ եղիր, եթե քեզ ստիպում են նախօրոք դիմում գրել, կա՛մ պետք է այդ դիմումը չգրես, բայց ցուցակում պահպանվես, կա՛մ էլ ցուցակում չմնաս: Նրանք պետք է հասկանան՝ ինչու են գալիս և ինչ են ուզում:

- Ինչո՞ւ եք մտել քաղաքականություն, ի՞նչն եք ուզում փոխել:

- Ես ուզում եմ, որ քաղաքականությունն ավելի մարդկային կերպարանքով լինի, ավելի բարոյական լինի, որի արդյունքում հասարակությունն էլ բարոյական դառնա, որ քաղաքականության մեջ ստեղծենք մեխանիզմներ, որոնց միջոցով ժողովուրդն ազատ ընտրելու և իշխանափոխություն իրականացնելու հնարավորություն ունենա:

Ապրենք մի երկրում, որտեղ սահմադրությունն օրենք է բոլորի համար, երկիր, որտեղ օրենքը պաշտպանում է մարդուն, ոչ թե օրենքում սողանցքներ թողնեն, որ տարբեր մեխանիզմներով մարդուն ճնշեն: Երկիրը դառնա նորմալ երկիր: Հակառակ դեպքում մեզանից յուրաքանչյուրը կարող էր առավել հաճելի զբաղմունք գտնել: Չնայած ես քաղաքականությունը զբաղմունք չեմ համարում: Սա մի ոլորտ է, որտեղ ես ինձ լավ եմ զգում, որտեղ սրտացավ եմ: Ես քաղաքականության մեջ եմ, որովհետև ուզում եմ բարեփոխում իրականացնել: Ուզում եմ, որ քաղաքացին պահանջատեր լինի ու հետևողական իր պահանջատիրությամբ, հասկանա, որ յուրաքանչյուր քաղաքացի ավելի մեծ արժեք ունի, քանի եկող ու գնացող իշխանությունները:

- Ինչպե՞ս եք գնահատում ՁԼՄ-ների վերաբերմունքը Ձեր նկատմամբ:

- ՁԼՄ-ներն իմ նկատմամբ բարեհաճ են և հանդուրժող, կարևորում եմ նրանց դերն ու նշանակությունը մեր կայացման գործում: Ես միշտ աջակցություն զգացել եմ: Ունեմ բազմաթիվ լրագրող ընկերներ և որևէ խնդիր չունեմ, երբ ինձ պետք է ինչ-որ բան ասել:

Դուք շատ լավ գիտեք, որ բազմաթիվ քաղաքական գործիչներ կան, որոնք տարին մեկ անգամ խոսելու հնարավորություն չունեն: Վաղուց այդ մթնոլորտը հաղթահարել եմ: Ես էլ եմ ունեցել ճանաչման խնդիր, բայց դա մեկ տարի է տևել, երբ ես դեռ լայն քաղաքական ճանաչում չունեի: Դա շատ

արագ հաղթահարվեց: Մամուլը բարեկամ եմ համարում, բայց որոշակի զգուշավորություն պահելով:

- Իսկ կին քաղաքական գործիչների նկատմամբ լրատվամիջոցների վերաբերմունքն ինչպե՞ս կգնահատեք:

- Չեմ ուզում մասնավորեցնել, չեմ մտածում, որ կանանց նկատմամբ լավ են կամ վատ են, դա հավանաբար անհատական վերաբերմունք է, ըստ տվյալ կնոջ վարքագծի և ըստ նրա գործունեության: Ինձ էլ են հարվածել, բայց ոչ թե որպես կնոջ են հարվածել կամ նսեմացրել, այլ իմ քաղաքական դիրքորոշման համար: Եթե անընդունելի է եղել, եղել է սարկազմ, քննադատություն, դա նորմալ եմ համարում:

- Այս խորհրդարանական ընտրություններում շատ էին մեծամասնականով առաջադրված կին թեկնածուները: Ըստ ձեզ՝ ի՞նչը խանգարեց, որ նրանք չկարողացան հայտնվել խորհրդարանում:

- Այդ կանայք օլիգարխներ չէին, և նրանց դիմաց դրվել էին օլիգարխ թեկնածուներ: Եվ այդ շանսն արդյունավետ օգտագործել հնարավոր չէր: Ես ողջունում եմ այդ կանանց, որ համարձակություն և քաղաքացիական դիրքորոշում ունեցան և իրենց թեկնածությունը դրեցին:

- Նրանք քաղաքական բոլո՞ր տեխնոլոգիաներն օգտագործեցին նախընտրական քարոզարշավի ժամանակ:

- Գիտեք, հնարավոր չէ բոլոր տեխնոլոգիաներն օգտագործել, երբ ֆինանսական միջոցներ չունես: Շատ լավ գիտակցելով, որ համարյա շանս չունեն, կանայք մարտի մեջ նետվեցին և ցույց տվեցին, որ արժանի են: Եվ նրանք շատ ավելի համարձակ են, քան յուրաքանչյուր օլիգարխ: Ես շատ կցանկանայի, որ այդ փորձերը բազմիցս կրկնվեին: Մի օր հաջողվելու է:

Զարուհի Փոստանջյան

«Մարդը պետք է լինի քաղաքացի, իմանա իր քաղաքացի լինելու պարտականությունները»

Ծնվել է 1972 թ. հունվարի 16-ին Երևանում:

1994 թ. ավարտել է Երևանի «ՄՅՈՒԴ» իրավաբանական ինստիտուտը, ստացել իրավաբան-իրավագետի մասնագիտություն: 1999-ից Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի անդամ է: Վերապատրաստվել է ԱՄՆ-ում, Շվեդիայում և Լեհաստանում:

1993-1996 թթ. աշխատել է Հայաստանի Հանրապետության բնապահպանության դատախազությունում որպես ավագ տեսուչ, 1998-1999 թթ.՝ «Հելսինկյան ընկերություն» հասարակական կազմակերպությունում, իսկ 1999-2000 թթ.՝ «Կանանց իրավունքների կենտրոն» հասարակական կազմակերպությունում որպես իրավաբան, 1999-2000 թթ.՝ «Դիկէ» իրավաբանական ծառայություն» ՍՊԸ-ում՝ որպես փաստաբան: 2000-2002 թթ. «Հայ փաստաբանների միջազգային միություն» հասարակական կազմակերպությունում եղել է մի շարք ծրագրերի ղեկավար, 2004-2005 թթ.՝ «Էնդաքսի» ՍՊԸ-ի տնօրեն, 2006-2007 թթ.՝ ՀՀ ըմբշամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի իրավաբան: 2000-2007 թթ. եղել է «Փաստաբաններ մարդու իրավունքների համար» հասարակական կազմակերպության նախագահ, մի շարք ծրագրերի ղեկավար, միաժամանակ եղել է «Պրոմեթևս» և «Երկիր մեդիա» հեռուստաալիքներով հեռարձակվող «Փաստաբան» հեռուստահաղորդման ծրագրի հեղինակ և վարող:

«Զորավար Անդրանիկ» հայոց համազգային միության կողմից պարգևատրվել է պատվոգրով, շքանշանով և հուշամեդալով՝ մասնագիտական հմուտ կարողությունների համար, իսկ Փաստաբանների պալատի կայացման գործում ներդրած մեծ ավանդի համար՝ ՀՀ փաստաբանների պալատի պատվոգրով:

Զարուհի Փոստանջյանը «Ժառանգություն» կուսակցության վարչության անդամ է, 2007-2012 թթ.՝ Ազգային ժողովի պատգամավոր (համամասնական ընտրակարգ, «Ժառանգություն» կուսակցություն): 2012 թ. մայիսի 6-ին Ազգային ժողովի պատգամավոր է ընտրվել համամասնական ընտրակարգով «Ժառանգություն» կուսակցությունից:

Ամուսնացած է, ունի չորս երեխա:

- Մինչ պատգամավոր դառնալն ո՞վ էր Զարուհի Փոստանջյանն ու ինչո՞վ էր զբաղվում:

- Ծավալել եմ փաստաբանական գործունեություն և շուրջ ինը տարի եղել եմ փաստաբան: Ես եմ ընտրել այդ մասնագիտությունը: Քաղաքականության մեջ ընդգրկվել եմ՝ քաղաքական անձնավորություն չլինելով: Մտել եմ այդ գործընթացների մեջ որպես իրավաբան, քանի որ այդ ժամանակ «Ժառանգություն» կուսակցության գրասենյակը փակ էր, ես ներկայացնում էի կուսակցության շահերը տարբեր պետական ատյաններում և դատարանում:

- Դա ո՞ր թվականն էր:

- 2006 թվականն էր: Ապօրինի փակել էին կուսակցության գրասենյակը, համակարգչից տարել էին տեղեկատվություն...

- Փաստորեն «Ժառանգությանն» այդպես եք հանդիպել:

- Այո, այդ հանգամանքներում: Շուրջ մեկ տարի գրասենյակը փակ էր, և այդ մեկ տարվա ընթացքում, գրասենյակի բացման գործընթացի մեջ ներգրավված լինելով, ավելի մտերմացա կուսակցության անդամների հետ և հենց գրասենյակի բացման ժամանակ, երբ փաստաթղթերն արդեն պատրաստ էին, Ռաֆֆի Հովհաննիսյանից ստացա հրավեր-առաջարկ՝ մասնակցելու խորհրդարանական ընտրություններին:

Այդ գաղափարն ու Հովհաննիսյանի հեղինակությունն ինձ հնարավորություն ընձեռեցին առաջարկությունն ընդունելու: Չեմ փոշմանել, թեպետ երբևիցե չէի մտածել, որ կարող եմ լինել քաղաքականության մեջ: Ես եկել եմ ոչ որպես կուսակցական: Առաջին անգամ պատգամավոր եմ դարձել, երբ կուսակցական չէի, և հիմա հպարտ եմ ու կարծում եմ, որ քաղաքական կուսակցություններում պետք է մաքրություն լինի, պարկեշտություն և ազնվություն:

- Դուք մտաք քաղաքականություն, երբ արդեն հայտնի փաստաբան էիք: Նպատակը ո՞րն էր:

- Բոլորիս նպատակն է ունենալ այնպիսի հայրենիք, որն ազգահավաքի, ոչ թե արտագաղթի կենտրոն լինի: Մեկ-մեկ մտածում եմ՝ եթե լինեի իմ նախկին աշխատանքի մեջ, ավելի պիտանի կլինեի, բայց երբ նման մտքեր եմ արտահայտում, փորձում են առարկել:

Չգիտեմ՝ որն է ճիշտ: Միգուցե այն ոլորտում ավելի արդյունավետ աշխատեի: Բայց իմ նպատակն է, որ ունենանք մեր երազած ու մեզ վայել պետությունը, որը լինի բոլորինը:

- Բազմաթիվ գործեր եք կատարել այս հինգ տարվա ընթացքում: Հետադարձ հայացք գցենք այդ ժամանակահատվածին, ինչպե՞ս այն կբնութագրեք:

- Շատ կարևոր էր ինձ համար, թե ինչպես մտա քաղաքականություն: Ես կուռքեր չեմ ստեղծում, բայց ինձ համար կարևոր էր Հովհաննիսյան քաղաքացու կերպարը: Հենց քաղաքացի լինելով՝ նա 21 հարց էր հղել Ռոբերտ Քոչարյանին, և հենց այդ հարցերի կարևորությունն ինձ համար շատ էական էր: Մարդը պետք է քաղաքացի լինի, իմանա իր քաղաքացի լինելու պարտականությունները:

Եվ ես շատ եմ կարևորում, որ այս հինգ տարվա ընթացքում «Ժառանգությունը»՝ իր բոլոր մասնակիցներով, քաղաքացիական հասարակության ակունքում էր կանգնած, եղավ բոլոր քաղաքացիների կողքին ու նրանց էլ սովորեցրեց լինել քաղաքացի, ունենալ պարտականություններ:

Հիմա, նայելով քաղաքացիական հասարակության այս բոլոր խմբերին, այնքան հպարտ եմ, որ մենք եղել ենք այդ բոլոր խմբերի հետ, նրանց ակունքներում, և նրանք, զինված քաղաքացիական պատկանելությամբ և մտայնությամբ, ներկա են բոլոր տեղերում: Այդ հինգ տարիներն այս առումով շատ կարևոր էին:

- Գո՞հ եք Ձեր կատարած աշխատանքից:

- Չէ, իհարկե գոհ չեմ: Այդ հինգ տարվա ընթացքում ունեցել ենք նաև սխալներ: Իսկ ամենաաններելի սխալն այն էր, որ չկարողացանք մեր քաղաքացիներին այնքան պաշտպանել, որ մարտի 1-ի զոհեր և վիրավորներ չունենայինք: Մարդիկ բանտախցում գտնվեցին անօրինական և դուրս եկան առողջական, նյութական ու բարոյահոգեբանական կորուստներով: Սա ամենամեծ սխալն էր, և դա անթույլատրելի էր:

- Երբ ասում են Մատաղիսի գործ, նշում են, որ դա Զարուհի Փոստանջյանի հաղթանակներից էր: Չե՞ք կարծում, որ դա լուրջ ձեռքերում էր:

- Իհարկե, դա ձեռքքերում էր: Մատաղիսի գործերով պաշտպանական խմբի համար առաջին ատյանի դատավարությունից հետո պարզ էր, որ միայն

գրագետ պաշտպանական գործունեությամբ չես կարող համատարած ապօրինության դեմ պայքարել:

Այն ժամանակ ստեղծվեց այդ փոքրիկ խումբը, ամեն օր հավաքվում էինք, քննարկում, թե ինչ ենք անելու, որպեսզի այդ երիտասարդներին այդ ճիրաններից ազատենք: Մենք պայքարում էինք 2004 թվականից: Այդ ժամանակվանից ձևավորվում էր քաղաքացիական հասարակությունը: Մենք ունենք երիտասարդներ, որոնք մտահոգ են, անտարբեր չեն ու արտահայտում են իրենց մտահոգությունները:

- Ձեզ շատ են տեսնում փողոցային պայքարում, Դուք մասնակից եք գրեթե բոլոր բողոքի ակցիաներին: Ճի՞շտ եք համարում, որ պատգամավորը դուրս գա փողոց, բղավի, պայքարի:

- Գիտեք, բողոքելն ու իրավունքներին տեր կանգնելն իրականացվում է տարբեր եղանակներով, այդ թվում՝ տվյալ հաստատության առջև կանգնելով և բողոքի ձայնը բարձրացնելով: Ես ոչ միայն տիրապետում եմ այդ գործիքներին, այլև շատ կարևորում:

Պետք է դատական հայցեր հարուցես, այդ հաստատությունների, պետական պաշտոնյայի առջև քո բողոքի ձայնը բարձրացնես: Մարդիկ պետք է հասկանան, որ եթե փորձում են ուժ բանեցնել և որոշ չափով առավելություն ունեն, ապա մենք էլ այլ տեղերում ունենք առավելություն: Մշտապես պետք է միջոցներ փնտրես՝ ազդելու կառավարության կայացրած որոշումների վրա: Դրանք պետք է բխեն հասարակության շահերից:

- Արդեն երկրորդ անգամ եք ժողովրդի կողմից ընտրվում պատգամավոր: Ի՞նչ կցանկանայիք փոխել:

- Պետք է հիմնադրենք մեր ուզած պետությունը, դա դեռ չենք արել: Ամեն օր պետք է զբաղվենք մեր մտայնության փոփոխությամբ և հասկանանք, որ մենք ենք այս իրավունքների կրողը: Այս հողը և նրա բարիքները պատկանում են մեզ: Աստված մեզ է պարգևել այս հողը, ասել է՝ ապրեք, վայելեք, խոսեք ձեր մայրենի լեզվով, ունեցեք ձեր պետությունը:

Հիմա մենք մեզ օտարել ենք այս ամենից, ասում ենք՝ այստեղ հնարավոր չէ ինչ-որ բան փոխել: Չէ, մե՛նք պետք է փոխենք: Եթե գիտակցում ես, որ սա քոնն է, ուժեղ ես, իսկ երբ մտածում ես, որ սա քոնը չէ, ստրուկ ես, ոչինչ չի կարող ստացվել, արդեն թուլանում ես, պարտվող ես ու խուսափում ես ամեն ինչից: Լինել պահանջատեր ու տեր կանգնել սեփական իրավունքներին: Տեր կանգնել հողին, մշակույթին և քաղաքակրթությանը:

- Տիկին Փոստանջյան, ակնհայտ է, որ Ձեր կուսակցությունը ձեզ աջակցում է, օգնում, իսկ ԱԺ-ում երբևէ անհարմարավետություն զգացե՞լ եք, անվստահ հայացքներ զուտ այն պատճառով, որ կին եք:

- Փորձում են շահարկել, որ ես կին եմ: Երբեմն հայտարարություններ են անում, թե կին է էլի, մի բան ասել է: Տղամարդիկ այս կերպ են փորձում վերաբերմունք ցուցաբերել:

Նախընտրում եմ, որ տղամարդիկ ուժեղ, իրենց բարձրության վրա լինեն, և թուլության նշան եմ համարում, երբ կնոջը փորձում ենք որակել կամ գնահատական տալ ըստ իր սեռի պատկանելության: Ես կարծում եմ, որ դա տղամարդու թուլության նշան է:

- Ասում են՝ կանայք խոշորացույցի տակ են, և նրանց անգամ ամենաչնչին սխալն ավելի խիստ է լուսաբանվում:

- Դե իհարկե, այդպես է, քանի որ մենք փոքրամասնություն ենք խորհրդարանում, և ավելի նկատելի է մեր գործունեությունը: Բայց եթե զբաղվում ես հանրային գործունեությամբ, պետք է լինես հանրային ու թափանցիկ: Սա նաև պայման է. դու պատրա՞ստ ես լինել թափանցիկ, հանրային, մատչելի:

Դա պարտադրում է քո գործունեությունը. պատրաստ լինել միշտ ուշադրության կենտրոնում, թիրախի ու քննադատության կիզակետում գտնվելուն, աշխատել թափանցիկ ու լինել բաց:

- Դժվար չէ՞ պատգամավորի գործունեությունը:

- Իհարկե դժվար է, պատասխանատու: Ոչ միայն դժվար է, աշխատանքի բնույթից ելնելով՝ շփվում ես տարբեր մարդկանց ու տարբեր աշխարհների հետ, այնքան պատմություններ ես լսում, տեսնում և հասկանում, որ ամեն ինչ մեր երկրում խախտված է:

Մարդկանց հարկավոր է նվազագույն արդարություն, որ գոնե մի քիչ իրենց լավ զգան իրենց երկրում: Այդ զգացման բացարձակ պակասից է, որ սկսում ես հոգեպես տանջվել: Մնացյալ հարցերում դժվարանալ չունեմ և սիրով եմ աշխատում:

- Ձեր բնավորության ո՞ր հատկանիշների շնորհիվ եք կարողացել հասնել հաջողությունների:

- Անսահման հավատը, մարդկանց սիրելը և պատասխանատվության վախն ու զգացողությունը, որ ապագայում, երբ իմ երեխան դառնա իմ տարիքին, չասի՝ այս ի՞նչ եք թողել մեզ: Երևի դա:

- Զարուհի Փոստանջյանը համարվում է ամենազգացմունքային պատգամավորը: Զգացմունքային լինելը Ձեզ խանգարո՞ւմ է, թե՞ ընդհակառակը՝ առավելություն է:

- Եթե չունենաս զգացմունքներ, չես կարող հաղթահարել: Շատ հաճախ քաղաքականության մեջ գործիքներդ սակավ են, ու չես կարող ոչինչ անել: Այդ ժամանակ դա պետք է ապրես, քո մեջ այդ զգացմունքայնությունը չի կարող չլինել, դա պետք է ապրես և դրա կրողը լինես, որպեսզի կարողանաս ինչ-որ բանի հասնել:

- Կա՞ իդեալական պատգամավորի կերպար: Ինչպիսի՞ն պետք է լինի պատգամավորը:

- Ընդհանրապես ցանկացած պետական պաշտոնյա, որը քաղաքացիների հարկերի հաշվին է վաստակում, պետք է հասկանա, որ բոլորին պետք է ներկայացնի և ընդհանուրի շահերից բխող գործողություններ ձեռնարկի: Ընդհանուրի, ոչ թե մասնավորի, թեկուզ մի փոքրիկ խմբի: Անկախ նրանից, թե քո աշխատավարձը որքան է:

Այսօր մեր աշխատավարձը բարձր է՝ համամետած 35 հազար դրամի հետ: Իհարկե, եթե ես լինեի այլ ոլորտի աշխատող, ավելի շատ կվաստակեի: Բայց այդ գումարն էլ ստանում ես ունեզուրկ, իրավազուրկ քաղաքացիների, հիմնականում մանր ու միջին ձեռնարկատերերի հարկերի հաշվին և պարտավոր ես նրանց շահերը ներկայացնել, քանի որ նրանցից մեկն ես:

- Կա՞ն հատկանիշներ, որոնք պետք է ունենա յուրաքանչյուր պատգամավոր:

- Իհարկե կան, նախ՝ պետք է լինես ազնիվ, հանգիստ, երբեք խղճիդ դեմ գործարքների չգնաս, անգամ ամենադժվար պահերին չպետք է գնաս: Հաջողության բանալին ազնվությունն է:

- Պատգամավորական մանդատ ստանալուց հետո ի՞նչ փոխվեց ձեր կյանքում:

- Մի զգացում առաջացավ: Երբ դատարանում ես հանդես գալիս, դահլիճը քեզ համար վերահսկելի է, մարդկանց ներգրավվածությունը սահմանափակ է, կանխատեսելի, թե հարձակումն ինչպիսին կլինի: Խորհրդարանում կարծես մի անծայրածիր տարածքում լինեմ:

Այնպիսի զգացողություն է, որ ծովում լողում ես, բայց չես զգում, որ հասնում ես ափ, չկա, ու չգիտես, թե ափում ովքեր կդիմավորեն, շնաձկնե՞ր, թե՞ ավելի վտանգավոր էակներ: Սակայն այս ընթացքում իմ կյանքում շատ կարևոր բան փոխվեց. չորրորդ երեխան ունեցա և ինձ լիարժեք մայր զգացի: Հիմա բացարձակ այլ մայրական զգացողություն է: Նաև հասունացել եմ, շատ հարցերին այլ կերպ եմ նայում:

- ԱԺ-ում պատգամավորական գործունեությունը համապատասխանո՞ւմ է այն պատկերացմանը, որ ունեիք մինչ խորհրդարան մտնելը:

- Մինչ այդ տարբեր խորհրդարանականների հետ էի շփվել, բայց չէի պատկերացնում, որ այս մարդիկ, իրոք, հասարակության ներկայացուցիչներն են: Պատկերացումներն այլ էին: Խորհրդարանում պետք է օր ու գիշեր աշխատես, որ իրականությունը փոխես:

- Ձեր ակտիվ աշխատանքից ընտանիքը չի՞ տուժում:

- Տուժում է, իհարկե տուժում է: Ծնողներս են տուժում, իմ գործունեության պատճառով նրանց ծերացրեցի, եղբորս իմ պատճառով կալանքի տակ առան, երեխաներս տառապեցին:

Յուրաքանչյուր խնդիր ու քննադատություն նրանք ինձ հետ հավասար ապրում էին: Մարտի 1-ին, երբ մենք փողոցում էինք, երեխաներս, կադրերը տեսնելով, լսելով իմ ձայնը, վախենում էին, ազդվում: Ես զգում եմ, որ իմ հարազատներին ավելորդ հոգեկան ցավ եմ պատճառում, ինչն ինձ վրա էլ է ազդում:

- Սակայն հաջողություններն էլ են զգում:

- Այո, ինձ հետ ապրում են թե՛ հաջողություններն ու ձեռքբերումները, թե՛ խնդիրները: Նրանք ընդունում են իմ գաղափարները, հարգում են իմ աշխատանքը: Աջակցությունը կա, և եթե դա չլիներ, ես չէի կարող ինչ-որ բան անել: Իմ թիկունքն ամուր է, և ինձ իմ ընտանիքով պաշտպանված եմ զգում:

- Իրավաբանությունից, քաղաքականությունից ու «ժառանգությունից» դուրս Զարուհի Փոստանջյանն ի՞նչ նախասիրություններ ունի:

- Հոբբի՝ որպես այդպիսին, չունեմ: Եթե ժամանակ է լինում, հետաքրքիր գիրք եմ կարդում, հատկապես՝ փիլիսոփայական, առանց դրա չես կարող լիցքեր ստանալ:

Մեր հերոսների անցած ճանապարհն եմ սիրում ուսումնասիրել: Հատկապես ամռանը շատ սիրում եմ լողալ, բնություն եմ շատ սիրում և հաճախ մեկնում եմ արշավների: Խոհանոց էլ եմ սիրում: Ճաշ եփելն իմ գործն է: Սիրում եմ ճաշատեսակներում նորարարություններ մտցնել:

- Ի՞նչ խորհուրդ կտաք այն կանանց, որոնք ցանկանում են մտնել քաղաքականություն:

- Աշխատեն ամեն օր իրենց վրա, մենք ավանդույթն ու կարծրատիպը պետք է փոխենք, մեր տեղն այստեղ երևում է, չգերադասեն աշխատանքը ընտանիքից և երեխաներ ունենան, չսահմանափակվեն միայն կարիերայով: Դա հնարավոր է: Եթե կինը երեխաներ է ունենում, կյանքի շարունակությունն ապահովում, իդեալական է և հնարավորություն ունի իրեն իդեալական դրսևորելու նաև քաղաքականության մեջ:

ՉՈՐՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ

Լարիսա Ալավերդյան *- «Ժառանգություն» խմբակցություն*

Ռուզաննա Առաքելյան *– Հայ հեղափոխական դաշնակցության խմբակցություն*

Անահիտ Բախշյան *- «Ժառանգություն» խմբակցություն*

Լիլիթ Գալստյան *– Հայ հեղափոխական դաշնակցության խմբակցություն*

Լարիսա Ալավերդյան

«Պետք է կարողանալ սեփական ճանապարհն ընտրել, բայց այդ ճանապարհին չկորցնել ազգային նկարագիրը»

Ծնվել է 1943 թ. սեպտեմբերի 21-ին Բաքվում: 1966 թ. ավարտել է Ադրբեջանի պետական մանկավարժական ինստիտուտը, 2005 թ.՝ ՌԴ Մոսկովյան ղեկավար աշխատողների մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման պետական ակադեմիան: Մաթեմատիկայի և գծագրության ուսուցիչ: Իրավաբան-իրավագետ: 1960-1965 թթ. աշխատել է Բաքվի թիվ 2 մանկատանը՝ որպես դաստիարակ, 1966-1967 թթ.՝ Դաշքեսանի թիվ 2 միջնակարգ դպրոցում՝ մաթեմատիկայի ուսուցիչ, 1967-1990 թթ.՝ Հայաստանի տարբեր գիտահետազոտական ինստիտուտներում՝ սկսած կրտսեր գիտաշխատողից մինչև բաժնի վարիչ, և հաշվիչ կենտրոններում՝ սկսած բաժնի վարիչից մինչև տնօրենի տեղակալ: 1988-1991 թթ. եղել է «Արցախ» հայրենակցական միության հիմնադիր անդամ և պատասխանատու քարտուղար, 1991-1995 թթ.՝ ՀՀ ԳԽ Արցախի հարցերով հատուկ հանձնաժողովի գլխավոր փորձագետ, 1995-2004 թթ. և 2006-2007 թթ.՝ «Ընդդեմ իրավական կամայականության» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն: 2004-2006 թթ. եղել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան: 2002 թվականից դասախոսում է Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանում: Կանանց հանրապետական խորհրդի անդամ, ՀՀ նախագահին առընթեր արտաքին հարաբերությունների և մարդու իրավունքների հարցերի, պաշտպանության նախարարության առընթեր անհայտ կորածների, պատանդների և զինգերիների հարցերի, Միգրացիայի և փախստականների վարչությանը կից փորձագիտական խորհրդի, ԱՀՌԾ-ի պատրաստման խորհրդի և աշխատանքային խմբի անդամ: 2007 թ. մայիսի 12-ին Ազգային ժողովի պատգամավոր է ընտրվել համամասնական ընտրակարգով «Ժառանգություն» կուսակցությունից:

- Տիկին Ալավերդյան, դուք մեծ փորձ և հարուստ կենսագրություն ունեք: Ինչպիսի՞ն էր Ձեր քաղաքական և հասարակական գործունեության սկիզբը:

- Ղարաբաղյան շարժումը, շատերի, հատկապես մտավորականության և գիտաշխատողների կյանքում ճակատագրեր է փոխել: Շարժմանն եմ պարտական, որ սկսեցի իմ հասարակական, այնուհետև քաղաքական

գործունեությունը: «Արցախ» հայրենակցական միություն ենք կազմակերպել 1988-ին, որը Շարժումից, ՀՀՇ-ից հետո ամենախոշոր կառույցն էր, նաև՝ ֆինանսական կարողություններով: Միությունը ստեղծել էինք երեքով. ես, Ալեքսանդր Մանասյանը, որ իմ քեռու որդին է և իմ ամուսինը՝ Միքայել Արամյանը: Մենք կարողացանք օգնել Արցախին տնտեսական զարգացման առումով: 1988-89-ին մեզ համար ակնհայտ դարձավ, որ որևէ պատմաբան կամ իրավաբան խորքային առումով բազմաթիվ հարցերի պատասխան չի տալիս: Հատկապես 90-ականներին մենք տեսնում էինք, որ զարգացումները տանում են դեպի պատերազմ, և հասկանում էինք, որ անհրաժեշտ է ունենալ իրավական փաթեթ: Մենք մի քանի տարի իրավաբաններից ու իրավագետներից չէինք կարողանում համապարփակ նյութ ստանալ իրավական հիմքերի մասին: 1991-ին «Օղակ» գործողությունից հետո ունեցանք այդ պատանդների 527 հոգանոց ցուցակ, սակայն նրանց կարելի էր բնութագրել որպես անօրինական ձերբակալված, հաճախ՝ վիրավորված անձինք, որոնք հետագայում Սովետական Ադրբեջանում դատվում էին:

Հենց այդ ժամանակ «Արցախ» հայրենակցական միությունից դուրս ստեղծեցինք մի նոր կազմակերպություն՝ «Ընդդեմ իրավական կամայականությունների»: Մենք ավելի մանրամասնեցինք՝ Անօրինական ձերբակալված, առևանգված և հակաօրինական դատապարտված անձանց իրավունքների պաշտպանության ֆոնդ: Այդ ժամանակ կարծում էինք, որ պատանդների հետ կապված խնդիրները շատ արագ կլուծենք, և մեզանից յուրաքանչյուրը կվերադառնա այն ոլորտ, որտեղ ներգրավված էր: Ես կրթությամբ մաթեմատիկոս էի, և երբ շարժումը սկսվել էր, ընդգրկված էի հաշվիչ կենտրոնում որպես բաժնի վարիչ, այնուհետև կենտրոնական վիճակագրական ծառայության հաշվիչ կենտրոնի տնօրենի տեղակալն էի: Մենք մոռացանք մեր մասնագիտություններն ու սկսեցինք զբաղվել արցախյան հարցի իրավական փաթեթը կազմելու գործով: Ու թեպետ այդ ժամանակ Սովետական Միությունը փլուզվում էր, դեռ կապերը պահպանվում էին, թեկուզ՝ ոչ պաշտոնական: Մեզ շատ բան հաջողվեց: Մենք Արցախում ունեինք մեր կազմակերպության մասնաճյուղը, որտեղ հերոսական մարդիկ էին ընդգրկված, հիմնականում՝ աղջիկներ, և նրանցից մեկը՝ Աղավնին, պատերազմի ժամանակ զոհվեց: Մենք կարողացանք մի գործ անել, որով ոչ ոք չէր զբաղվում, այն էլ՝ հասարակական մակարդակով:

Երբ սկսեցինք իրավական հարթության վրա աշխատել, առաջացավ նաև ուսումը շարունակելու և զարգանալու անհրաժեշտություն: Մենք այնքան շատ նյութ էինք ուսումնասիրել, որ 1991-ին ինձ առաջարկեցին Գերագույն խորհրդի Արցախի հարցերով հատուկ հանձնաժողովի գլխավոր փորձագետ դառնալ: Հենց այդ ժամանակ գնացի անգլերեն սովորելու և շատ շփումներ ունեցա միջազգային ատյաններում: Դրանք և՛ միջկառավարական, և՛ ոչ կառավարական կազմակերպությունների մակարդակի էին:

Այդ ժամանակ կատակով ասում էի, որ ինձ պետք է արժանացնեն աղրբեջանցիների հետ հանդիպման հաճախականության համար հատուկ շքանշանի: Հինգ անգամ որպես հրավիրված այցելեցի Բաքու՝ իմ ծննդավայր, շատ ակտիվ գործունեություն էինք ծավալում: Բայց հետո եկան դժվարագույն ժամանակներ, և անհասկանալի իրավիճակ ստեղծվեց: Հայր Ալիևի ողջ եղած ժամանակ ակտիվ էին ոչ կառավարական կազմակերպությունների շփումները, ինչը ընդհատվեց Իլհամ Ալիևի պաշտոնավարումից հետո: 1995-ին Ազգային ժողովը որոշեց, որ մեզ այդպիսի հանձնաժողով պետք չէ: Եվ այդ տարիներից քարոզչական ու տեղեկատվական հոսքը կտրուկ նվազեց: Ուստի մինչև 1998 թվականը ես զբաղվում էի միայն հասարակական աշխատանքով:

Հիմնեցինք խոշտանգումների զոհերի համար վերականգնողական կենտրոն, դա առաջինն էր տարածաշրջանում, միայն չորս տարի առաջ Վրաստանում նման կենտրոն բացվեց: Գործը շատ էր, և դրան զուգահեռ համայնքային զարգացման ծրագրերով էինք զբաղվում: Դա տվեց հսկայական ինֆորմացիա, որը պարզվեց՝ շատ կարևոր և պահանջված էր հետագայում, երբ Հայաստանում մեկնարկեց աղքատության դեմ ռազմավարական ծրագրի մշակումը: Վստահ կարող եմ ասել, որ հինգ տարի ինձնից շատ ոչ ոք չի այցելել գյուղեր: Հինգ տարի շարունակ ես եղել եմ հանրապետության բոլոր գյուղերում և քաղաքներում. դա ինձ շատ բան տվեց: Ափսոսում եմ այն ահռելի գործը, որ բարձր մակարդակով մշակեցինք և պատրաստեցինք, քանի որ վերջին պահին վրա հասան «պրոֆեսիոնալները» (չեմ ցանկանում անուններ տալ), որոնք մեր ծրագիրը դարձրեցին ոչ այնքան հասցեական: Ես պահանջում էի աղքատության հաղթահարման քարտեզագրում, որ ամեն մի գյուղ իմանա, որ առաջիկա ժամանակահատվածում իրեն կամ հարևան գյուղին ինչ է սպասում: Սակայն դա վերածվեց մի ճղճիմ գործընթացի, ուստի ցավում եմ և ափսոսում այն հազարավոր մարդկանց ոգևորությունը, որոնց ներգրավեցի այդ գործընթացում:

Իմ աշխատանքը կառավարության հետ հանգեցրեց նրան, որ երբ հարց եղավ պաշտպան նշանակելու մասին, լուսահոգի վարչապետ Անդրանիկ Մարգարյանը գտավ ու ինձ առաջարկեց ստանձնել այդ պաշտոնը: Նախագահ Ռոբերտ Քոչարյանի ընտրությամբ և Ազգային ժողովի հաստատմամբ ես դարձա Մարդու իրավունքների առաջին պաշտպանը: Ռոբերտ Քոչարյանն ինձ վաղուց էր ճանաչում և գիտեր, որ իմ կարծիքին տեր կանգնող անձնավորություն եմ: Ես շնորհակալ եմ ճակատագրին, որ այդքան պատվավոր գործ եմ կարողացել կատարել, որովհետև ինձ համար պաշտոնը երբեք առաջնային չի եղել:

- Հետո արդեն մտաք քաղաքականություն:

- Գիտեք, ես քաղաքականության մեջ էի հենց շարժումից սկսած, իսկ այն քաղաքական հասկացողության մեջ, որ նշանակում է իշխանության համար պայքար, ես երբեք չեմ եղել ու չկամ:

- Այնուամենայնիվ 2007-ից Ձեր քաղաքական ուղին կապվեց «Ժառանգություն» կուսակցության հետ:

- Այո, 2006-ին անօրինական ձևով դադարեցվեց Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքը: Մինչ այդ էլ ես Ռաֆֆի Հովհաննիսյանի հետ համագործակցում էի որպես առաջին արտգործնախարարի, ինձ համար անակնկալ էր, երբ ընտրական ցուցակը ներկայացնելուց ժամեր առաջ ինձ զանգեց Ռաֆֆի Հովհաննիսյանն ու առաջարկեց ընդգրկվել ցուցակում: Իմ ցանկացած քայլ ես քննարկում եմ ամուսնուս հետ, և մենք համոզված էինք, որ «Ժառանգությունը» չի ընտրվելու իր այդ բարձր որակի համար: Ինձ համար պատիվ էր այդ մարդկանց հետ ճանապարհ անցնել:

- Խորհրդարան մտնելու նպատակը ո՞րն էր:

- Նախ ասեմ, որ ես անկուսակցական եմ իմ էությամբ, և ես շարունակեցի այն գործունեությունը, որ մինչ այդ տանում էի: Դա ոչ միայն մարդու իրավունքների պաշտպանություն էր, այլև օրենսդրական մարմնում այն սահմանադրական կետերի հետ կապված աշխատանքը, որոնք ոտնահարում են մարդու իրավունքները: Դա ինձ համար մեծ փորձություն և պատասխանատվություն էր:

- Եթե ամփոփենք անցած հինգ տարին, ի՞նչը կառանձնացնեք:

- Ես մի մեծ հաղթանակ ունեմ՝ ՀՀ բոլոր զանգվածային լրատվության միջոցները սկսել են տպել Արցախի ճիշտ քարտեզը: Դա ինձնից խլել է չորս տարի: Հայաստանից պոկված անջատված քարտեզ գոյություն չունի: Երկրորդ՝ երկրի և ժողովրդին հոգսին մոտիկ լինելը: Դա այնպիսի գործ է, որ թույլ մարդուն կհիասթափեցնի: Ես պատկանում եմ այն մարդկանց թվին, որոնց դժվարությունները կոփում են:

- Հիմա ի՞նչ կցանկանայիք փոխել Հայաստանում:

- Ես կփոխեի շատ բան՝ սկսած Սահմանադրությունից: Կուզենայի ունենալ այնպիսի գործընթացներ, որոնք չեն կեղծվում, կուզենայի, որ

ժողովրդավարական նմանակումներից անցնեինք ռեալ քաղաքական գործընթացների, որտեղ քաղաքացիական հասարակության մեջ եղած քաղաքական և սոցիալական փոքրամասնությունները հստակ կունենային մեխանիզմներ՝ ազդելու այն որոշումների վրա, որոնք վերաբերում են իրենց: Սա է իրավական պետություն կառուցելու հիմքը:

- Ձեր կյանքում ի՞նչ փոխվեց մանդատ ստանալուց հետո:

- Կենցաղային առումով՝ ոչինչ, բացի նրանից, որ ավելի քիչ էի տանը լինում: Ճրջաններ գնալն ինձ համար ավելի պատվավոր էր, քան արտասահման գնալը: Ո՛չ բնակարանս փոխվեց, ո՛չ հեռախոսս, ո՛չ էլ մեքենան: Իսկ աշխատանքի վերաբերյալ կասեմ, որ պատասխանատվության չափը, որը պետք է կրի պատգամավորը, շատ ավելին է, քան երևում է դրսից:

- Տիկին Ալավերդյան, Ձեր՝ որպես պատգամավորի կատարած աշխատանքից գո՞հ եք:

- Իմ աշխատանքի որակից միշտ եմ դժգոհ: Ես, քննարկելով օրվա կամ տարվա արդյունքը, ավելի շատ միտված եմ վեր հանելու՝ ինչը չի արված կամ ինչն այնպես չի արված: Բայց պետք է ասեմ, որ դա ինձ երբեք չի ճնշում, ես դասեր եմ քաղում, որ նախ՝ էլ չկրկնեմ սխալներն ու կոփվեմ, բայց կյանքն այնպիսի բան է, որ մեղքերի ու նոր սխալների շարք է գալիս: Գիտեք, կարևորը, որ դրանք միտումնավոր չեն: Եթե մարդ կարողանա միշտ ազնիվ լինել ինքն իր հետ, մնացյալն ածանցյալ է:

- Բազմաթիվ կին պատգամավորներ խոստովանել են, որ անհարմարություն են զգում Ազգային ժողովում, հատկապես՝ սեռային պատկանելության համար, Դուք նման զգացողություն ունեցե՞լ եք:

- Այն, որ պարտադրվում է անհարմարություն, դա փաստ է: Ինձ և տիկին Գոհար Ենոքյանին՝ երկու հարգված ու շատ ավելի հայտնի կանանց, քան տասնյակ տղամարդ պատգամավորներ, Ազգային ժողովում հատկացրեցին գրեթե նկուղային հարկում, դահլիճից ամենահեռու գտնվող սենյակները: Երկուսս էլ վիրավորված էինք, և մեր ուժերով ինչ-որ բան արեցինք: Ընդհանուր առմամբ, կանանց հանդեպ բիրտ տղամարդկային մշակույթի դրսևորում լինում է: Կարող են ժպտալով ասել՝ կանանց հարցերին ես չեմ պատասխանում: Բայց չէ՞ որ մենք այնտեղ գնում ենք մեր սոցիալական դերակատարության համար, ոչ թե սեռային պատկանելության: Եվ ես համոզված եմ, որ խելացի, կրթված ու դաստիարակված տղամարդը դա չի անի: Ցավալին այն է, որ կիրթ տղամարդիկ խորհրդարանում մեծամասնություն չեն:

- Մեծ էր զարմանքը, երբ մայիսին «Ժառանգությունը» հրապարակեց իր նախընտրական ցուցակը, երբ Ձեզ տեսանք ցուցակի ստորին հատվածում: Ի՞նչ էր պատահել:

- Դա իմ ցանկությունն էր, հեռու լինել ցուցակի այն անցնող հատվածից: Սկզբունքորեն ես համաձայն չէի այն տեխնոլոգիային, որով կազմվել էր ցուցակը: Ես խնդրեցի, որ իմ օգնականները լինեն վերին հորիզոնականներում՝ ինձնից առաջ, ես կլինեմ 41-երորդը: Ես համաձայն չէի, որ այդքան հապճեպ քաղաքական միավորում է ստեղծվում: Նման ճանապարհը պետք է մերժված լինի, և ժողովրդի մեծ մասը դեմ էր: Ես, տիկին Անահիտը, Արմեն Մարտիրոսյանը և Ստյոպա Սաֆարյանը զանգերի այնպիսի հեղեղ ենք ստացել, որը ցույց էր տալիս՝ դա շատերի մեջ տարակուսանք է առաջացրել:

- Խորհրդարանական գործունեությունից հետո ինչո՞վ եք զբաղվում:

- Ակտիվությունը չի դադարել: Երբ հայտնի դարձավ, որ իմ սկզբունքները չդավաճանելու ճանապարհն եմ բռնել, միանգամից մի քանի առաջարկություն ստացա: Ինձ համար մեծ պատիվ էր, որ Արմեն Դարբինյանը՝ Սլավոնական համալսարանի ռեկտորը, ինձ նոր աշխատանքի առաջարկություն արեց: Ես այդ համալսարանում արդեն դասավանդում էի մարդու իրավունքներ, Արցախի հարցերի իրավական փաթեթի շուրջ դասախոսություն ունեի: Ինձ առաջարկեցին ինստիտուտներից ամենամեծի՝ իրավունքի և քաղաքականության տնօրենը լինել: Պարզվեց, որ անհրաժեշտ էր նման մարդ, որն իր վրա կվերցներ այդ ամբողջ ծանրությունը: Հունիսի 1-ին կլինի մեկ տարի, ինչ աշխատում եմ այնտեղ, և նաև հասարակական գործունեությամբ եմ զբաղվում: Պատկերացրեք, որ էլի ազատ ժամանակ չեմ ունենում:

- Նախկին գումարման մի շարք պատգամավորներ մեզ հետ զրույցում ցանկություն հայտնեցին կրկին վերադառնալ խորհրդարան, քանի որ կա՛մ կիսատ թողած գործեր ունեն, կա՛մ ցանկանում են այդ ամբիոնից օգտակար լինել: Դուք նման ցանկություն չունե՞ք, չե՞ք կարոտում խորհրդարանը:

- Չավարտված գործերից մեկը կա, որ կուզեի ավարտված տեսնել: Այն հայտարարության համար, որ Ադրբեջանի գործողությունները1988-1994 թթ. պետք է որակվեն ցեղասպանություն, պայքարել եմ չորս տարի, պայքարել եմ, որ այն մտնի օրակարգ: Ոչ ոք չստանձնեց այդ հայտարարության շարունակությունն ապահովելու աշխատանքը, և այն դուրս մղվեց օրակարգից: Ես նեղացող չեմ, բայց այդ փաստը ծանր տարա: Դա նաև

փորձություն էր ԱԺ-ի համար, և ինձ վատ զգացի, որ ԱԺ-ն չդիմացավ այդ փորձությանը: Պատկերացրեք, որ չնայած այս խնդրին՝ ես էլի չեմ ուզում վերադառնալ խորհրդարան: Չեմ սիրում նույն գետը մտնել երկրորդ անգամ, քանի որ տեսնում եմ գործունեության այնպիսի ոլորտներ, որտեղ կցանկանայի ստեղծել մի բան ու լինել առաջինը: Մասնավորապես խոսքը մարդու իրավունքների ճիշտ ընկալման կենտրոնի ստեղծման մասին է:

- Մարդու իրավունքներից, հասարակական գործունեությունից, քաղաքականությունից ու կրթությունից դուրս ինչպիսի՞ն է Լարիսա Ալավերդյանը:

- Շատ եմ սիրում ընթերցանություն, դասական երաժշտություն, ցանկացած ազատ ժամանակ, որ ես ունենում եմ, նվիրում եմ դասական երաժշտությանը: Կարծում եմ, որ դասական երաժշտությունը, հին հայկական երգերն ու հատկապես կոմիտասյան արվեստն այսօր անտեսված են: Դա իմ նախասիրությունն է, պարարվեստ եմ սիրում: Խոհանոցը միայն ինձ է պատկանում: Քանի դեռ խոհանոցում իմ պարտականությունները չեմ կատարել, տնից դուրս չեմ գալիս: Իմ խոհանոցն առայժմ ոչ մեկին չեմ վստահում:

- Եվ վերջին հարցը. ի՞նչ խորհուրդ կտաք այն կանանց, որոնք ցանկանում են մտնել քաղաքական դաշտ:

- Եթե համարես, որ հանգամանքները քեզնից ուժեղ են, ապա դրանք կհաղթեն քեզ: Ցանկացած խոչընդոտ պետք է հաղթահարես: Եղեք ուղղամիտ, բայց ոչ գռեհիկ: Պետք է կարողանալ սեփական ճանապարհն ընտրել, բայց այդ ճանապարհին չկորցնել ազգային նկարագիրը: Ինձ համար թանկ է հայ կնոջ նկարագիրը: Չհակադրել տունը, հասարակությունն ու երկիրը: Ես համոզված եմ, որ կինը չպետք է տանը ինչ-որ բան անի՝ հաղթելով տղամարդուն: Եթե կինը չի կարողանում համոզել իր կողքի տղամարդուն, չի կարողանում ապացուցել իր կարևորությունը գործի համար, ո՞նց է ապացուցելու մնացածներին:

Ռուզաննա Առաքելյան

«Ինտելեկտն է, որ կնոջը կանացի է պահում»

Ծնվել է 1959 թ. փետրվարի 15-ին:

1982 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Բանասեր, հայոց լեզվի և գրականության ուսուցիչ:

1982-1991 թթ. աշխատել է «Ավանգարդ» թերթի խմբագրությունում՝ որպես թղթակից, այնուհետև բաժնի վարիչ, 1991-1994 թթ.՝ «Երկիր» օրաթերթում՝ բաժնի վարիչ: 1998-ից աշխատում է ՀՀ Հանրային ռադիոյում, ղեկավարում «Կամուրջ» ստեղծագործական ծրագիրը:

1989-ից ժուռնալիստների միության անդամ է, երկու գրքի և բազմաթիվ հոդվածների հեղինակ:

2007 թ. մայիսի 12-ին Ազգային ժողովի պատգամավոր է ընտրվել համամասնական ընտրակարգով Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունից:

2012 թ. Ազգային ժողովի ընտրություններում առաջադրվել է համամասնական ընտրակարգով Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունից:

Ամուսնացած է, ունի մեկ երեխա:

- Ո՞վ էր Ռուզաննա Առաքելյանը մինչ պատգամավոր ընտրվելը:

- Միջնակարգ կրթությունս ստացել եմ Երևանի թիվ 133 դպրոցում: Ավարտել եմ ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը: Համալսարանում ոչ միայն գիտելիք եմ ստացել, այլև՝ ազգային դաստիարակություն: Համալսարանը դեռ չավարտած՝ արդեն թղթակցում էի թերթերին և Հանրային ռադիոյի երիտասարդական բաժնի համար ռեպորտաժներ էի պատրաստում: Թեպետ մասնագիտությամբ գրականագետ էի, շատ սիրեցի լրագրությունն ու շարունակեցի աշխատել այդ ոլորտում:

Ունեմ երկու գիրք՝ ակնարկների և հրապարակախոսական հոդվածների ժողովածուներ են: Առաջին գիրքս անվանեցի «Ծուխ», որը զուգորդվում է օջախի և հայրենիքի հետ: Երկրորդ գիրքս՝ «Հավատամք», որը հիմնականում բովանդակում է ակնարկներ: Լրագրողական գործունեությանը զուգահեռ

դասախոսական աշխատանքով եմ զբաղվել և հիմնականում լրագրությանը վերաբերող առարկաներ եմ դասավանդել: Լրագրությունն ինձ սովորեցրեց գնահատել ճշմարտությունը: Ես հասկացա, որ այս մասնագիտությունը մեծ առաքելություն է. եթե դու պարտավորված ես քո խոսքը հասցնել հասարակությանը, ապա այն պետք է մոտ լինի ճշմարտությանը, այլապես կլինի ինքնախաբեություն, որն անհարիր է իմ տեսակին:

Ես մերժում եմ այն մարդկանց, որոնք իրենց խոսքին չեն հավատում, բայց փորձում են հավատացնել: Ինձ ճանաչողները գիտեն, որ չեմ խոսել այն բաների մասին, որոնց չեմ հավատում, չեմ բարձրաձայնել մտքեր, որոնց չեմ հավատում:

- Տիկին Ռուզաննա, ինչպե՞ս եղավ մուտքը քաղաքականություն:

- Անկախ նրանից՝ ինչ թեմաներով ես ստեղծագործում, եթե լրագրող ես, ապա քաղաքականության մեջ ես, որովհետև ինչի մասին էլ գրես, առանցքում քաղաքականությունն է: Քաղաքական միջավայր մտա, երբ 1989-ին դարձա դաշնակցական:

Դա այն ժամանակն էր, երբ դաշնակցությունը Հայաստանում բացահայտված չէր: Շատ-շատերի պատկերացմամբ՝ քաղաքականությունը կնոջ գործ չէ, ու այն կարող է կնոջը զրկել կանացիությունից: Ես մերժում եմ այդ կարծիքները, որովհետև ինտելեկտն է, որ կնոջը կանացի է պահում, ոչ մի կապ չունի՝ ինչով ես զբաղվում, եթե ունես հասկացողություն, որ կին ես և այդ հատկանիշները չպետք է զոհես, զիջես որևէ գործի, ապա և՛ կկարողանաս պահպանել կանացիությունդ, և՛ կզբաղվես քո նախընտրած գործով:

Բացի այդ, ես աղջիկ ունեմ, և ցանկանում եմ նրան փոխանցել այն արժեքները, որոնք ստացել եմ իմ ծնողներից: Ես եղել եմ ՀՅԴ Գերագույն մարմնի անդամ: Հիմնականում քարոզչական ոլորտի գործունեությամբ էի զբաղվում:

Աշխատում էինք երիտասարդների հետ և նրանց ազգային-հայրենասիրական գաղափարներ քարոզում, պարտադիր չէր, որ նրանք լինեին կուսակցական կամ մտնեին Դաշնակցության շարքերը, մեզ համար առավել կարևոր էր, որ սերունդը ճանաչեր իր պատմությունն ու անցյալը:

- Քաղաքական գործունեություն ծավալելու նպատակը ո՞րն էր:

- Հատուկ որևէ նպատակ, հատկապես՝ անձնական, չեմ ունեցել, որ մտնելով քաղաքականություն՝ բավարարեմ իմ անձնական հավակնությունները: Ես մտածել եմ առավել լայն մտահորիզոնով. մտնել քաղաքականություն ինչ-որ բան փոխելու ցանկությամբ: Չգիտեմ՝ ինչքանով եմ կարողացել դա կատարել, բայց դա է եղել իմ ձգտումը:

- Հինգ տարի զբաղվել եք պատգամավորական գործունեությամբ: Կպատմե՞ք այդ տարիների և աշխատանքի մասին:

- Պատգամավորական տարիներին փորձել եմ զբաղվել սահմանամերձ բնակավայրերում և Երևանից դուրս բնակվող մարդկանց խնդիրներով: Հեղինակել եմ մի քանի օրինագծեր, որոնք կապ ունեն սահմանամերձ բնակավայրերում ապրող մարդկանց հետ: Ինձ համար մտահոգիչ էր, որ ամեն ինչ կենտրոնացած է Երևանում:

Իմ հեղինակած օրինագիծը վերաբերում էր սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում ապրող շրջանավարտներին անվճար կրթության իրավունք տալուն, մանավանդ այն մասնագիտությունների գծով, որոնց կարիքը տվյալ շրջանն ունի: Կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը շատ լավ արձագանքեց, հենց նրա աջակցությամբ այս օրինագիծն ընդունվեց, և այս տարի շատ շրջանավարտներ օգտվել են այս օրինագծից:

- Գո՞հ եք խորհրդարանում կատարած Ձեր աշխատանքից:

- Այո, թող սա ինքնագովություն չթվա, բայց այո, գոհ եմ: Չի եղել քառօրյա, որի ժամանակ ելույթ չունենամ, հարց չբարձրացնեմ: Ցանկացած քաղաքական գործիչ, եթե հավակնում է մտնել քաղաքական դաշտ, պետք է մտածի օգտակարության մասին:

- Տիկին Ռուզաննա, ի՞նչն էր պատճառը, որ 2012-ի խորհրդարանական ընտրությունների ժամանակ Դաշնակցության նախընտրական ցուցակում Ձեր անունն առաջին տասնյակում չկար, այսպես ասենք՝ անցողիկ տեղում չէր:

- Որևէ կուսակցություն, երբ ցուցակ է կազմում, չի մտածում, որ քիչ ձայներ է ստանալու: Բոլոր կուսակցություններն էլ հավակնում են առավելագույն

ձայներ ստանալ: Այն ենթադրությամբ, թե Դաշնակցությունն ինչքան ձայն կարող էր ստանալ, այդ ցանկում մենք երկուսս էլ՝ ես էլ, Լիլիթ Գալստյանն էլ կայինք: Մենք մեծամասնական պայքարի մեջ չկայինք: Բայց դա պայքար է, քաղաքականություն, երբեմն անակնկալներով լի: Իսկապես, բոլորիս համար անսպասելի էր, որ Դաշնակցությունն այդքան քիչ ձայն ստացավ, բայց քաղաքականություն է, և ոչ մի բանի վրա չպետք է զարմանալ:

- Տիկին Ռուզաննա, ի՞նչ կցանկանայիք փոխել Հայաստանում: Ակտիվ քաղաքականության մեջ չկաք, բայց հետևո՞ւմ եք քաղաքական անցուդարձին:

- Կուզենայի, որ Հայաստանի բարոյական մթնոլորտը փոխվեր: Արժեքային համակարգն ու չափանիշները խեղաթյուրվել, դեգրադացվել են: Այսօր երիտասարդությունը չունի այն առանցքը, որի վրա հենվելով՝ պետք է իր ապագան կառուցի և օգտակար լինի: Կուզենայի՝ մեր համաքաղաքացիները վստահ լինեին, որ օրենք կա, որ օրենքի առջև պատասխանատու են բոլորը՝ անկախ իրենց պատկանելությունից:

- Ի՞նչ փոխվեց Ձեր կյանքում մանդատ ստանալուց հետո:

- Ոչինչ չփոխվեց: Պատգամավոր լինելը նույն աշխատանքն էր, ուղղակի ավելի պատասխանատու: Եթե մինչ այժմ իմ գրած հոդվածներով էի հասարակությանը ներկայանում, այժմ արդեն անհատ էի ներկայանում, և պատասխանատվությունը մեծ էր: Նյութական իմաստով էլ իմ կյանքում ոչինչ չի փոխվել: Ես ապրում էի իմ պատգամավորական աշխատավարձով, ուրիշ որևէ բան չեմ ունեցել, հավելյալ նյութական աղբյուր նկատի ունեմ:

Զուգահեռաբար շարունակում էի լինել «Երկիր մեդիա» հեռուստաընկերությունում: Քանի որ օրենքով պատգամավորը կարող է ստեղծագործական աշխատանքով զբաղվել, ես այդ օրենքի տառին և ոգուն համահունչ՝ շարունակեցի աշխատել «Երկիր Մեդիա» հեռուստաընկերությունում որպես մշակութային հաղորդումների խմբագիր: Շարունակում էի երթուղայինով երթևեկել, օգտվում էի բոլոր խանութներից, անկախ նրանից, թե դրանց ճակատին ինչ է գրված:

- Համապատասխանո՞ւմ էր խորհրդարանական գործունեությունն այն պատկերացումներին, որ ունեիք մինչ խորհրդարանում աշխատելը:

- Որոշ իմաստով համապատասխանում էր: Նախ՝ ինձ զարմացրեց, թե ինչքան պատահական մարդիկ կային այնտեղ: Ինձ համար ԱԺ-ն բարձրագույն ատյան է, և այնտեղ պետք է լինեին մտավորական մարդիկ: Այդ ատյանի ամբիոնից կարող ես անել հայտարարություններ, որոնք կարող են շրջադարձային լինել քո հասարակության համար: Այս պատասխանատվությունը ես ոչ բոլորի մեջ տեսա: Ինձ համար տարօրինակ էր դա: Ի վերջո, դու գրում ես օրենքներ, որոնք պետք է ավելի լավ ապագա խոստանան քո հասարակությանը, և այդ պատասխանատվությունը կարող է ստանձնել մտավորական անձը:

- Գրեթե բոլոր կին պատգամավորները կամ քաղաքական գործիչները շեշտում են, որ կուսակցություններում կանանց նկատմամբ որոշ խտրականություն կա, և կանայք գտնվում են խոշորացույցի տակ. պետք է մի քանի անգամ ավելի շատ աշխատեն, որպեսզի հասնեն ինչ-որ բանի: Դուք նման բան զգացե՞լ եք:

- Չէ, ես նման վերաբերմունքի չեմ արժանացել: Դաշնակցության մեջ հարազատի պես են վերաբերվում, ընտանիքի անդամների նման ենք, առաջին դաշնակցականներից եմ, և դա միշտ գնահատվել է:

- Իսկ ԱԺ-ում անհարմարություն զգացե՞լ եք կին լինելու պատճառով:

- Դա մարդու պահվածքից է կախված: Իմ հանդեպ միայն հարգանք եմ տեսել: Անհարմարություն չեմ զգացել, երբեք:

- Հիմա պատգամավորական գործունեությամբ չեք զբաղվում, սակայն պարապ էլ չեք:

- Այո, հիմա ես զբաղեցնում եմ Հանրային ռադիոյի տնօրեն Արմեն Ամիրյանի խորհրդականի պաշտոնը, և Հայաստան-Սփյուռք ծրագիրն է իմ իրավասության տակ: Ծրագիրը կոչվում է «Կամուրջ», նաև համատեղ աշխատում եմ «Երկիր մեդիայում»:

- Դուք կարոտո՞ւմ եք պատգամավորական գործունեությունը: Կուզենայի՞ք նորից լինել այդ կարգավիճակում:

- Չէի ասի, որ կարոտում եմ, բայց կուզեի այնտեղ լինել, որովհետև ահագին կիսատ աշխատանքներ թողեցի՝ կիսատ օրինագծեր, թեմաներ, որոնց մասին կուզեի շարունակաբար խոսել, կռիվ տալ:

- Դաշնակցությունից և լրագրությունից դուրս ինչպիսի՞ն է Ռուզաննա Առաքելյանը:

- Մայր եմ, անչափ սիրում եմ իմ աղջկան ու նաև խոհանոցն եմ սիրում: Հաճույքով եմ մտնում խոհանոց, բայց երբեք չեմ խորանում, չեմ ցանկանում ինձ հանձնել խոհանոցին: Սիրում եմ նաև գիրք կարդալ, դստերս հետ շախմատ խաղալ:

- Ի՞նչ խորհուրդ կտաք այն կանանց, որոնք ցանկանում են մտնել քաղաքական դաշտ:

- Թող որևէ մեկը չվարանի ասել ճշմարտությունը: Ամեն մարդ խոսի այնպես, ինչպես ապրում է: Շատ հաճախ մարդիկ խոսում են մի բանի մասին, բայց կյանքում ապրում են մի ուրիշ ձևով, այդպիսի մարդիկ են, որ հավատ են փշրում:

Անահիտ Բախշյան

«Հույս ունեմ, որ գոնե «Ժառանգությունը» չի իջեցնի նշաձողը, ոչ մի միլիմետր»

Ծնվել է 1947 թ. սեպտեմբերի 20-ին Երևանում:

1970 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը: Ֆիզիկոս:

1972-1981 թթ. աշխատել է Երևանի թիվ 103 դպրոցում՝ որպես ֆիզիկայի ուսուցիչ, 1981-1989 թթ.՝ Երևանի Շահումյանի շրջանի ժողկրթբաժնի մեթոդիստ, 1989-1998 թթ.՝ Սիամանթոյի անվան թիվ 162 դպրոցի փոխտնօրեն, 1999-2007 թթ.՝ Դ.Դեմիրճյանի անվան թիվ 27 դպրոցի տնօրեն:

2007 թ. մայիսի 12-ին Ազգային ժողովի պատգամավոր է ընտրվել համամասնական ընտրակարգով «Ժառանգություն» կուսակցությունից:

2012 թ. Ազգային ժողովի ընտրություններում առաջադրվել է մեծամասնական ընտրակարգով թիվ 8 ընտրատարածքում (ք. Երևան)

2012 թ. աշխատում է Կրթության ազգային ինստիտուտում՝ որպես փոխտնօրեն:

- Ի՞նչ ընտրություններ էիք ակնկալում, և ի՞նչ ունեցանք արդյունքում:

- Ըստ իս, ամեն տեսակի կեղծիքներն այս անգամ արվեցին շատ ավելի վարպետորեն, ու թերևս դրանով են այս ընտրությունները տարբերվում նախորդներից: Մարդկանց ձայները գնեցին, և փաստորեն ինչքան չաշխատող, օլիգարխ պատգամավոր կային, նորից կլինեն խորհրդարանում: Բոլոր մականունավորները, բոլոր նրանք, որոնց ձեռքին կուտակված է Հայաստանի հարստությունը, նորից եկան խորհրդարան՝ պաշտպանելու սեփական շահերը:

Այո, մեր հասարակությունը քվեաթերթիկներով կատարեց ընտրությունը, բայց գերադասեց չաշխատող, իրեն հարստահարող ու մարդկանց ստրկության մատնող պատգամավորին աշխատող, իր շահերն ու իրավունքները պաշտպանող օրենսդիրներից:

- Խոսքը նաև այն ընտրատարածքի մասին է, որտեղ առաջադրել էիք Ձեր թեկնածությունը:

- Այո, իհարկե, իմ ընտրատարածքի մասին է, ինչպես նաև այն ընտրատարածքների, որտեղ առաջադրվել էին իմ գործընկերներն ու դարձյալ հաջողություն չունեցան: Ահռելի քանակությամբ ընտրակաշառք է բաժանվել, և սա, ինչպես իմ գործընկեր Ստյոպա Սաֆարյանն է ասել, թրաֆիքինգի սահմանման մեջ լիարժեք տեղավորվող երևույթ էր՝ մարդկանց ձայները գնելու ու այդ ճանապարհով նրանց ստրկացնելու առումով: Ցավոք, Հայաստանում այդ առևտուրը կասեցնող կամ դրա դեմ պայքարող որևէ քայլ չեմ տեսնում:

- Մինչև վերջերս թվում էր, որ կանայք վերջնականապես երես են թեքել մեծամասնական ընտրակարգից, բայց այս ընտրություններում մեծամասնականով առաջադրված կանանց թիվը զգալիորեն մեծացել էր:

- Գուցե ավելի շատ էին, բայց փաստ է, որ կին թեկնածուները դարձյալ մնացին մեն-մենակ իրենց խնդիրներով ու ամեն ինչով: Բոլոր հասարակական կազմակերպությունները, որոնք անընդհատ խոսում էին, թե կանանց պետք է սատարել և այլն, ոչ մի կերպ չկանգնեցին կին թեկնածուների կողքին անգամ ընտրությունների օրը:

Գոնե իմ մասով հստակ կարող եմ ասել, որ ոչ մի ՀԿ ինձ օգնելու պատրաստակամություն չհայտնեց: Հետևաբար ստացվում է, որ ՀԿ-ների այն հատվածը, որը միտված է պաշտպանելու կանանց շահերը, միայն խոսում է դրա մասին, և կոնկրետ առաջարկություն կամ կոնկրետ գործ այդ ուղղությամբ նրանց կողմից գոնե ես չեմ տեսել:

- Թիվ 12 ընտրատարածքում Ձեր մրցակիցների թվում կար նաև կին թեկնածու՝ Գոհար Վեզիրյանը: Ինչպիսի՞ն էր պայքարը Ձեր միջև:

- Ընտրապայքարում կին-տղամարդ տարբերություն չկար, անձերի հարց է, և այդ առումով կին մրցակիցս ինձ ավելի շատ «խփեց», քան տղամարդիկ: Տղամարդկանց կողմից ես ոչ մի արտահայտություն ու հայտարարություն իմ հասցեին չեմ լսել: Բայց, ցավոք սրտի, ընդդիմություն ներկայացնող լրագրող գործընկերուհիս բոլորից շատ «աշխատեց» իմ դեմ, հատկապես՝ «Չորրորդ ինքնիշխանություն» թերթում իր կողմից զետեղված այն մտացածին լուրով, թե իբր ես ընտրակաշառք եմ բաժանում՝ «Second hand»-ի ապրանքի տեսքով:

Այդ քայլը իմ լեզուն ուղղակի կարճացրեց, որովհետև դրանից անմիջապես հետո դատախազությունից ինձ զանգահարեցին, հետաքրքրվեցին՝ դա այդպես է, թե ոչ, և երբ պատասխանեցի, որ բնական է՝ լուրը իրականությանը չի համապատասխանում, ինձ հակադարձեցին՝ տեսնում եք, եթե Ձերը սուտ է, ապա Ձեր ահազանգերն ընտրակաշառքների մասին ևս սուտ են: Եվ ինձ մինչև հիմա շատ հետաքրքիր է՝ ի՞նչ շահեց այդ թերթը դրանից, առավել ևս, որ դա որևէ ազդեցություն չունեցավ նրա ստացած ձայների վրա:

- Ի՞նչ եք ակնկալում նոր խորհրդարանից:

- Կանանց ներկայացվածության առումով խմբակցությունների կազմը դեռ հայտնի չէ, ու դժվար է ասել, թե այս Ազգային ժողովում որքան կին պատգամավոր կունենանք: Իսկ ընդհանուր առմամբ, ցավոք, մեր երկրում հասարակությունը ոչինչ չի ակնկալում խորհրդարանից, նույնիսկ երբ մենք էինք այնտեղ: «Ժառանգության» իմ գործընկերների հետ միասին փորձեցինք ցույց տալ, թե ինչպիսին պետք է լինի պատգամավորը, ինչին, պարզվեց, շատերը համաձայն չէին:

Ստացվում է, որ պատգամավորի գործը չէ գնալ փողոց, կանգնել մարդկանց կողքին ու բարձրաձայնել նրանց խնդիրները: Բայց մենք այդպես ենք աշխատել, քանի որ դա նաև «ԱԺ կանոնակարգ» օրենքի պահանջն է եղել, ու չեմ փոշմանում: Եվ հույս ունեմ, որ այս նշաձողը գոնե «Ժառանգությունը» չի իջեցնի, ոչ մի միլիմետր:

- Բայց այն կազմը, որ գալիս է Ձեր փոխարեն, կարո՞ղ է պահել այդ նշաձողը:

- Կտեսնենք: Ես ոչ մի երաշխիք չունեմ այսօր ճիշտ այնպես, ինչպես հինգ տարի առաջ, երբ եկավ մեր թիմը: Ոչ մեկս այն ժամանակ չգիտեինք՝ ինչն ինչոց է, ու շատերս միմյանց հետ այդ ժամանակ ենք հենց ծանոթացել: Բայց ես հույս ունեմ, որ այդ օրինակը կպահեն:

- Ինչպիսի՞ն են Ձեր հետագա պլանները, ուրվագծվե՞լ են արդեն:

- Այս պահին չգիտեմ, թե կոնկրետ ինչ եմ անելու: Կան ծրագրեր, բայց չկա ուրվագծված կոնկրետ քայլ, թե ինչ եմ անելու դրանք իրագործելու համար: Բայց այն, որ շարունակելու եմ կրթության քաղաքականության մեջ շատ գործուն մասնակցություն ունենալ, ինձ համար հստակ է:

Այն հարցերը, որ ես հինգ տարի բարձրացրել եմ, ու նաև օրենքի այն նախագիծը, որի համահեղինակներից եմ, և որն արդեն ԱԺ օրակարգում

է (խոսքը Հայաստանում համընդհանուր ներառական հանրակրթության վերաբերալ օրինագծի մասին է), ես դրա ճիշտ, առանց խեղաթյուրումների ընդունման գործում ակտիվ մասնակցություն պետք է ունենամ: Ես չեմ կարող «անտեր» թողնել այդ օրինագիծը, որի նախաձեռնողներից մեկը ես եմ:

- Իսկ կուսակցական գործունեության առումով փոփոխություններ նախատեսո՞ւմ եք: Շարունակելո՞ւ եք «Ժառանգության» շարքերում մնալ:

- Այո, ես չեմ պատրաստվում դուրս գալ կուսակցությունից:

- Այսինքն՝ կմասնակցեք նաև հունիսի 2-ին կայանալիք «Ժառանգության» համագումարին:

-Անպայման:

Լիլիթ Գալստյան

«Ես քաղաքական մարդ եմ, սակայն դա ինձ չի խանգարում լինել մշակութային և մնալ նաև կին»

Ծնվել է 1962 թ. նոյեմբերի 28-ին Երևանում:

1985 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետը, ստացել բանասերի որակավորում:

1996 թ. ավարտել է Հայաստանի ամերիկյան համալսարանի քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, ստացել քաղաքագիտության մագիստրոսի աստիճան:

2001-2002 թթ. սովորել է Եվրախորհրդի քաղաքական հետազոտությունների թբիլիսյան դպրոցում:

2006 թ.ՀՀ ԳԱԱ-ում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1986-1987 թթ. Թալինի շրջանի Աշնակ գյուղի միջնակարգ դպրոցում աշխատել է ուսուցիչ:

1986-1991 թթ.՝ եղել է ՀԼԿԵՄ Երքաղկոմի պրոպագանդայի բաժնի վարիչ:

1991-1999 թթ.՝ Համազգային հայ կրթական և մշակութային միության գործադիր տնօրեն:

1999-2005 թթ.՝ ՀՀ ԿԳՆ Միջազգային ծրագրերի համադրման և աջակցման կենտրոնի գործադիր տնօրեն:1999-ից Համազգային հայ կրթական և մշակութային միության և «Համազգային» հիմնադրամի նախագահն է:

2005 և 2007 թթ. որպես հրավիրյալ դասախոս դասավանդել է Գլենդելի համայնքային քոլեջում:

2002-ից Հայաստանի գրողների միության անդամ է, 2011-ից՝ Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի կառավարման խորհրդի անդամ:

Հեղինակ է թարգմանական երեք ժողովածուների՝«12 պատմվածք և մեկ պիես. XX դարի ամերիկյան արձակի ժողովածու (1999), Վ. Սարոյան «Հայ մուկը» (2000), «XX դարի անգլիագիր արձակ» (2003):

Արժանացել է Կանադայի դեսպանատան մրցանակի՝ կանադական գրականության լավագույն թարգմանության համար:

Միջազգային մի շարք գիտաժողովների կազմակերպիչ է, կազմկոմիտեի անդամ, գիտական ժողովածուների խմբագիր:

1990-ից Հայ հեղափոխական դաշնակցության անդամ է:

2006-2007 թթ.՝ ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի անդամ, 2007 թ. մայիսի 12-ին Ազգային ժողովի պատգամավոր է ընտրվել համամասնական ընտրակարգով ՀՅԴ կուսակցությունից:

2012 թ. Ազգային ժողովի ընտրություններում առաջադրվել է համամասնական ընտրակարգով Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունից:

- Տիկին Գալստյան, մինչ անցնելը Ձեր քաղաքական գործունեությանը, նախ պարզենք՝ ով էր Լիլիթ Գալստյանը մինչ պատգամավոր դառնալը:

- Պատահական չեմ դարձել պատգամավոր: Մինչ այդ հասարակության գոնե մի հատված ինձ գիտեր իմ մշակութային, գրական, հասարակական գործունեությամբ: Հաճախ եմ կրկնում, որ կյանքս երկու հավասար հոսանքներից է բաղկացած՝ մշակույթ և քաղաքականություն. երկու բնագավառն էլ մեծ նվիրում են պահանջում, իսկ ես էությամբ կատարելապաշտ եմ, և շատ թանկ է արժենում երկուսին հավասարապես նվիրվելը: Հաճախ անկեղծության պահերին ինքս ինձ հարցնում եմ՝ եթե ընտանիք ունենայի, կկարողանայի՞ այս ոլորտներում այսքան գործ կատարել՝ երբեմն ինքնահրկիզման չափ, ինքս ինձ այրելով:

Բայց սա է կյանքը, իմ որդեգրած ուղին ու հավատամքը, ու չեմ էլ պատրաստվում խմբագրել: Կարևորը համոզմունքդ է ու ինքդ քեզ հետ հաշտ լինելը. անում եմ այն, ինչ սիրում եմ: Մենք գալիս ենք մեր մանկությունից, իմ տեսակը քաղաքացու տեսակ է, և երբ քաղաքացին քո մեջ զորավոր է, ցանկացած ոլորտում այդ տեսակն իր արտահայտվելու ձևը գտնում է:
Երբեք մտքովս չէր անցնում, որ քաղաքականություն կմտնեմ, ես ստեղծագործող տեսակ եմ. համալսարանի առաջին կուրսից թարգմանություններս ու հոդվածներս լույս էին տեսնում «Գարուն» ամսագրում:

Երբ փոքր էի, ասում էի՝ մեծանամ՝ գրող եմ դառնալու: Բայց հետո, երբ խելոքացա, ինձ ճնշեցին Հեմինգուեյն ու Սարոյանը, հասկացա, որ նրանց պես չեմ գրի, սկսեցի թարգմանել, վայելեցի գտած նախադասության հաճույքը:
Այդ ժամանակ մտածում էի, որ կուսակցությունները միջանցք են՝ ազատությունդ կաշկանդող, բայց հետո եկավ 88-ը, ու հստակ էր՝ պայքարելու դաշտ կա, ու առանց կուսակցության քաղաքացիական, գաղափարական և քաղաքական հավակնություններդ չես իրացնի:

Առանց վարանելու ընտրեցի Դաշնակցությունը, արդեն 23 տարվա դաշնակցական եմ:

Համալսարանն ավարտելուց հետո Ամերիկյան համալսարանի քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների բաժինն ավարտեցի: Սովորեցի Եվրախորհրդի քաղաքական հետազոտությունների դպրոցում: Հետո թեկնածուական թեզ պաշտպանեցի Սասունի բարբառին նվիրված ուսումնասիրությամբ՝ արտահայտելով երախտագիտություն մեր սասունցի ընտանիքին ու արմատներիս:

1991-ից Համազգային հայ-կրթական և մշակութային միության գրասենյակի տնօրենն եմ, հետո՝ 2007-ին, հիմնադրամ ստեղծեցինք, որի նախագահն եմ: Կրթական-մշակութային լուրջ գործունեություն ենք իրականացնում Հայաստանում և Սփյուռքում:

- Ինչպե՞ս եղավ ՀՅԴ ցուցակում ընդգրկվելու առաջարկությունը և հետո խորհրդարանում աշխատելը:

- Մինչ այդ արդեն ՀՅԴ Գերագույն մարմնի անդամ էի և կարծում եմ՝ ոչ պատահական մարդ քաղաքական կյանքում: Այո, քաղաքական մարդ եմ, սակայն դա ինձ չի խանգարում լինել մշակույթի մարդ և մնալ նաև կին: Հայաստանում կարծրատիպեր կան. կանայք կա՛մ պիտի լինեն «ՌԱՅԽ-ի կանանց» կաղապարի մեջ, կա՛մ էլ ինչ-որ մեկը պիտի թևից բռնի, բերի համամասնական ցուցակ ու թելադրի՝ ինչ անել, ինչ ասել:

Ես հեռու եմ և զզվում եմ կարծրատիպերից: Ինձ համար կարևորն իմ ներքին դատավորի հետ հաշտ լինելն է: Սկզբունքներ ունեմ ու գնում եմ սկզբունքներիս հետևից: Հայաստանում շատ հաճախ չեն ներում ազատությունդ, սկզբունքդ, դեգրադացված արժեքներով միջավայրում ենք ապրում, որտեղ ստորաքարշությունը, քծնանքն ու հարմարվողականությունն են հարգի: Իմ տեսակի համար դժվար է:

Ես ազատ մարդ եմ, չեմ հետևում ինչ-որ մեկի դիրիժորական փայտիկին, և միակ ձևաչափողն իմ կուսակցության գաղափարախոսությունն ու իմ հետագծի առջև պատասխանատվությունն է:

- Տիկին Գալստյան, քաղաքականության մեջ մտնելու նպատակը ո՞րն էր:

- Ես ուզում եմ ավելի լավ հայրենիք ունենալ, լավ հայրենիք ունենալու սևեռուն գաղափարն է դրդում լինել քաղաքական մարդ: Ես հավատում եմ ժողովրդավարության արժեքներին, մարդու իրավունքներին, կարևորում

եմ արժանապատվության, ազատության, անկեղծության, սիրո, նվիրումի արժեքները:

- Ձեր պատգամավորական գործունեությունը բուռն էր, և մոնիթորինգի արդյունքում Դուք տասը լավագույն պատգամավորների շարքում էիք: Եկեք ամփոփենք պատգամավորական գործունեության հնգամյակը, ինչպիսի՞ն էիք խորհրդարանում:

- Ես պայքարող էի, անկեղծ ու համառ, երբեմն՝ մաքսիմալիստ, հիմնականում՝ սիրված: Գուցե ոմանք էլ չսիրեցին, բայց հաստատ հարգեցին:

- Ձեր կյանքում մանդատ ստանալուց հետո շա՞տ բան փոխվեց:

- Այո, պատասխանատվությունս մեծացավ, հոգսերը շատացան, մեծացա, նաև՝ արտաքինով. երբ շատ բան ես տեսնում և հասկանում, անհետևանք չի անցնում: Շատ դառնացա, հասունացա, կյանքն ավելի լավ ճանաչեցի: Ես անտարբեր չեմ, ու կյանքի դառնությունները հոգուս վրա վերքեր են թողնում:

- Ըստ Ձեզ՝ կարողացա՞ք ինչ-որ բան փոխել:

- Այո, կարծում եմ՝ քաղաքական գունապնակի մեջ իմ տեսակը գույն ավելացրեց, նոր տեսակ բերեց, ես ընկալվեցի: Նաև 11 օրենքների հեղինակ եմ, որոնց մեծ մասը թեթև չէին: Կենդանի կատարման մասին օրենքի հեղինակը ես եմ, և երաժշտական կյանքում որոշ սանիտարիա տեղի ունեցավ: Հայոց լեզվի պաշտպանությանն ուղղված ամրագրումներով օրենքը փոխվեց: Կրթության մասին օրենքում որոշակի փոփոխություններ եղան:

- Ինչպիսի՞ն կցանկանայիք տեսնել Հայաստանն ապագայում:

- Գիտեք, փոխելու շատ բան կա, այսօր Հայաստանը տկարանում և հյուծվում է արտագաղթի, աղքատության, անհեռանկարայնության ճիրաններում: Գոնե մոտ լինեինք այն Հայաստանին, որ ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ:

Ես չեմ թաքցնում՝ կցանկանայի լինել խորհրդարանում, թեև երջանիկ մարդ եմ, որ մանդատի հետ իմ հեղինակությունը չմարեց, բայց ես կուզենայի լինել խորհրդարանում, և թեպետ այդ ինստիտուտն այսօր վարկաբեկված է, այդ ամբիոնն օգտագործել օրենսդրական գործունեության համար: Մեր երկիրը արժեքների հեղափոխության կարիք ունի: Իսկ ԱԺ ամբիոնից կարելի էր արժեքներ փոխանցել:

- Անկեղծ ասած, Դաշնակցության ցուցակի առնչությամբ զարմանքս մեծ էր, երբ Ձեր անունը գոնե առաջին տասնյակում չտեսա, եթե չասեմ՝ առաջին հնգյակում:

- Բոլորն էին զարմացել:

- Ի՞նչ եղավ, ի՞նչն էր պատճառը:

- Չգիտեմ, անկեղծ ասած՝ պատասխան չունեմ: Ինձ համար կարևորն այն է, որ ինձ մանդատից հետո չմոռացան, և իմ խոսքն այսօր էլ հասու է շատերին: Նաև համալսարանում եմ դասավանդում, երիտասարդների հետ աշխատելն ինձ մեծ հաճույք է պատճառում: Բացի այդ, գրողն է սկսել իմ մեջ ակտիվանալ, երևի մեծանալու նշան է (ծիծաղում է):

- Ձեր գործընկերներից շատերը հաճախ բողոքում են, որ կուսակցություններում կանանց լուրջ չեն վերաբերվում, և նրանք ստիպված են կրկնակի, եռակի ավելի շատ աշխատել հաջողության հասնելու համար: Դուք նման վերաբերմունք կուսակցությունում զգացե՞լ եք: Եվ առհասարակ Ձեր նախաձեռնություններին կուսակցությունն ի՞նչ աջակցություն է ցույց տալիս:

- Այս խնդիրները պետք է քննարկել քաղաքական մշակույթի և երկրի ժողովրդավարության մակարդակի համատեքստում: Կուսակցությունների մեծ մասը կայացած չէ, ներքին ժողովրդավարության խնդիրներ ունեն:

Նաև կարծրատիպեր կոտրելու խնդիր ունենք՝ «ՌԱՅԽ-ի կանայք» կամ «խոհանոց» մոդելն է գերակշռում: Կանանց ազդեցության արհեստական նեղացում կա: Որպեսզի կանայք կարողանան քաղաքական օրակարգում դեր ունենալ, նաև ներքին համախմբում է անհրաժեշտ: Շատ հաճախ կանայք, հայտնվելով դաժան մրցակցային պայմաններում, ներտեսակային քայքայիչ պայքար են սկսում:

Բացի այդ, տղամարդկային շովինիզմն էլ կենսունակ է: Տեսեք, կանայք մեծամասնականով չեն ընտրվում, որովհետև նրանց գոնե մեծ մասը պարկեշտություն ունի, բացի այդ, փող չունեն, որ բաժանեն, քրեաօլիգարխական բուրգերում չկան… Թեև կան նաև ներկայիս խաղի կանոնների մասնակիցներ:

- Հետաքրքիր է՝ ի՞նչ պատկերացումներ ունեիք մինչ խորհրդարան մտնելը, և փոխվեցի՞ն դրանք Ազգային ժողովում:

- Առանձնապես մեծ հիասթափություն չեմ ապրել, որովհետև մինչ մտնելն արդեն գիտեի՝ ինչ աշխատանք է լինելու, ինչ մթնոլորտ: Ես պատգամավորի կյանքի ռիթմով եմ ապրել, և դա ինձնից ահռելի լարում է պահանջել: Մեկ օրվա մեջ և՛ մամուլի ասուլիս, և՛ օրենքի նախագծի քննարկում, և՛ հանդիպում պատվիրակությունների հետ:

Խորհրդարանական լինելը, եթե այն ընկալում ես բառի բուն իմաստով ու տարողությամբ, տառապանք է, հատկապես՝ ոչ հիմար կնոջ համար. կանանց խոշորացույցով են հետևում, անգամ ամենափոքր սխալդ չի ներվում:

Տղամարդիկ միմյանց հետ լեզու են գտնում, միմյանց սխալները ներում են, բայց սպասում են, որ կինը սխալվի, չարախնդան ու դեռ ոտքով էլ խփեն մեջքին, որ փոսն ընկնի: Մենք նաև պարտավոր ենք միշտ հարդարված ու խնամված լինել: Այո, հրապարակային կյանքը նաև լրացուցիչ պատասխանատվություն ունի:

- Կին պատգամավորներից մեկը մի առիթով անկեղծացավ ու ասաց, որ խորհրդարան մտնելիս իրեն զգում է կազարմայում: Ազգային ժողովում աշխատելու ընթացքում անհարմարավետություն զգացե՞լ եք:

- Տհաճ դեմքեր կային, անշուշտ, բայց նրանց անհաղորդ եմ եղել, չեմ նկատել: Իմ ներաշխարհը նրանք չենք կարող խաթարել:

- Այս մեկ տարվա ընթացքում, թեպետ պատգամավորական գործունեություն չեք ծավալել, Ձեր մասին շատ խոսվեց որպես «Օգնիր եղբորդ» մարդասիրական նախաձեռնության հեղինակի:

- Մեր նախաձեռնությունը համարվեց տարվա լավագույնը: Նախաձեռնությունը Դաշնակցության մեջ ծնվեց: Իրավունք չունեինք անտարբեր նայել մեր եղբայրների ու քույրերի ողբերգությանը: Պատերազմը կոտրում էր մեր ամենակենսունակ համայնքի մեջքը:

Ուրախ եմ, որ մեր հայրենակիցներին աջակցելու նախաձեռնությանը աջակցեցին մեր հասարակության տարբեր շերտեր: Անելիքներս շատ են, մշակութային ծրագրերի հագեցած օրակարգ ունեմ:

- Դաշնակցությունից, մշակույթից, քաղաքականությունից դուրս ինչպիսի՞ն է Լիլիթ Գալստյանը:

- Բնություն եմ շատ սիրում, հոգիս մաքրվում է բնության գրկում, լողալ եմ շատ սիրում: Ինձ թվում է, որ ինչ-որ կյանքում դելֆին եմ եղել: Իմ տունն եմ սիրում և կարոտում եմ, կարդալ եմ սիրում ու նաև՝ խոհանոց: Ինձ համար սկզբունք է՝ ինչ անել, անել արվեստով: Այդ սկզբունքը գործում է նաև խոհանոցում: Մոտավորապես ոչինչ չեմ անում:

- Ի՞նչ խորհուրդ կտաք այն կանանց, որոնք նոր են մտել քաղաքական դաշտ, կամ այն կանանց, որոնք քաղաքականությամբ զբաղվելու ցանկություն ունեն:

- Կյանքում մեկ սկզբունք ունեմ՝ նախ լինել ինձ հավատարիմ, չդավաճանել սկզբունքներիս: Կյանքում ոչինչ հեշտ չի տրվում. նվիրումը, համառությունը, անկեղծությունը և, անշուշտ, գիտելիք-ինտելեկտն են իմ զենքերը:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2012 թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ԿԱՆԱՅՔ

Լիլիթ Մակունց *– առաջադրվել է համամասնական ընտրակարգով «Հայ ազգային կոնգրես» կուսակցությունների դաշինքից*

Նվարդ Մանասյան *- առաջադրվել է համամասնական ընտրակարգով Հայ հեղափոխական դաշնակցության կողմից*

Նատալյա Մարտիրոսյան *- առաջադրվել է համամասնական ընտրակարգով «Հայ ազգային կոնգրես» կուսակցությունների դաշինքից*

Սաթիկ Մեյրանյան *- առաջադրվել է մեծամասնական ընտրակարգով թիվ 4 ընտրատարածքում (ք. Երևան)*



Լիլիթ Մակունց

«Պետք է լինես սկզբունքային և որդեգրած արժեքներին հավատարիմ»

Ծնվել է 1983 թ. նոյեմբերի 7-ին Երևանում:

2003 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետը: 2003-2005 թթ. սովորել է նույն ֆակուլտետի մագիստրատուրայում: Համալսարանական տարիներին ակտիվ ներգրավված է եղել ուսանողական խորհրդի աշխատանքներում, 2004-2012 թթ. համալրել է Լիբերալ կուսակցության շարքերը, եղել ՀԼԿ երիտասարդական կազմակերպության ղեկավար, քաղխորհրդի անդամ: Ներգրավված է եղել նաև տարբեր երիտասարդական նախաձեռնություններում:

2005 թվականից դասավանդում է Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանում:

2012 թ. Ազգային ժողովի ընտրություններում առաջադրվել է համամասնական ընտրակարգով «Հայ ազգային կոնգրես» կուսակցությունների դաշինքից:

- Ինչպե՞ս մտաք քաղաքական դաշտ, ի՞նչն էր շարժառիթը, ո՞ւմ հետ եք խորհրդակցել:

- Քաղաքականության մեջ եմ 2004-ից, այդ ժամանակ անդամագրվեցի Հայաստանի լիբերալ կուսակցությանը, այնուհետև 17 կուսակցությունների պես մենք էլ մաս կազմեցինք Հայ ազգային կոնգրեսին: Այն ժամանակ ազատական կուսակցությունը միայն ՀՀՇ-ն էր, հետագայում որոշ փոփոխություններ տեղի ունեցան, բայց այն ժամանակ ՆԱՏՕ-ի հետ կապված, և եթե չեմ սխալվում հիմա էլ, դրույթ կար Հայոց համազգային շարժման ծրագրում: Ինձ համար անդամագրումը սկզբունքային էր և վերաբերում էր անվտանգությանը: Եթե ցանկանում ես անդամակցել Եվրամիությանը, չես կարող մեկ այլ անվտանգության ուժի ներկայացուցչի հետ կապել քո ապագան: Չես կարող լինել ԱՊՀ անդամ և միաժամանակ ձգտել Եվրամիության: Սա կար Լիբերալ կուսակցության ծրագրում, բացի այդ, նոր ձևավորվող շարժման մեջ շատ կանայք կային, նաև՝ քաղաքական խորհրդում: Ինձ առաջարկեցին, ես էլ համաձայնվեցի:

Որևէ մեկի հետ չեմ խորհրդակցել: Ծնողներիս եմ տեղեկացրել, որոնք դեմ չեն եղել: Հատկապես երիտասարդի համար շատ բարդ է միանգամից ընդդիմադիր դիրքերից ներկայանալ, որովհետև վերցնում ես շատ մեծ պատասխանատվություն, բեռը մեծ է: Շատ երիտասարդներ չեն դիմանում գայթակղությանը: 2004-ից ի վեր ունեցել եմ կուսակցական ընկերներ, որոնք, ցավոք, այսօր ինձ հետ չեն: Մենք միասին պայքարել ենք թե՛ սահմանադրական հանրաքվեի ժամանակ, թե՛ հետագա ընտրությունների ժամանակ, բայց հետո, ինչ-ինչ պատճառներով, նրանք որոշեցին, որ կարող են լինել այն թիմի անդամ, որին քննադատում էին: Ես ինձ մարտնչող անձնավորություն եմ համարում: Չեմ հիշում՝ ուսանողական տարիներին ինչպես եմ դրսևորվել, բայց երբ հետագայում դասախոսներն իմացան, որ Հայ ազգային կոնգրեսի համակիր եմ ու հետևորդ, ասացին, որ չեն զարմանում և սպասում էին ինձնից նման որոշում:

- Ի՞նչ սկզբունքով է կազմվել ՀԱԿ-ի համամասնական ցուցակը:

- ՀԱԿ-ում բազմաթիվ կանայք են ներգրավված, ընդ որում համամասնությունը խախտված է հօգուտ կանանց: Սկզբում կանայք ավելի քիչ էին, բայց հետո այդ հարցը կարգավորվեց: Մեր դաշինքը կանանց ներգրավվածության առումով ազատական է: Կանայք մեզ մոտ հավասարապես որոշում կայացնողներ են: Մեզ մոտ որոշումները կայացվում են խորհրդարանական մոդելի սկզբունքով: Կան հանձնաժողովներ, և կանայք իրենց դերն ունենում են որոշումների կայացման հարցում:

- Ձեր վերաբերմունքը քվոտաներին:

- Առհասարակ ես դեմ եմ քվոտաներին, բայց այս փուլում դա անհրաժեշտություն է, և այդպես կլինի մինչ այն պահը, երբ կարողանանք առանց քվոտաների հասնել հաջողության:

- Աջակցո՞ւմ է կուսակցությունը կին անդամների առաջընթացին:

- Մեր դաշինքում կան այլ կուսակցությունների կին առաջնորդներ, որոնք առաջին քսանյակում են: Առհասարակ կանայք դերակատարության առումով կաղում են, նաև Հայ ազգային կոնգրեսից դուրս: Այդ պրոցեսը խմորման մեջ է, և պետք է շատ աշխատենք, որ խմորման գործընթացը ճիշտ ընթանա: Պատճառն այն չէ միայն, որ տղամարդն է մեղավոր:

Խնդիրը կարծրատիպերն են, և այդ կարծրատիպերը կոտրելու առաջադրանքներն ու պատասխանատվությունը ոչ միայն պետք է տղամարդկանց ուսերին լինի, այլև մեր, որովհետև շահառուն մենք ենք: Խնդիրը նաև անհաջող կանանց նախադեպերի կարծրատիպերը կոտրելն է և այն մտածելակերպը, թե եթե կինը ակտիվ քաղաքականության մեջ է կամ բիզնեսում, ուրեմն պետք է լինի առնական: Այդ կարծրատիպն էլ կոտրվելու կարիք ունի: Կանայք փորձում են ընդօրինակել տղամարդկային հատկանիշներ, բայց դրա կարիքը չկա, քանի որ մենք ունենք կարևոր զենքեր, որոնցից մեկը բանակցելու ունակությունն է: Մենք, կարծում եմ, հաջող բանակցողներ ենք:

- Եթե չեմ սխալվում, առաջին անգամ եք առաջադրվում:

- Այո:

- Սակայն ասացիք, որ 2004-ից քաղաքական պայքարում եք: Ի՞նչ փորձ եք ձեռք բերել նախորդ ընտրություններից:

- Հասկացել եմ շատ կարևոր բան. պետք է լինես սկզբունքային և որդեգրած արժեքներին հավատարիմ: Լինես անկեղծ ու հավատաս նրան, ինչ անում ես:

- Մասնակցե՞լ եք կանանց լիդերության դպրոցներին:

- Մասնակցել եմ ոչ թե կանանց, այլ ընդհանուր լիդերության դպրոցների, շատ միջոցառումների եմ մասնակցել: Ձինված ու կրթված եմ այդ առումով:

- Ի՞նչ եք կարծում, Հայաստանում կանանց նկատմամբ խտրա-կանություն կա՞: Ձեր նկամամբ դա երբևէ զգացե՞լ եք:

- Իմ կուսակցությունում նման խտրականության զոհ չեմ դարձել, և երևի այդ առումով իմ բախտը բերել է: Սակայն նկատել եմ, որ այլ կուսակցություն-ներում խտրականություն կա՝ վերաբերմունքի առումով: Կանայք այնքան էլ լուրջ չեն ընկալվում, եթե կա ընտրության հարց, ապա կուսակցությունը նախապատվությունը տալիս է տղամարդուն: Բայց կարծում եմ՝ ժամանակը հօգուտ կանանց է գործում: Ուսանողների հետ շփվելիս էլ զգում եմ, որ որոշ տեղաշարժ կա: Ոչ միայն աղջիկների առումով, որոնք ինքնակրթվում ու կատարելագործվում են, դառնում լիդերներ: Տղաների՝ ապագա կնոջ կերպարի պատկերացումներում եմ որակական փոփոխություններ նկա-տում: Կինը պետք է լինի կրթված, ունենա աշխատանք, իհարկե, չմոռանա

ամուսնու և երեխաների մասին, նաև առաջ մղի ամուսնուն կարիերայի առաջխաղացման գործում:

- Որքանով է աջակցում Ձեր շրջապատը Ձեր քաղաքական գործունեությանը:

- Իմ ընկերների շարքում չեն եղել մարդիկ, որոնք ինձ կասեն՝ դե դու աղջիկ ես, մի մասնակցիր հանրահավաքներին, կամ քաղաքականությունը կնոջ տեղը չէ: Չկան մարդիկ, որոնք ինձ կնախատեն ու հետ կպահեն: Ընդհակառակը՝ կան մարդիկ, որոնք խրախուսել են և ասել՝ կցանկանային, որ շատերը լինեին ինձ նման, մասնակցեին և իրենց իրավունքները պաշտպանեին:

- Ովքե՞ր են Ձեր ընտրազանգվածը:

- Իմ ընտրազանգվածն այն մարդիկ են, որոնք ձայն կտան ՀԱԿ-ին, որպեսզի Լիլիթ Մակունցն անցնի խորհրդարան, այն մարդիկ են, որոնք հասկանում են՝ այն ինչ մենք անում ենք, զուտ քաղաքականության խնդիր չէ, սա Հայաստանի ապագայի խնդիրն է: Արտագաղթը կանխելու խնդիր է, որպեսզի այն երիտասարդները, որոնք այսօր, սոցիալ-տնտեսական պայմաններից պարտադրված, լքում են Հայաստանը, մնան երկրում: Ընտրազանգվածն այն մտահոգ քաղաքացին է , որն անպայման մեզ ձայն է տալու: Այն մարդը, որն ապրելու է Հայաստանում, պայքարելու է իր իրավունքների համար և պատասխանատվության զգացում ունի և հասկանում է, որ մեր երկրի տերն ինքն է, ոչ թե մի երրորդ անձ:

- Կանայք իրենց ոճը պետք է ունենա՞ն քաղաքականության մեջ: Այն տարբերվո՞ւմ է տղամարդկանց ոճից:

- Չգիտես ինչու, ոչ միայն Հայաստանում, այլև աշխարհում կածրատիպ կա, որ տղամարդու հատկանիշներ պետք է ունենան, որ հասնեն քաղաքական որևէ բարձունքի կամ որոշ պաշտոններ ստանան: Ես համամիտ չեմ: Կանայք պետք է կնոջ մոդելը, քաղաքական գործիչ կնոջ, բիզնես լեդիի, հասարակական գործիչ կնոջ ներկայիս մոդելը փոխելու պատասխանատվություն ստանձնեն: Կինը պետք է մնա կանացի, պետք է մնա իր ամպլուայի մեջ: Մենք կարող ենք ցանկացած խնդրի լուծում տալ՝ առանց մեզ բնորոշ հատկանիշները փոխելու: Չեմ կարծում, որ դժվար կլինի լինել կանացի և միաժամանակ լուծել քաղաքական հարցեր: Խնդիրը սկզբունքայնությունն է: Եթե լինես հավատարիմ քո որդեգրած արժեքներին, չեմ կարծում, որ ձայնը բարձրացնելով կամ տղամարդուն հատուկ պահվածքով ներկայանաս, ու դրանից խնդիրներն էլ ավելի հեշտ կլուծվեն: Ընդհակառակը՝ կնոջ համար այդպես ավելի դժվար կլինի:

- Ի՞նչ կցանկանայիք փոխել քաղաքականության մեջ:

- Շատ մարդիկ կարծում են, որ կարելի է շատ բան փոխել միայն քաղաքացիական ակցիաների միջոցով: Անշուշտ, դա շատ կարևոր է, բայց քաղաքացիականը պետք է վերածվի քաղաքականի: Թերացումներ շատ կան մարդու իրավունքների, սոցիալ-տնտեսական ոլորտում: Այս առումով անելիքները բազմաթիվ են:

- Ինչպիսի՞ն է ՁԼՄ-ների վերաբերմունքը կին թեկնածուների նկատմամբ:

- Ճիշտն ասած, բացասական վերաբերմունք չեմ նկատել, և դա շատ ողջունելի է, քանի որ ՁԼՄ-ների աշխատակիցները կանայք են, և նրանց համար էլ ուրախալի է կին թեկնածու ունենալը: Մենք ունենք ՁԼՄ-ների կին ղեկավարներ, որոնք որոշել են մտնել քաղաքական դաշտ և կարծում են, որ հարցերը պետք է լուծել քաղաքական դաշտում:

- Հույսեր կապո՞ւմ եք կանանց հասարակական կազմակերպությունների օժանդակության հետ:

- Անկեղծ ասեմ, ինձ համար օտար և խորթ է գենդերային հարցերի արծարծումը: Ես ֆեմինիստ չեմ: Երկու սեռերին գնահատում եմ հավասար հարթության մեջ: Հատուկ շարժումների կարիք չկա, պետք է ուղղակի խրախուսել կանանց, որ մտնեն ակտիվ քաղաքական-հասարակական դաշտ: Չեմ ընդունում որևէ մեկի գերակայությունը մյուսի նկատմամբ: Երկուսն էլ սահմանադրորեն ունեն նույն իրավունքները, երկուսն էլ իրենց բնույթով ունեն հավասար հնարավորություններ, հետևաբար պետք է լինի ազատ մրցակցային դաշտ:

Նվարդ Մանասյան

«Ես կգերադասեի հեջաք հագնել, քան հասկանալ, որ ներսում կրում եմ անտեսանելի հեջաք»

Առաջադրվել է Հայ հեղափոխական դաշնակցության համամասնական ցուցակով:

Ծնվել է Երևանում: 1995 թ. ավարտելով Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի կիբեռնետիկայի ֆակուլտետը՝ մագիստրոսական ուսումը շարունակել է Հայաստանի ամերիկյան համալսարանի քաղաքագիտության բաժնում, ապա երկրորդ մագիստրոսական կոչումը ստացել է ԱՄՆ Ցինցինատիի համալսարանի պլանավորման դպրոցում՝ մասնագիտանալով հանրային քաղաքականության և տնտեսական զարգացման ոլորտներում:

2007-ից դասավանդում է Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում և ղեկավարում է համալսարանի որակի ապահովման կենտրոնի աշխատանքները: Դասավանդում է նաև Երևանի տնտեսագիտական համալսարանում:

2010 թ. սեպտեմբերից Հայ կրթական հիմնարկության կրթաթոշակային ծրագրի կառավարման խորհրդի նախագահն է: 2009-ից Եվրահանձնաժողովի կողմից «Տեմպուս» ծրագրի շրջանակներում ձևավորված Բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետների խմբի անդամ է:

- Ինչպե՞ս ստացվեց, որ դասախոսը մտավ քաղաքականություն: Քաղաքականությունը Ձեր կարիերայի շարունակությո՞ւնն է, թե՞ զգացիք, որ եկել է այն ժամանակը, երբ Ձեր տեսակի անհրաժեշտությունը զգացվում է:

- 2003-ին որոշում եմ կայացրել անդամագրվել Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությանը: Դա գիտակցված որոշում էր: Կուսակցությունը երկրի խնդիրների հետ էր, երկրի դժվարությունների հետ: Ես ուզում եմ ապրել Հայաստանում, չեմ գնալու իմ երկրից, դա հաստատ է, և ուզում էի հասկանալ՝ իմ երկիրը տեր ունի՞: 2003-ին չէի զգում, որ ամեն ոք՝ որպես քաղաքացի, որպես ակտիվ դերակատար, իրեն իր երկրի տեր է զգում: Ու տեսա, որ կան մարդիկ, որոնք իրենց գործողություններով երկրի տերը լինելու և հանրային շահ հետապնդելու պատասխանատվություն ունեն:

- Դուք հաճա՞խ եք գենդերային խտրականության հետ կապված խնդիրների, երևույթների հանդիպում:

- Հասարակության մեջ մենք հազարավոր խնդիրներ ունենք: Կանանցից հազարավոր ակնկալիքներ կան, որոնք իրականությանը չեն համապատասխանում: Տնտեսական առումով անհավասարություն կա: Եկեք հաշվենք, թե այսօր քանի կին ձեռնարկատեր ունենք, և եթե ընդհանուր համախառն ներքին արդյունքի համեմատությամբ նայենք, թե դրանց որ տոկոսն ունի կապիտալ, և այդ տվյալները համեմատենք տղամարդկանց հետ, ապա պարզ կդառնա, որ դա արդեն անհավասարություն է, մենք անհավասար պատկերացում ունենք, ու մեր ակնկալիքները կանանցից այլ են:

Եթե մեդիաքաղաքականությանը նայեք, կնոջը փոքր, նեղ դեր են տվել: Կինը պետք է միշտ լինի կիսամերկ, գեղեցիկ, միշտ երիտասարդ: Բայց պարզվում է, որ կանայք նաև տղամարդկանց հավասար ծերանում են, մենք միշտ երիտասարդ չենք: Կանայք տղամարդկանց հավասար են մտածում: Բայց չգիտես ինչու, մեզանից չեն սպասում, որ կարող ենք մտածել, բնական գիտություններով զբաղվել, կարիերա ստեղծել, չենք կարող իրավապահ մարմիններում աշխատել...

Օրենքով կարող ենք, սահմանափակում չկա, բայց չեն ակնկալում, որ կարող ենք լինել երկրի պաշտպան: Անկախ այն հանգամանքից՝ կընտրվեմ, թե ոչ, դրան պետք է հասնենք: Օրենքով ես համարվում եմ Հայաստանի Հանրապետության քաղաքացի, բայց մենք՝ կանայք, հասարակական շարժումներում, քաղաքացիական ակտիվ հասարակությունում հաճախ չենք նկատվում: Կուսակցություններում կանանց ակտիվությունն անհամեմատ փոքր է: Պատկերացումները, որ մի օր կունենանք կին նախագահ, կին վարչապետ, խորհրդարանում կունենանք սեռերի հավասարակշռված ներկայացվածություն, կազատվենք քվոտավորումից, իրականությունից շատ հեռու են: Քվոտավորումը լավ կյանքից չի առաջացել:

Պետք է տեսնենք, թե կինն այսօր ինչ կարող է անել և ինչի հնարավորություն ունի: Շատ մեծ հաշվով կանանց ռեսուրսը չի օգտագործվում: Համալսարանում փայլուն մարդիկ են սովորում, բայց քանի որ հասարակության մեջ փոխհամաձայնություն չկա, կինը չի կարողանում նեղ սահմանափակումները հաղթահարել, այդ նորմերում կինը տեղ չունի, նա միայն պետք է լինի խոհանոցում: Եվ այդ ամբողջ պաշարը, որ կինն ունի, չի օգտագործում: Այդ նորմերը, որ տարիներ շարունակ մեր վզին են փաթաթել և հասցրել պետական ամենաբարձր մակարդակի, կնոջը մրցունակ լինելու հնարավորություն չեն տալիս: Լավ օրենքներ ունենք, բայց իրականությունն ու սահմանադրությունը տարբեր են:

- Ձեր կուսակցությունում խտրականություն զգացե՞լ եք:

- Որպես կին՝ խտրականությունը կաշվի վրա զգում ես ծնված օրվանից ոչ միայն Հայաստանում, այլև ամենուր, և պետք է անընդհատ ինքնահաստատվես: Չեմ հասկանում այն կանանց, որոնք քաղաքական գործունեության ճանապարհին իրենք իրենց մերժել են, որ հասնեն ինչ-որ բանի, ձեռք են բերել տղամարդկային հատկություններ: Սա միայն Հայաստանում չէ, ամենուր է: Կուսակցության մեջ էլ նույն տղամարդիկ են, նույն գաղափարներով, նույն մտածելակերպով: Չափազանց դժվար էր անհատականությունդ դրսևորելը, հավասար պայմաններում գտնվելը:

Կուսակցությունից դուրս շատ են եղել խոսակցություններ, թե քաղաքականությունը, հանրային կյանքը կնոջ տեղը չէ: Նման պատկերացումները հայ հասարակությունում տարածված են, ու դա երբեմն թափանցում է նաև կուսակցություն: Բայց եթե համեմատեմ, ապա տասը տարի Դաշնակցության ցանկում կար մեկ կին, այսօր նրանք երեքն են: Երիտասարդների շարքում աղջիկները շատ են ու ակտիվ: Միջսեռային հարաբերություններն էլ ընկերային են, դիմադրությունը կնոջ հանդեպ ավելի քիչ է: Այս տարիների ընթացքում կանանց նկատմամբ վստահությունը մեծացել է: Իհարկե, արտաքինին, հագուկապին ու գեղեցկությանը նայելու են, և դա չի փոխվելու, բայց այսօր ձևին զուգահեռ ուշադրություն են դարձնում նաև բովանդակությանը: Հասկանում են, որ միայն արտաքինն այսօր բավարար չէ:

- Այս տարի ընդգրկվել եք Դաշնակցության նախընտրական ցուցակում, և մեծ է հավանականությունը, որ կանցնեք խորհրդարան: Ինչո՞ւ եք եկել:

- Անցողիկ լինել-չլինելու մասին երբևէ չեմ մտածել, ու անկեղծ ասած, նման հարց չի էլ քննարկվել: Այս պահին ինձ տեսնում եմ ակտիվ քաղաքացիական գործունեության մեջ: Չեմ պատրաստվում միայն մասնագիտական գործունեությամբ քայլեր անել, չեմ ուզում լռել և ցանկանում եմ, որ Հայաստանում հանրային շահը վերադարձվի հանրությանը: Այս խորհրդարանը, այս քաղաքական ընթացքը պետք է փոխի մտածելակերպը, որ երկրի տեր լինել չի նշանակում պաշտոն ունենալ: Պաշտոն ունենալ նշանակում է ծառայել պետությանը: Պետության տերը պետք է լինեն քաղաքացիները: Եվ ես ուզում եմ լինել երկրի քաղաքացի:

- Կանայք ի՞նչ կբերեն քաղաքական դաշտ, ի՞նչ կփոխվի հասարակությունում:

- Սոցիալական արդարություն, հավասարակշռվածություն, բազմազանություն, տեսանկյունների բախում: Հասարակության 50 տոկոսը չի մասնակցում քննարկումներին, ուրեմն 50 տոկոսով աղքատ ենք, 50 տոկոսին ստերիլիզացրել ենք, ասել ենք՝ գնա խոհանոց, մեռիր ննջարանում, 40-ից հետո էլ կյանք չունես: Ինչո՞ւ ենք զարմանում, որ ամենաաղքատ ազգերի շարքում ենք հայտնվել:

Կինը հարստություն, արդարություն կբերի, որովհետև մի կողմի տեսանկյունը չի կարող միշտ իրավացի լինել: Քվոտաները ժամանակավոր անհրաժեշտություն են, և այս պահին այլընտրանք չկա:
Դպրոցական տարիքից աղջիկներին այնքան են ասում՝ դու սա չես կարող, նա չես կարող, չես կարող, չես կարող, միակ բանը, որ նա կարող է անել, երեխա ունենալն է, ու 25 տարեկանում կինն արդեն հավատացած է, որ ոչինչ չի կարող անել:

- Շեշտում եք կանանց կրթության, առողջապահության, մարդու իրավունքների, աշխատանքի իրավունքը, բայց այս ամենը սահմանադրությամբ չի արգելվում, օրենքում գրված է:

- Գիտեք, ես կգերադասեի հեջաբ հագնել, քան հասկանալ, որ ներսում կրում եմ անտեսանելի հեջաբ: Ես վարքագծային հեջաբ ունեմ: Մինչդեռ եթե կրեի այդ հեջաբը, կհիշեի, որ անհավասար եմ ու ամեն օր կպայքարեի այդ անհավասարությունը շտկելու համար: Մարդկանց թվում է՝ եթե կարճ ու բաց հագնեն, եթե երեկոյան դուրս գան փողոց, ապա ազատ են: Դա թմրանյութ է. ես ազատ չեմ, ամենահանգրվանային տեղերում իմ ազատությունը միանգամից կասեցվում է:

Օրենքները մեզ բոլոր իրավունքները տալիս են, բայց մարդը պետք է կարողանա տնօրինել: Սահմանադրական բոլոր նորմերն ունենք, բայց մի՞թե մեր հասարակությունն այն մակարդակում է, ինչը մեր օրենքներում նկարագրվում է: Հանրային շահ կա գրված, բայց ինչ է նշանակում դա՝ չգիտենք: Սահմանադրությամբ հավասար երկրում ենք, բայց արդյոք կանայք գիտե՞ն դրա նշանակությունը: Մեր սեռը պիտի կարողանա սահմանել՝ ինչ է նշանակում իրավունք: Բայց եթե փոքր տարիքից ինձ սոցիալականացնում են, որ հանրությանը հաշվետու եմ, էլ ո՞նց եմ ես իմ տերնուտնօրենը: Տվեք մարդուն աշխարհի լավագույն օրենքները, նա կշարունակի մնալ նույն ստրուկը:

Մենք հակադարձման խնդիր ունենք, կրթական մակարդակում այս հարցը դնելու խնդիր ունենք: Ուսուցիչները, երբ անվստահություն են ցուցաբերում աղջկա նկատմամբ, նրան կոտրում են, սահմանափակում նրա ազատ կյանքը, ու մի օր կինը դառնում է այն մասնագիտության տերը, որն իրենը չէ, ծնողներինն էր: Ինչպե՞ս կընդունի հասարակությունը, եթե կինը դառնա շինարար կամ տաքսու վարորդ: Հասարակությունը ֆեմինացված տարածքներ ունի, ու դրանք շատ լավ տրամաբանություն ունեն:

Մանկավարժության ոլորտը հեղեղված է կանանցով, որովհետև աշխատաժամն ու աշխատավարձը քիչ են: Մեզ համար հարմար չէ իրավական ոլորտը: Կրթական համակարգում էլ ստորին օղակներում կանայք են, վերևում՝ տղամարդիկ: Կինը տղամարդու աշխատավարձի կեսն է ստանում, բայց դա օրենքով չէ, մենք ուղղակի այդպես նորմավորել ենք: Մենք պատրաստ ենք մնալ ստորին օղակներում:
Մեր օրենքները ձևի առումով վատը չեն, բայց բովանդակություն չունեն:

Նատալյա Մարտիրոսյան

«Տեղի է ունենում այն ընկալման բյուրեղացում, որ կինը պետք է լինի ցուցակում ոչ թե սոսկ որպես կին, այլ պետք է նորմալ մակարդակով ներկայացնի կուսակցության շահերը»

Ավարտել է Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետը, քիմիական գիտությունների թեկնածու է: Աշխատել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի քիմիական ֆիզիկայի ինստիտուտում և բնապահպանության նախարարությունում:

1990-1995 թթ. եղել է Երևանի քաղաքային խորհրդի պատգամավոր:

1994 թվականից Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի հայկական կոմիտեի համանախագահն է, 1997-ից՝ Կանանց համահայկական միության փոխնախագահը:

2012 թ. Ազգային ժողովի ընտրություններում առաջադրվել է համամասնական ընտրակարգով «Հայ ազգային կոնգրես» կուսակցությունների դաշինքից:

- Ի՞նչ դեր են խաղում կանանց հասարակական կազմակերպությունները կանանց քաղաքական սոցիալականացման գործում: Եվ այս տեսանկյունից վերջին 5 տարիներին եղե՞լ են փոփոխություններ կանանց հասարակական կազմակերպությունների գործունեության մեջ:

- Իհարկե, հասարակական կազմակերպություններն էական դեր են խաղում՝ նախապատրաստելով կանանց իրենց համար ավելի անսովոր քաղաքական գործչի դերին: Բացի այդ, աշխատելով հասարակական կազմակերպությունում, կանայք իրացնում են իրենց այն հնարավորությունները, որոնք միշտ չէ, որ հաջողվում է իրացնել, ասենք՝ մասնագիտական ոլորտում: Հասարակական կազմակերպությունում կանայք լուծում են նաև արժանավայել աշխատանք ունենալու որոշակի հիմնախնդիրներ: Հասարակական գործունեությունն այն դաշտն է, որտեղ կանայք կարող են դրսևորել ոչ միայն իրենց ներուժն ու կարողությունները, այլև շատ բան սովորել: ՀԿ-ն վարժեցնում է կարգապահության, սովորեցնում հստակ խնդիրներ դնել, որոշ չափով պատրաստում պայքարի այն կանոններին, որոնց նրանք կարող են հանդիպել իրենց համար ոչ սովորական

քաղաքական գործունեության ոլորտում:
Հասարակական կազմակերպությունը սեփական ուժերի ու հնարավորությունների գիտակցման և քաղաքական գործչին անհրաժեշտ հմտությունների ձեռքբերման ուղի է: Վերջին հինգ տարիների ընթացքում շոշափելի առաջընթաց է նկատվում, և դա առանձնապես վերաբերում է այն կանանց, որոնք բնակվում են ոչ թե Երևանում, այլ հեռավոր շրջաններում: Ես տեսնում եմ, որ նրանք ոչ մի հարցում չեն զիջում մեզ՝ երևանաբնակ կանանց, իսկ շատ հարցերում անգամ գերազանցում են: Ակտիվ, գիտակ, նպատակասլաց կանայք են, և այն հանգամանքը, որ նրանք ավելի մեծ չափով են ներգրավվում ակտիվ հասարակական կյանքում, հույս է ներշնչում, որ սկզբնապես կմտնեն տեղական ինքնակառավարման համակարգ, այնուհետև ապագան ցույց կտա...

Պետք է նշեմ, որ սկզբում առանց հատուկ ոգևորության ընկալեցի քվոտաների գաղափարը, քանի որ, իմ կարծիքով, այն որոշակի սահմանափակող տարր էր պարունակում: Այդուհանդերձ, ներկայումս միանգամայն հստակ տեսնում եմ՝ օրենքի պահանջը, որ կանայք ընդգրկվեն կուսակցությունների համամասնական ցուցակներում, հանգեցնում է այն բանին, որ կուսակցությունները սկսում են լուրջ մտահոգվել այդ հարցով: Բնական է՝ յուրաքանչյուր կուսակցություն շահագրգռված է, որ իր շարքերում, առավել ևս՝ ընտրացուցակներում ներկայացված լինեն ոչ թե պարզապես կանայք, այլ գրագետ, գիտակ և աշխատող կանայք: Այսպիսով, տեղի է ունենում այն ընկալման բյուրեղացում, որ կինը պետք է լինի ցուցակում ոչ թե սոսկ որպես կին, այլ որովհետև կարող է նորմալ մակարդակով ներկայացնել կուսակցության շահերը: Դա պետք է հանգեցնի նրան, որ ներկուսակցական գործունեության մեջ կանանց դերի բարձրացմանն ուղղված աշխատանքն ակտիվանա ոչ միայն նախընտրական փուլում, այլ կանանց նախապատրաստման երկարաժամկետ ռազմավարության մի մասը կազմի:

Եվ երկրորդ՝ ես տեսնում եմ, որ հայտնվում են երիտասարդ շատ կանայք, որոնք աշխատում են ավելի լավ, քան երիտասարդ տղամարդիկ: Եվ ես դրանում լավ միտում եմ տեսնում և հույս ունեմ, որ այդպես էլ կշարունակվի:

- Վերջին տարիներին ձևավորվե՞լ է համագործակցություն կանանց հասարակական կազմակերպությունների և կուսակցությունների կանանց խորհուրդների միջև: Ո՞ր ոլորտներում և ի՞նչ չափով է այն նպաստում Հայաստանում ժողովրդավարության զարգացմանը: Ի՞նչն է խանգարում այդ համագործակցությանը:

- Կարծում եմ՝ համագործակցությունը՝ բառի լայն իմաստով, դեռևս չի կայացել: Կան շփումներ, իսկ համագործակցությունը ենթադրում է

ընդհանուր նպատակ, և եթե ոչ ընդհանուր, ապա գոնե մոտ հիմնավոր ռազմավարություններ: Դա ես առայժմ չեմ տեսնում, ավելի շատ տեսնում եմ հասարակական կազմակերպությունների կողմից քայլեր դեպի կուսակցությունները: Օրինակ՝ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան հատուկ դասընթացներ է անցկացնում կին լիդերների համար և ներգրավում նրանց որոշ հիմնախնդիրների քննարկումներում՝ նպաստելով նրանց գիտելիքների մակարդակի բարձրացմանը: Քաղաքական կուսակցությունների ու հասարակական կազմակերպությունների միջև շաղկապում չկա: Քաղաքական կուսակցությունները լան չեն պատկերացնում, թե ինչու է դա իրենց համար կարևոր: Հասարակական սեկտորն ավելի հաճախ է քայլեր կատարում այդ ուղղությամբ, ներկայացնում է իր պատկերացումները, հասարակության մեջ առկա գաղափարները քաղաքական կուսակցություններին:

Ինչ վերաբերում է խոչընդոտներին, ես համարում եմ, որ մեր կուսակցությունները դեռևս հստակ պատկերացում չունեն սեփական առաքելության մասին: Մեր երկրում բացակայում է այն ըմբռնումը, որ կուսակցությունը հենվում է հասարակական կարծիքի վրա, չկա հասարակության և իշխանավորների ու ոչ իշխանավորների միջև կապի ընկալում: Այդ կապը, որպես կանոն, կա՛մ միակողմանի է, կա՛մ ոչ բավարար չափով հիմնավոր: Կարծում եմ՝ հասարակական կազմակերպությունները պետք է մունետիկի դեր կատարեն, բարձրաձայնեն հասարակությանը հուզող հիմնախնդիրները, պայքարեն դրանց համար և տեղեկացնեն քաղաքական կուսակցություններին, որոնք ունեն իրենց պատկերացումները հասարակական պահանջմունքների, հասարակական պատվերի իրականացման վերաբերյալ:

- Ո՞ր ոլորտներում և ի՞նչ չափով են կանանց հասարակական կազմակերպությունները մասնակցում 2012 թ. ընտրական գործընթացներին: Նկատվո՞ւմ է ակտիվացում նախորդ՝ 2007 թ. ընտրությունների համեմատ:

- Նախորդ տարիների փորձից կարող եմ ասել, որ այն կազմակերպություններում, որոնք դիտորդական առաքելություն են իրականացնում, մեծ թվով կանայք կան: Կարևոր գործերից մեկը, որն անում են կանանց կազմակերպությունները, պարզապես քարոզում են, կոչ անում մարդկանց, այդ թվում կանանց, ակտիվ մասնակցություն ունենալ ընտրություններում՝ առանց որոշակի քաղաքական կուսակցություններ հիշատակելու, իրազեկում են ընտրական օրենսգրքում կատարված փոփոխությունների մասին, սովորեցնում՝ ինչպես ճիշտ քվեարկել և պաշտպանել սեփական ընտրական իրավունքները: Այս դաշտում կանանց

կազմակերպություններն ակտիվ են աշխատում, և ոչ այնքան Երևանում, որքան մարզերում:

2007 թ. ընտրությունների համեմատ չեմ տեսնում առանձնահատուկ, ակնհայտ ակտիվություն: Բայց կարծում եմ, որ ավելի ճիշտ և ռազմավարության տեսանկյունից ավելի արդարացված կլիներ աշխատել կանանց հետ ընտրությունների միջև ընկած ժամանաշրջանում՝ նրանց մեջ լիդերի որակներ, հասարակական գործունեության նկատմամբ հետաքրքրություն, ինքնադրսևորվելու հմտություններ պատվաստելու, կրթական բացերը լրացնելու նպատակով: Երբ սկսում ես աշխատանքն անմիջապես ընտրություններից մեկ ամիս առաջ, ապա կարելի է սովորեցնել սոսկ գրագետ ու ճիշտ կարգավորել ընտրություններին մասնակցելու հարցը: Նկատի ունեմ պասիվ և ակտիվ ընտրական իրավունքը: Ընտրելու իրավունքը կարելի է մեկ ամսում սովորել, բայց մեկ ամսում սովորեցնել ճիշտ առաջադրվել և ընտրվել անհնար է:

Կանանց ՀԿ-ներն ամեն կերպ նպաստում են կանանց առաջմղմանը, որպեսզի նրանք ոչ միայն առաջադրվեն, այլև ընտրվեն: Ես համարում եմ, որ այստեղ աջակցությունն էական է, և այն պետք է լինի, դա անհրաժեշտ է, քանի որ կին թեկնածուների և կանանց կազմակերպությունների ռազմավարական նպատակները պետք է համընկնեն: Բայց եթե մենք ցանկանում ենք ունենալ կանանց լուրջ ներկայացվածություն խորհրդարանում, դա ենթադրում է նաև կանանց կազմակերպությունների զորակցություն, որպեսզի հետո պահանջեն կին պատգամավորներից: Աջակցության ձևերը կարող են բազմազան լինել՝ վստահված անձանց ներկայություն, աշխատանք մեծամասնական ընտրակարգով առաջադրված կին թեկնածուների տեղական շտաբներում և այլն:

Այս հարցի կապակցությամբ ուզում եմ հիշեցնել այն դեպքը, երբ Գայանե Առուստամյանը, որին աջակցում էր Հայ ազգային կոնգրեսը, հեռուստաբանավեճի հրավիրեց իր ընդդիմախոս Ռուբեն Հայրապետյանին, իսկ վերջինս մերժեց՝ պատճառաբանելով, թե կանանց հետ բանավեճի չի բռնվում: Ստացվում է, որ Ռ. Հայրապետյանը չի տեսնում հանձին կնոջ իրեն հավասար մարդու, որի հետ իմաստ ունի բանավիճել և լուրջ հարցեր քննարկել: Ցավոք, մեր հասարակության մեջ նման կարծիք գոյություն ունի: Եթե կանանց կազմակերպությունները ճեղքեն մարդկանց գիտակցությունը, ընկալումները, դա կլինի անմիջական օգնություն կանանց, որոնք մասնակցելու են ընտրություններին և անցնելու են խորհրդարան:

- Համարո՞ւմ եք, որ ՀՀ կառավարության կողմից գենդերային քաղաքականության հայեցակարգն ու դրա իրականացման ռազմավարությունը հաստատելուց հետո երկրի բոլոր հասարակական-քաղաքական ոլորտներում կանանց և տղամարդկանց հաշվեկշռված մասնակցության ապահովման գործում փոփոխություններ են կատարվել:

- Կառավարության կողմից գենդերային քաղաքականության հայեցակարգի և դրա իրականացման ռազմավարության հաստատումը նպաստեց որոշ առաջխաղացմանն այդ ուղղությամբ, համենայն դեպս, մարզպետարաններում, քաղաքապետարաններում կան պատասխանատուներ, որոնք պետք է հետևեն հայեցակարգի իրականացմանը: Բայց դժվար չէ հասկանալ, որ եթե չկան ֆինանսական և նյութական պաշարներ, որոնք պետք է ծառայեն այդ հարցերի անխափան, հստակ և արդյունավետ կենսագործմանը, դրանք, որպես կանոն, մնում են թղթի վրա: «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ.ազգային ծրագրի» շրջանակներում մենք Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի հետ համատեղ մշտադիտարկում էինք անցկացնում: Պետք է նշել, որ ծրագիրը լավ պլանավորված էր, նշված էին որոշակի պատասխանատուներ և ժամկետներ, բայց քանի որ չկային որոշակի աշխատակիցներ, ռեսուրսներ, դրա իրականացումը կասեցվեց:

Ցավոք, Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի նախագիծը չի բովանդակում իրականացման և մշտադիտարկման, վերահսկողության ապահովման որոշակի մեխանիզմներ, այսինքն՝ դա ընդհանրական մի բան է: Իհարկե, ավելի լավ է գոնե ինչ-որ մի բան ունենալ, բայց նախագիծը լուրջ լրացումների, իրականացման և մշտադիտարկման, արդյունքների գնահատման մեխանիզմների մանրամասն մշակման կարիք ունի:

Այդուհանդերձ, կարծում եմ, մեկ քայլ առաջ է արվել, միշտ կարելի է աշխատել, բարելավել, և մենք չպետք է հետ մնանք: Քանի որ նույնիսկ Հարավային Կովկասի հարևան երկրներում օրենսդրական բազան, իմ կարծիքով, ավելի լավ վիճակում է: Հուսանք:

Սաթենիկ Սեյրանյան

«Մասնակցությունը խորհրդարանական ընտրություններին ընդամենը քաղաքականության ձևաչափի փոփոխություն է, իսկ պատգամավորական մանդատը՝ քաղաքականության գործիքի փոփոխություն»

Ծնվել է 1974 թ. Երևանում:

Ավարտել է Երևանի պետական համալսարանը, աշխատել է «Շրջան» շաբաթաթերթում, «Հայկական ժամանակ» օրաթերթում: 1997-2003 թթ. աշխատել է «Առավոտ» թերթում:

«ԱՐ» հեռուստաընկերության կողմից ճանաչվել է 1999 թվականի լավագույն լրագրող և պարգևատրվել է «ԱրMEN» մրցանակով:

2002 թվականին «Առավոտ» թերթում հրապարակումների համար Ամերիկյան դեսպանատան կողմից արժանացել է կոռուպցիայի դեմ պայքարի համար մրցանակի և Երևանի ակումբի կողմից՝ «Լավագույն հրապարակում» պարգևի:

2004 թ. հիմնադրել է «168 ժամ» շաբաթաթերթը և մինչ այժմ թերթի գլխավոր խմբագիրն է:

2012 թ. Ազգային ժողովի ընտրություններում առաջադրվել է մեծամասնական ընտրակարգով թիվ 4 ընտրատարածքում (ք. Երևան):

- Ինչո՞ւ որոշեցիք առաջադրվել որպես պատգամավորի թեկնածու:

- Շուրջ երկու տասնամյակ աշխատում եմ մամուլում, վերջին 8 տարիները՝ որպես «168 Ժամ» թերթի գլխավոր խմբագիր: Այսինքն՝ ակամա քաղաքականության մեջ եմ և զբաղվում եմ քաղաքականությամբ, ըստ էության՝ ամենօրյա ռեժիմով: Եվ այդ առումով մասնակցությունը խորհրդարանական ընտրություններին իրականում ընդամենը քաղաքականության ձևաչափի փոփոխություն է, իսկ պատգամավորական մանդատը՝ քաղաքականության գործիքի փոփոխություն:

Հավատացեք, թեկնածությունս առաջադրելու որոշումը հեշտությամբ չեմ կայացրել և առաջին հերթին իմ ներսում բազմաթիվ հարցեր պարզելուց հետո որոշեցի առաջադրվել թիվ 4 ընտրատարածքում՝ Արաբկիրում, որտեղ ծնվել, մեծացել եմ և ապրում եմ մինչ օրս: Որոշմանս պատճառն այն է, որ ուզում եմ ապրել այս երկրում: Անտարբեր քաղաքացի երբևէ չեմ եղել, որպես լրագրող

և խմբագիր, մշտապես եղել եմ հասարակության կողքին, և «168 ժամ» թերթի ընթերցողները կարող են դա հաստատել: Եթե մինչ օրս որպես լրագրող, որպես խմբագիր մասնագիտական առումով հասարակության խնդիրների, երկրի կարևորագույն հարցերի նկատմամբ մարդկանց ուշադրությունն ենք հրավիրել, ապա պատգամավոր ընտրվելուց հետո, կարծում եմ, անմիջական մասնակցություն կունենամ այդ խնդիրների լուծման գործում:

- Պատգամավոր դառնալու դեպքում Դուք մեկ մանդատ եք ունենալու խորհրդարանում և, համենայն դեպս, այս պահին թիմ չունեք, ինչպե՞ս է Ձեզ հաջողվելու մեկ մանդատով ազդել որոշումների կայացման գործընթացի վրա:

- Դժբախտաբար, ձեր հարցի տրամաբանությամբ է գործում այսօրվա Հայաստանի քաղաքական համակարգը. կարևորվում է ոչ թե անձը, անհատը, այլ փոքր խմբերը, այդ խմբերի շահերը: Իմ առաջադրմամբ ես առաջին հերթին պայքարում եմ այդ մտածողության դեմ, և հավատացեք՝ կոտրելու եմ այդ կարծրատիպը: Ինչ վերաբերում է որոշումների կայացմանը, ապա վստահեցնում եմ՝ նույնիսկ մեկ անձը կարող է շատ բան փոխել, առավել ևս՝ Հայաստանի պես փոքր երկրում: Ավելին, որպես մեծամասնական ընտրակարգով ընտրված անկուսակցական պատգամավոր, ես հետագայում կաշկանդված չեմ լինի Ազգային ժողովում ցանկացած առողջ նախաձեռնության միանալու կամ քննադատելու հարցում:

- Ընտրական օրենսգրքի փոփոխությունից հետո կուսակցություններում կարծես կանանց դեֆիցիտ սկսվեց, բոլորը պատրաստված կանանց էին փնտրում, որպեսզի ներգրավեն իրենց նախընտրական ցուցակում: Համամասնական ցուցակով Դուք շատ ավելի հեշտ կհայտնվեիք խորհրդարանում: Ինչո՞ւ եք ընտրել ավելի բարդ ճանապարհը:

- Իհարկե, ավելի հեշտ կլիներ ընդգրկվել որևէ կուսակցության համամասնական ցուցակում ու, ինչպես ասացիք, հայտնվել Ազգային ժողովում: Սակայն, նախ, ես չեմ տեսնում այն քաղաքական ուժը, որին կարող էի անդամակցել: Ես անկուսակցական եմ, երբևէ որևէ կուսակցության անդամ չեմ եղել և ուզում եմ ինքնուրույն փորձել իմ ուժերը: Բացի այդ, ուզում եմ ոչ թե հայտնվել Ազգային ժողովում, այլ ընտրվել Ազգային ժողովի պատգամավոր: Դրանք սկզբունքորեն տարբեր բաներ են: Ես ուզում եմ խոսել մարդկանց հետ, ևս մեկ անգամ լսել նրանց հուզող խնդիրների մասին: Հայաստանում, իհարկե, այլ ավանդույթներ են ձևավորվել. մարդիկ

շատ հաճախ նույնիսկ իրենց պատգամավորի դեմքը տեսած չեն լինում, պատգամավորության շատ քիչ թեկնածուներ են նրանց հետ հանդիպումներ ունենում: Եվ սա վերաբերում է թե՛ համամասնական, թե՛ մեծամասնական ընտրակարգով «ընտրված» պատգամավորներին:
4-րդ ընտրատարածքում շատ հետաքրքրիր պայքար կարող է ձևավորվել, քանի որ մրցակիցներից մեկը պաշտոնական քարոզարշավի մեկնարկից առաջ արդեն սկսել էր քարոզարշավը: Մարտի 8-ի նվերներ էր բաժանում, այսինքն՝ արդեն իսկ ակնհայտ է, որ մայիսի 6-ին ես պայքարելու եմ փողի դեմ, ոչ թե անձի, կուսակցության, առավել ևս՝ գաղափարախոսության: Այդ ճանապարհով «ընտրված» պատգամավորները, բոլորիս է հայտնի, հետագա 5 տարիների ընթացքում, որպես կանոն, մոռանում են իրենց ընտրողներին: Նրանք համարում են, որ գործարք է կատարվել՝ վճարել են, ձայները գնել են և այլևս պարտք ու պահանջ չունեն միմյանց հանդեպ: Հինգ տարի հետո կրկին նույն մարդիկ գալիս և «ձայն» են գնում: Ընտրողն այլևս պետք է սա հասկանա և հրաժարվի այսպիսի գործարքներից: Հուսով եմ՝ արաբկիրցիները թույլ չեն տա, որ մեկ օրվա սննդի գումարով հինգ տարի ժամկետով գնեն իրենց ձայները:

- Հայաստանում կանանց նկատմամբ խտրական վերաբերմունք նկատվո՞ւմ է:

- Հայաստանում, ինչպես և շատ այլ երկրներում, նման կարծրատիպ կար, որ կինը պետք է լինի խոհանոցում և զբաղվի միայն տան հոգսերով: Աշխարհը փոխվել է, փոխվում է ամեն օր: Հայաստանում ևս հետզհետե սկսում են այլ կերպ մտածել. այդ մոտեցումը բավականաչափ նահանջել է: Կանայք ընդգրկված են և՛ բիզնեսում, և՛ քաղաքականության մեջ, և՛ հասարակական ակտիվ գործունեություն են ծավալում: Պարզապես կանանց համերաշխությունն է պակասում. Հայաստանում տղամարդիկ ավելի համերաշխ են միմյանց նկատմամբ: Լավ կլինի, որ կանայք էլ համերաշխ լինեն և միմյանց աջակցեն: Կանայք կարող են կարևոր դեր ունենալ քաղաքացիներին հուզող խնդիրների լուծման գործում:

- Վերջերս երեխա եք լույս աշխարհ բերել, ինչպե՞ս եք համատեղելու նրա խնամքը քաղաքական ակտիվության հետ:

- Երեխայի ծնունդն իսկական հրաշք է, սակայն միաժամանակ քեզ դարձնում է անհամեմատ ավելի պատասխանատու՝ ամեն ինչի, ցանկացած քայլի հանդեպ: Սկսում ես վերանայել ամեն ինչ: Երեխայի ծնունդը նաև տարբեր վախեր է առաջացնում: Ասեմ ամենապարզ, մարդկային, մայրական բառերով՝ ուզում եմ, որ իմ երեխան նորմալ երկրում ապրի: Ուզում եմ, որ լավ

դպրոցում սովորի, առողջ հասարակության մեջ ապրի, լավ մարդկանցով շրջապատված լինի: Երբ այս ամենի մասին մտածում ես, ակամա հարց է ծագում՝ իսկ էլ ի՞նչ կարող եմ անել այդպիսի Հայաստան ունենալու համար: Արդյոք պե՞տք է թույլ տամ, որ այս վիճակը շարունակվի, որ գրեթե ոչ տառաճանաչ մարդիկ գան իշխանության և օրենքներ գրեն, որոշեն մի ամբողջ հասարակության ճակատագիր:

Երեխայի ծնունդով ես նոր ուժ ստացա, հասկացա, որ որպես այս երկրի նկատմամբ ոչ անտարբեր մարդ՝ պետք է քայլ կատարեմ: Եվ կարծես բոլոր նպաստավոր պայմանները ստեղծվում են դրա համար: Ինչ վերաբերում է երեխայի խնամքին, ապա ավագ քույրս ինձ օգնում է, որդուս ծննդյան առաջին իսկ օրից իմ կողքին է: Ես կարողանում եմ համատեղել թերթի հետ կապված աշխատանքներն ու երեխայի խնամքը, խոհանոցը: Առաջին հերթին, որպես մայր, ես երեխայիս համար ուզում եմ անել ավելին, քան միայն մայրական խնամքն ու հոգատարությունն է: Քանի որ գիտեմ՝ Հայաստանում այսօր կան հազարավոր երեխաներ, որոնք զուրկ են նույնիսկ տարրական խնամքի հնարավորությունից:

- Նախընտրական քարոզարշավն արդեն մոտենում է ավարտին: Ինչպե՞ս եք այն գնահատում թիվ 4 ընտրատարածքում, որտեղ առաջադրվել եք:

- Թիվ 4 ընտրատարածքում, ինչպես և վստահ եմ՝ մյուս ընտրատարածքներում, հայկական, «ավանդական» իրավիճակ է: Իշխանության բոլոր մարմիններն ամեն ինչ անում են մինչև ընտրությունները իրենց թեկնածուի «անցումը» ապահովելու համար: Բազմիցս առիթ ունեցել եմ նշելու՝ այդ նպատակով կիրառվում են բոլոր հայտնի մեթոդները՝ վարչական ռեսուրսի ներգրավում, մարդկանց նկատմամբ ահաբեկումներ և ամենակարևորը՝ ընտրակաշառքների բաժանում: Դժբախտաբար, մարդիկ այնպիսի սոցիալական վիճակում են, որ ոմանք նաև վերցնում են այդ գումարները: Իրականում այս ընտրակաշառքների մեքենայի գոյությունը հասցրել է շատ բացասական, վտանգավոր հանգրվանի. իշխանությունն իր չափանիշներով է գնահատում մարդուն, 5, 10 թե 50 հազար դրամ՝ այնքան էլ էական չէ: Եվ ընտրողների հետ հանդիպումներում տեսնում եմ հավաքական մի դիրքորոշում, որի մասին մարդիկ, իհարկե, չեն խոսում, սակայն դա դժվար չէ զգալ. շատերը, իմ զգացողությամբ, վերցնելով այդ ընտրակաշառքները, գնալու են ընտրության և ընտրելու են իրենց ցանկացած թեկնածուին կամ քաղաքական ուժին: Այդպիսով մարդիկ կարծես լուռ պատասխանում են իշխանությանը՝ ցույց տալով, որ հասարակության հետ չի կարելի վերաբերվել որպես վաճառվող ձայների:

- Բայց այս անգամ այդ ամենը կարծես ավելի շատ արվում է «բարեգործության» անվան տակ:

- Հայաստանում բարեգործությունը ևս արժեզրկվել է: Բարեգործությունը չի լինում սեզոնային կամ ըստ ընտրական ժամանակաշրջանի: Եվ հետո, ընտրական օրենսգիրքը հստակ սահմանում է, որ բարեգործությունը ևս համարվում է ընտրակաշառք, եթե դրա աղբյուրը զուգակցվում է որևէ թեկնածուի կամ կուսակցության հետ: Հիմա փողոցներ են ասֆալտապատում, բակեր են վերականգնում՝ բնականաբար, բնակիչներին մեկ առ մեկ տեղեկացնելով, թե ում կողմից է դա արվում: Սակայն բնակիչների հետ հանդիպումների ժամանակ զգում եմ, որ մարդիկ չեն հրապուրվում այդ կեղծ «բարեգործությամբ»: Ճիշտ հակառակը՝ շատ շատերը դրանք համարում են իրենց արժանապատվությունը ոտնահարող քայլեր և ասում են, որ իրենց ոչ թե բարեգործություն է պետք, այլ աշխատելու և ապրելու նորմալ պայմաններ: Մարդիկ ուզում են հավասար հնարավորություններ, փոքր բիզնեսով զբաղվելու, պետության կողմից հարկային և բյուրոկրատական տեռորի չենթարկվելու երաշխիքներ:

- Քարոզարշավն արդեն մոտենում է ավարտին: Ինչպե՞ս եք գնահատում Ձեր շանսերը:

- Մի քանի անգամ ավելի բարձր, քան գնահատում էի թեկնածությունս առաջադրելու ժամանակ: Դա չեմ ասում այն պատճառով, որ այդպես է ընդունված ասել: Անցած մոտ մեկ ամսվա ընթացքում մի քանի տասնյակ հանդիպումներ եմ ունեցել Արաբկիրի բնակիչների հետ, և նրանց արձագանքն ու վերաբերմունքն են թելադրում բարձր գնահատել: Իմ հնարավորությունների սահմաններում ամեն ինչ անելու եմ այդ մարդկանց ձայնը պահելու համար. ոչ միայն իմ հաղթանակի նպատակով: Մարդիկ այսօր ծայրաստիճան հուսահատված ու հիասթափված են, և եթե ևս մեկ անգամ նրանց ընտրությունը կեղծվի, ընտրած թեկնածուի փոխարեն «անցնի» մեկ ուրիշը, այդ հիասթափությունն ավելի է խորանալու: Ես չեմ ուզում՝ գոնե Արաբկիրում դա տեղի ունենա, և ամեն ինչ անելու եմ դրա դեմ պայքարելու համար:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՆ ԼԻԴԵՐՆԵՐԸ ԵՎ ԱԿՏԻՎԻՍՏՆԵՐԸ

Մարիամ Ապերյան *- «Բարգավաճ Հայաստան» կուսակցության Վանաձոր-Գուգարք տարածքային կազմակերպության «Կանանց, երեխաների, տարեցների» հանձնախմբի ղեկավար*

Նարինե Ստեփանյան *- «Ժառանգություն» կուսակցության Արարատի մարզի վարչության անդամ*

Եղենա Վարդանյան *- ՀՀ նախագահին առընթեր Հանրային խորհրդի գենդերային հարցերի և ժողովրդագրության հանձնաժողովի նախագահ, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Գյումրու մասնաճյուղի նախագահ*

Մարիա Թիթիզյան *– Երևանում «Հրայր Մարուխյան» հիմնադրամի տնօրեն*

Աիդա Թուփուզյան *- Կանանց հանրապետական խորհրդի նախագահ, «Կին ընտրողների լիգա» հասարակական կազմակերպության հիմնադիր նախագահ*

Աղավնի Կարախանյան *- «Քաղաքացիական հասարակության և տարածաշրջանային զարգացման ինստիտուտ» ՀԿ-ի տնօրեն*

Նոննա Մարգարյան *- «Պրոֆեսիոնալները հանուն քաղաքացիական հասարակության» ՀԿ-ի նախագահ*

Գոհար Շահնազարյան *- «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի համահիմնադիր*

Մարիամ Ապերյան

«Հավատարիմ մնալը շատ կարևոր է»

Ծնվել է 1962 թ. Վանաձորում (Կիրովական):

1985 թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի Կիրովականի մասնաճյուղի «Ավտոմատիկա և հեռուստամեխանիկա» բաժինը:

1986 թ. ԽՍՀՄ «Մինպրիբորի» ղեկավար աշխատողների և մասնագետների որակավորման բարձրացման Մոսկվայի ինստիտուտի Կիևի մասնաճյուղում վերապատրաստվել է որպես ծրագրավորող: 1985-2005 թթ. աշխատել է Կիրովականի «Ավտոմատիկա» գիտահետազոտական ինստիտուտում որպես գիտաշխատող:

2009 թ. մինչ օրս աշխատում է Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N1 գիշերօթիկ հաստատությունում որպես տնօրենի տեղակալ:

2006 թ. անդամակցել է «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը: 2007 թ. ընտրվել է ԲՀԿ Վանաձոր-Գուգարք տարածքային կազմակերպության «Կանանց, երեխաների, տարեցների» հանձնախմբի ղեկավար:

2007 թ. ավարտել է Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի կանանց լիդերության դպրոցի լրիվ դասընթացը:

Ամուսնացած է, ունի հինգ զավակ:

- Ինչո՞ւ որոշեցիք անդամագրվել կուսակցությանը:

- «Առավոտ» թերթում կարդացի կուսակցության նախընտրական ծրագիրը: Դեռևս երիտասարդ տարիներից հետաքրքրություն ունեի քաղաքականության նկատմամբ, կարելի է ասել՝ դպրոցական տարիներից: Ծառուկյանի կերպարը, խոսքը ինձ դուր էին գալիս, շատ անմիջական ու անկեղծ է, իր խոսքի տեր մարդ է: Երեկ էլ լսեցի Ծառուկյանի ելույթը, ասում էր, որ պատրաստ է կորցնել իր ունեցվածքը, բայց ոչ կուսակիցներին ու ժողովրդին, որոնք իր կողքին կանգնած են: Ծառուկյանի խոսքը հավատ է ներշնչում:

Ամուսնուս, որը քաղաքականապես ակտիվ մարդ չէ, առաջարկել էին դառնալ ԲՀԿ-ի անդամ: Կարդացինք կուսակցության ծրագիրը, քննարկեցինք, և ես որոշեցի դառնալ այդ կուսակցության անդամ: Առաջին իսկ օրվա-

նից ներգրավվեցի կուսակցության կայացման գործում: Կուսակցությունը հիմնադրվել է 2004-ին, բայց Վանաձորում առաջին գրասենյակները բացվել են 2006-ին:

- Երեխաների հետ քննարկվե՞լ է այդ հարցը:

- Ոչ, երեխաներս փոքր էին, մեծը 15 տարեկան էր: Ընդհանրապես հիմա էլ, երբ ակտիվ քաղաքականության մեջ եմ, տանը քաղաքական հարցեր չեմ քննարկում: Տանն ավելի շատ լիցքաթափվում եմ, երեխաներիս հետ կապված ինձ ամեն ինչ հետաքրքիր է՝ դպրոցի, ինստիտուտի դասերը:

- Ընտանիքն ինչպե՞ս է վերաբերվում Ձեր քաղաքական գործունեությանը:

- Տղաներս աջակցում են, աղջիկս փոքր է: Ավագ որդիս կուսակցության անդամ է: Չնայած քաղաքականության մեջ ակտիվ չէ, բայց քանի որ մաման այնտեղ է, ինքը մամայի կողքին է: Ամուսինս էլ է կուսակցական:

- Ինչպե՞ս դարձաք կանանց խորհրդի նախագահ, ո՞վ առաջարկեց:

- 2007-ից Վանաձորի «Գուգարք 1» տարածքային կառույցի անդամ եմ: Առաջարկել է Վանաձորի «Գուգարք 1» տարածքի կանանց խորհրդի նախագահը, ես խորհրդի անդամ եմ: 2008 թ. դարձել եմ կանանց խորհրդի նախագահ: Հիմա, բացի կուսակցական գործունեությունից, Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատության փոխտնօրենն եմ: Բավական ծանր աշխատանք է, սոցիալապես անապահով մոտ 123 երեխա ունենք:

– Իսկ որտեղի՞ց նա Ձեզ գիտեր, ճանաչում էր որպես կուսակցականի՞, թե՞ որպես քաղաքի բնակչի:

- Որպես կուսակցականի, մինչև կուսակցության շարքերն ընդունվելը որևէ կապ նրա հետ չեմ ունեցել, անծանոթ մարդիկ էինք:

– Իսկ ե՞րբ զգացիք, որ Ձեզ նկատել են:

- Հենց սկզբից նկատեցին: Երբ անդամագրվեցի, շատ դժվար էր ներկայացնել նոր ստեղծվող կուսակցությունը, ցույց տալ, թե ինչու հենց սա և ոչ արդեն իսկ գոյություն ունեցողները, որն է դրա առավելությունը, ինչ պետք է

անի, որ մյուսները չարեցին: Դա ինձ բավականին լավ էր հաջողվում: Ե՛վ լսում էին ինձ, և՛ ընդունում էին իմ կարծիքը: Նախկինում՝ մինչև 2007 թ. ընտրությունները, ունեինք մտավորականների խորհուրդ, այդ խորհրդում էի, հարցեր էինք քննարկում, ու միշտ իմ առաջարկած լուծումներն ընդունվում էին: 2007 թ. ընտրություններից հետո մի քիչ խմորումներ եղան: Նախկին խորհուրդն ընտրություններից հետո ցրվեց, շատ մարդիկ զգացին, որ քաղաքականությունն այնքան էլ իրենցը չէ, տարբեր նկատառումներով մտել էին ու դուրս եկան: Մնացին խորհրդի շատ քիչ անդամներ: Հավատարիմ մնալը շատ կարևոր է:

– Այդ քչի մեջ քանի՞ կին կար:

- Նախկին խորհրդի կազմում մեկ կին կար՝ կանանց խորհրդի նախագահը: Նա տարիքով մեծ էր ու գնաց կամ գուցե սպասելիքներ ուներ, որոնք չէին արդարացել, չգիտեմ: Ընտրություններից հետո ձևավորվեց նոր խորհուրդ՝ 9 հոգի, որից 4-ը՝ կանայք:

–Ինչո՞վ եք պայմանավորում այն, որ այդ կանանցից առաջարկեցին Ձեզ:

- Կրկնեմ այն, ինչ ասել են նրանք. որպես բազմազավակ մոր, որպես կանացի կնոջ, շատ հարցերով մտահոգ կնոջ և շատ ակտիվ ու խելացի կնոջ:

– Գիտեմ, որ մեկ-երկու անգամ մասնակցել եք կանանց լիդերության դպրոցի դասերին, ի՞նչ տվեց այն Ձեզ:

- Թռիչքի էֆեկտ տվեց, ակտիվության լրացուցիչ խթան էր, նաև գիտելիքի որակական աճ տվեց:

– Հայ հասարակությունում կանանց նկատմամբ խտրականություն կա՞:

- Կա, իհա՛րկե: Առաջընթաց էլ կա, ավելացել են կանանց ակտիվությանը նպաստող հանգամանքները, բայց խոչընդոտողներն էլ են շատ: Հասարակության մեջ դեռևս կան կարծրատիպեր, կանանց մեջ անառողջ մրցակցություն կա: Քաղաքում կան, այսպես ասած, թաղային հեղինակություններ, որոնց հետ տղամարդ քաղաքական գործիչը հեշտ է համագործակցում, իսկ կինը չի կարող, և եթե նա մտնում է այդ համագործակցության մեջ, ապա հանդիպում է լուրջ պատնեշների: Օրինակ՝

ես չեմ գնա թաղային հեղինակությունների հետ համագործակցության ինչ-որ հարցեր առաջ տանելու համար, ես կգնամ նրանց հետ հանդիպման, կբացատրեմ: Բայց համագործակցության չեմ գնա:

- Երբևէ Ձեր նկատմամբ խտրականություն զգացե՞լ եք:

- Ընդգծված խտրականություն չեմ զգացել: Հասարակության մեջ մարդիկ միշտ էլ միմյանց հանդեպ խտրական վերաբերմունք ունեն, բայց որպես կին՝ չեմ զգացել: Ընտանիքում ընդհանրապես խնդիրներ չեն եղել: Ունեմ նորմալ ընտանիք, ամուսնուս ծնողները մտածում են, որ եթե ունես կարողություն, ապա դա պետք է ճիշտ օգտագործես: Ամեն դեպքում, բարձրաձայն, ակնհայտ ինչ-որ խոչընդոտ կամ ակնարկ չեմ նկատել:

–Իսկ կուսակցության մեջ զգացե՞լ եք խտրականություն ձեր հանդեպ:

- Ես իմ էությամբ ակտիվ եմ, բայց մեջ ընկնող չեմ: Կուսակցության, քաղաքականության մեջ ամեն մեկն ուզում է՝ ինքը երևա, ուստի սկզբում չես նկատվում: Հետո, երբ քեզ տեսնում են կոնկրետ գործի մեջ, կոնկրետ ինչ-որ առաջարկ անելիս, արդեն քիչ-քիչ սկսում են հաշվի առնել քո կարծիքը: Հետո ավելի մեծ խնդիրների դեպքում էլ տեսնում են, որ կարելի է նույնիսկ խորհրդակցել:

- Կինը քաղաքականության մեջ իր ոճը պե՞տք է ունենա, և այն պե՞տք է տարբերվի տղամարդու ոճից:

- Անպայման պետք է տարբերվի, ասենք՝ իր կանացիությամբ: Տղամարդիկ քաղաքականության մեջ ավելի բիրտ, կոշտ օրենքներով են շարժվում:
Չգիտեմ՝ եվրոպական կամ այլ երկրներում ինչպես է, բայց մեր քաղաքականության մեջ տղամարդու համար էլ է դժվար կայանալը: Կինը քաղաքականության մեջ կանացի լինելով պետք է դրսևորի իր ակտիվությունը, դա շատ մեծ առավելություն է: Չպետք է նմանվել տղամարդկանց: Ընդհակառակը՝ քո կանացիությունը երբեք չպետք է կորցնես, ավելի քաղաքակիրթ պիտի լինես:

- Ձեր հետաքրքրությունների շրջանակը սահմանափակվում է միայն կանանց խորհրդի հարցերո՞վ, թե՞ նաև մասնակցում եք մյուս հարցերի քննարկմանը:

- Մասնակցում եմ օրակարգում ընդգրկվող բոլոր հարցերի քննարկմանը: Եվ եթե կոմպետենտ եմ կարծիք հայտնելիս, ապա իմ կարծիքը հաշվի է առնվում, որովհետև բոլոր հարցերը չեն, որոնց մասին կարող եմ կարծիք ունենալ:

- Իսկ ո՞ր հարցերի դեպքում Ձեզ կոմպետենտ կհամարեիք, բացի սոցիալական հարցերից:

- Քաղաքական հարցերում՝ և՛ ներքին, և՛ արտաքին, ինֆորմացված լինելու շնորհիվ շատ հարցերում իմ սեփական կարծիքն ունեմ և անհրաժեշտության դեպքում կարող եմ արտահայտել:

– Ինչպիսի՞ն է լրագրողների կամ ԶԼՄ-ների վերաբերմունքը կին թեկնածուների նկատմամբ:

- Չեմ նկատել, որ ԶԼՄ-ները որևէ առանձնահատուկ մոտեցում ունենան կին թեկնածուների նկատմամբ, կարծես թե մոտեցումը նույնն է, մարզում այդպես է:

– Իսկ ինչո՞ւ չեք ընդգրկվել կուսակցության համամասնական ցուցակում:

- Մենք պետք է թիվ 30 ընտրատարածքում ներկայացնեինք մեկ թեկնածուի՝ մեր խորհրդի նախագահ պարոն Կարախանյանին, մեծամասնականում էլ Այծեմնիկ Օհանյանի թեկնածությունն առաջադրեցինք, որն ավելի մեծ ճանաչում ունի: Եթե ավելի վաղ լիներ ինքնաբացարկը, միգուցե նաև իմ թեկնածության մասին մտածեինք:

- Իսկ Դուք կուզեի՞ք:

- Չէի հրաժարվի: Մի ասացվածք կա՝ լավ չէ այն զինվորը, որը չի ուզում գեներալ դառնալ: Եթե չուզես, նշանակում է այսօրվա օրով բավարարված ես: Պետք է միշտ ձգտես, ունենաս նպատակ: Թե ինչպիսին կլինեն հնարավորությունները սրանից հետո, չեմ կարող ասել:

- Մոտենում են ՏԻՄ ընտրությունները, չե՞ք մտածել այդ ուղղությամբ:

- Բնականաբար, չես կարող չմտածել: Բայց չէի ուզենա ինքանա-առաջադրումով, կուզեի կուսակցական առաջադրումով:

- Կուսակցության ներսում նպաստո՞ւմ են կանանց առաջընթացին:

- Արգելք չեմ տեսնում, բայց խթան՝ որպես այդպիսին, դա էլ չեմ տեսնում:

- Որպես կանանց խորհրդի նախագահ՝ կարո՞ղ եք հանձնաժողովն օգտագործել որպես խողովակ մյուս կանանց տեսանելի դարձնելու համար, թե՞ այդքան հնարավորություններ չկան:

- Եթե կանանց ակտիվացնելու նախաձեռնություն ունենամ, ոչ ոք դեմ չի լինի, ընդհակառակը՝ ուրախ կլինեն, բայց մոտիվացիան թույլ է, քաղաքականությամբ հետաքրքրվող կանանց թիվը քիչ է: Օրինակ՝ շատերն ինձ չեն հասկանում, որ քաղաքականության մեջ ինձ առաջ տանող ուժը հենց գաղափարական խնդիրներն են, որովհետև քաղաքականության մեջ նրանք լուծում են կոնկրետ խնդիր՝ մասնավոր կամ անձնական: Սա միայն կանանց չի վերաբերում, սա ընդհանուր երևույթ է:

– Կուսակցության կենտրոնական մարմնում Ձեզ նման մարդիկ, նաև տղամարդ, երևո՞ւմ են: Գագիկ Ծառուկյանը Ձեզ ճանաչո՞ւմ է:

- Ճանաչում է երևի, անունով, հանդիպումների ժամանակ տեսել է, բայց առանձին հանդիպում Ծառուկյանի հետ չի եղել: Մեր կուսակցությունում շատ են շահագրգռված մարզային կառույցների ուժեղացմամբ, որովհետև դրանք լուրջ հենարան են: Ես չեմ նկատել որ նրանց հետ մղելու միտում լինի, ցանկացած ակտիվ նախաձեռնություն ընդառաջվում է, գնահատվում:

– Ինչպե՞ս եք վերաբերվում գենդերային քվոտային, բավարա՞ր էր 20 տոկոսը, թե՞ ոչ:

- Ես դա ընդունում եմ որպես իրավիճակային լուծում, ուղղակի այս պահին դա անհրաժեշտ է մեր ասած խնդիրներն առաջ տանելու, կանանց մասնակցությունը, ակտիվությունը բարձրացնելու համար: Բայց ընդհանրապես ցանկացած պարտադրանքի դեմ եմ, իմ էությամբ ես ժողովրդավար եմ, հարգում եմ բոլորի կարծիքը, փորձում եմ հասկանալ: Ես

մտածում եմ, որ երբ կանանց ակտիվացնելու խնդիր չունենանք, արդեն այդ քվոտայի հարցը կփակվի:

- Իսկ 20 տոկոսը բավարա՞ր է:

- Իմ պատկերացմամբ՝ քիչ է:

- Եթե տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ առաջադրվեք, կարո՞ղ եք հույս դնել կանանց ՀԿ-ների վրա:

- Չեմ կարող ասել, ամենից շատ համագործակցում եմ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի հետ: Ես այդ ՀԿ-ի պոտենցիալը շատ մեծ եմ համարում, այն մեծ թիկունք է կանանց համար: Հենց այդ ՀԿ-ից կարելի է ակնկալիք ունենալ ըստ երևույթին:

- Կուսակցության ծրագրում որևէ հարց կա՞ր կանանց մասնակցության վերաբերյալ:

- Հատուկ ծրագիր, որ կանանց ակտիվացնի, չկա:

- Մարզային կանանց խորհուրդները կապ ունե՞ն հանրապետական խորհրդի հետ, թե՞ ավելի շատ միմյանց հետ կապ ունեն:

- Ավելի շատ մարզային կառույցի հետ, իսկ մարզայինը՝ կենտրոնական կառույցի հետ:

Նարինե Ստեփանյան

«Կինը պիտի ավելին անի, որ հարգանքի արժանանա, հատկապես՝ կուսակցության մեջ»

Ծնվել է 1970 թ. Արարատի մարզի Այգեզարդ գյուղում: 1993 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի կիրառական մաթեմատիկա ֆակուլտետը և ստացել մաթեմատիկոսի որակավորում: 1993-ից աշխատում է Արարատի մարզի Այգեպատի միջնակարգ դպրոցում որպես մաթեմատիկայի ուսուցչուհի: 1999-ից «Պատանեկան նվաճումներ» կազմակերպության անդամ է և դասավանդել է «Կիրառական տնտեսագիտություն», «Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն», «Պետություն և իրավունք» առարկաները:

2002-ից «Ժառանգություն» կուսակցության Արարատի մարզի վարչության անդամ է:

2007-ից Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի անդամ է:

Մասնակցել է կանանց լիդերության դպրոցի պարապմունքներին:

2012-ից համատեղությամբ աշխատում է «Հայաստանում Եվրոպական քոլեջ» հիմնադրամի Արտաշատի մասնաճյուղում՝ որպես տնտեսագիտության դասախոս:

Ամուսնացած է, ունի երկու երեխա:

- Երբվանի՞ց եք «Ժառանգություն» կուսակցության անդամ:

- 2003 թվականից: Սկզբում «Պատանեկան նվաճումներ» կազմակերպությունում էի, հետո անդամակցեցի «Ժառանգություն» կուսակցությանը՝ ընդունելով գաղափարախոսությունը, հավանելով անհատներին: Ընդունվել եմ և առայժմ չեմ հրաժարվում:

Դասավանդում էի «Տնտեսագիտություն», «Մարդու իրավունքներ», մասնակցում էի սեմինարների: Դասավանդելով միշտ կանգնած էի մարդու իրավունքների, օրենքների կողքին, սակայն հաշվի էի առնում նաև մեր երկրում օրենքների վիճակը: Երբ կուսակցությունը հիմնադրվեց, ճնշում կամ պարտադրանք մեր նկատմամբ չի եղել, մենք շփումների արդյունքում պատրաստ էինք դրան: Իհարկե, եղել են նաև հիասթափություններ, եղել

են ներքին խմորումներ, հեռացողներ կուսակցությունից, սակայն ես դա չեմ ընդունում, պետք է նվիրվես: Ես շատ չեմ խառնվում, ինձ համար կարևոր է, որ ես այդ կուսակցության մեջ ազնվություն եմ տեսնում: Իհարկե, կարելի է ասել, որ այստեղ անձի պաշտամունք էլ կա, բայց ես ազնվություն եմ տեսնում: Կան գաղափարներ ժողովրդավարության վերաբերյալ, սակայն այնքան քիչ են մերոնք, որ…

- Ովքե՞ր են Ձեր կուսակցության պոտենցիալ ընտրողները:

- Անկեղծ ասած, ես մեծ հույսեր չունեմ: Գիտեն, որ ես «Ժառանգությունից» եմ, ասում են՝ շատ են հավանում մեզ, հատուկ չենք համոզում: Հաճախ հարցնում են՝ ի՞նչ ենք անում, ի՞նչ ենք տալիս, ես նորից պատասխանում եմ՝ փորձեք տեսնել ազնվությունը, հասկանալ: Մեր կուսակցությունն ընտրելու են միջին խավի ներկայացուցիչներ, մտավորականների որոշ շերտ կա, կարող եմ ասել՝ անձնական համակրանքով, անգամ դա կարող եմ ասել: Հատուկ քարոզչություն չունենք, երբ հարցնում են, բացատրում ենք, ես բարդ բան չեմ տեսնում: Մեր առաջնորդին տեսնում են, հավանում են:

-Կին ընտրողների ձայները ստանալու համար ինչ-որ բան անո՞ւմ եք:

- Ձայներ «փախցնելու» խնդիր չունենք, այն շերտում, որ նշեցի, կանայք հիմնական մասն են, գերազանցում են քանակի իմաստով, հատուկենտ տղամարդիկ են աշխատում, կանայք ավելի ակտիվ են, մեր մեջ էլ կանանց լիդերություն կա, մեր հանձնաժողովում ունենք 4 ղեկավար կին, ընտրական տեղամասերի հանձնաժողովների մասին է խոսքը, կոնկրետ մեր կուսակցության մեջ հիմնականում կանայք են, մեզ մոտ՝ Արտաշատում, կանայք ավելի շատ են: Ընտրողների մեջ էլ, կարծում եմ, հիմնականում կանայք կլինեն:

- Մասնակցե՞լ եք լիդերության դպրոցների:

- Մի քանի տարի առաջ՝ այո, այստեղ՝ Արտաշատում: Շատ բան տվեց: Կարող եմ ասել, որ լիդերության առումով մութ բաներ կան իմ մեջ, մինչև չես մասնակցում, չես հասկանում: Խոստացել են ուղարկել Երևանի լիդերության դպրոց, ես ակտիվ մարդ եմ, չեմ բավարարվում: Սկզբում կարծում էի՝ ինչ-որ քաղաքական նպատակ կա, բայց չէ: Սովորել եմ՝ ուր մտնում ես, ընդդիմադիր բան են տեսնում քո մեջ, բայց այստեղ ես այդ բանը չտեսա: Անկեղծ ասեմ՝ ձգտում ունեմ մասնակցելու: Ես իմ մեջ, իմ էության մեջ տեսնում եմ լիդերության տարրեր, իմ ուժերի վրա վստահ եմ:

- Խտրականության հանդիպե՞լ եք:

- Ես աշխատում էի դպրոցում, դուրս եկա, ես էի մեղավոր, ուստի չդիմեցի դատարան, հարգում եմ օրենքը: Փորձել եմ աշխատանք գտնել, ինչ-ինչ պատճառով չեմ գտել, բայց խնդիրը ոչ թե կին լինելն է, այլ մինչև 30 տարեկան աշխատող են ուզում: Մի անգամ էլ բոլոր մասնագիտական փուլերը անցել էի, բայց ինձ ասացին՝ հեռվից ես գալու, դա Երևանում էր, ծանոթի կամ մասնագիտական հարց չկար: Հիմա շատ եմ ուզում քաղծառայության մրցույթների մասնակցել: Վայրը կապ չունի, կաշխատեմ և՛ մեզ մոտ, և՛ Երևանում, սկզբում լիցենզիա պետք է լինի կրտսեր պաշտոնի համար: Ասում են՝ հուլիսին կգաս: Շատ գործատուների մոտ եմ եղել, տարիքս են մատնանշում:

Կանանց նկատմամբ խտրականություն, կարծում եմ, բարձր պաշտոններում կա, ես՝ որպես կին, խտրականության չեմ հանդիպել: Քաղաքականության մեջ ևս չեմ հանդիպել խտրականության, ինչքան համագումարների մասնակցել եմ, թե՛ մեզ մոտ, թե՛ կենտրոնում, կարծիքիս հետ հաշվի են նստում, լսում են, մեր կուսակցության մեջ չեմ նկատել, մյուսների մասին, բնականաբար, ոչինչ չեմ կարող ասել: Ես՝ որպես մանկավարժ, երեխաներին էլ եմ ասել. եթե մարդուն չեք ճանաչում, կարծիք մի հայտնեք: Դա իմ սկզբունքն է:

Ինչ վերաբերում է ընտանիքիս, այս պահին ամուսինս հետս է, միասին ենք, բայց սկզբում չէր պատկերացնում: Երբ կրթական համակարգում էի, գնում էի սեմինարների, մեկ-մեկ դեմ էր, որ ուշ գամ և այլն, բայց հետո ես նրան էլ ընդգրկեցի, որ տեսնի՝ ես ոչ մի վատ բան չեմ անում: Չեմ կարծում, որ նա դեմ կլիներ, եթե ես ընդգրկված լինեի կուսակցության ցուցակում, ուղղակի նրա մեջ վախ կա, ասում է՝ զգույշ եղիր, այդքան առաջ մի գնա: Մի քիչ վախ ունի քաղաքական առումով: Նա ինձ ոչինչ չի արգելում, մանավանդ որ ինքն էլ է հիմա կուսակցության մեջ: Ընտանիքում էլ, գիտեք, մենք միասին ենք որոշումներ կայացնում, չունենք խանգարող, միջամտող, մենք ենք ու մեր երկու երեխաները:

Ես ձգտումներ ունեմ, պիտի հասնեմ մի բանի, եթե պատրաստ լինեմ, կառաջադրվեմ, եթե հիմա էլ չէ, մյուս անգամ էլ չէ, ապա այն մյուս անգամ, պիտի պատրաստ լինեմ: Ես չեմ առաջադրվի, կսպասեմ՝ իմ արվածը գնահատվի, ինձ առաջարկեն, նույնիսկ աշխատանքում կսպասեմ, որ ինձ գովեն, ոչ թե ես ինձ գովեմ:

- Կարծում եք՝ քաղաքականությունում կինն իր ոճը պետք է ունենա՞, թե՞ նշանակություն չունի՝ կին թե տղամարդ:

- Կարծում եմ՝ կանայք անպայման պետք է լինեն քաղաքականության մեջ: Ես կարևորում եմ դասական ոճը, կինը պետք է խելացի լինի: Բոլորի համար է կարևոր, բայց կնոջ մեջ պետք է ավելի ընդգծված լինի ներքին կուլտուրան, բնավորությունը: Կեղծավորությունը չեմ ընդունում: Կինը պիտի ավելին անի, որ հարգանքի արժանանա, հատկապես՝ կուսակցության մեջ: Պետք է հարգանքով, պատկառանքով վերաբերվեն նրան: Դա է իմ մոտեցումը:

- Իսկ տղամարդի՞կ:

- Պետք է ազդեցիկ լինեն, իրենց ապրած կյանքով, հարթած ուղիով: Մեկ էլ տեսնում ես՝ անհայտ մեկը հայտնվեց հայտնիների կողքին: Երիտասարդներ պետք է լինեն, սերնդափոխությունը կարևոր է, բայց տարիների փորձն էլ է կարևոր: Կարծում եմ՝ 45-ից հետո: Տարիքը տղամարդու դեպքում կարևոր է: Չէ՞ որ տարեցտարի այլ կերպ ես նայում, հանդուրժող ես դառնում: Չեմ ընդունում էմոցիոնալ, պոռթկուն դրսևորումները քաղաքականության մեջ, ամեն տարիքում էլ պիտի սովորես, ես միշտ էլ սովորում եմ: Օրինակ՝ համակարգչային գիտելիքները մտցնում են դպրոցներ, ես հիմա դպրոցում չեմ, բայց տեսնում եմ, լսում եմ: Ոմանք ասում են՝ չեմ կարող, և վերջ, չեն ուզում ինչ-որ բան սովորել, ժամանակ տրամադրել: Օրինակ՝ մեր դպրոցի հաշվապահը կամ ուրիշ ուսուցիչներ: Շատ բան չեմ ուզում խոսել, քննադատել, բայց երեխա եմ դպրոց ուղարկում, տեսնում եմ:

Կարող եմ ասել, որ քաղաքականության մեջ օրենքով յուրաքանչյուր հինգերորդը պետք է կին լինի, դրա համար էլ տղամարդիկ պարտադրված կանանց են ներգրավում, եթե օրենքի պահանջը չլիներ, ուրիշ ծանոթ տղամարդկանց կներգրավեին, որ նրանց միջոցով իրենց գործերը անեին:

- Իսկ ՁԼՄ-ների վերաբերմո՞ւնքը:

- Դրական եմ գնահատում, վերցնենք այս վերջին քարոզարշավը: Ես հաճելիորեն զարմացած եմ, որ այսպես են արձագանքում, ներկայացնում ամեն ինչ. ռեալ իրավիճակը: Կոնկրետ իմ տեսածն եմ ասում: Ոչ բոլորն են, բայց կան ՁԼՄ-ներ, որոնք ինձ համար դրական են, անկողմնակալ ներկայացնում են, գուցե վճարովի եթեր է, չեմ կարող ասել, ծանոթ չեմ հեռուստատեսության աշխատանքներին:

Թերթեր առանձնապես չեմ կարդում, ինտերնետ եմ շատ փորփրում, ինքս համակարգչային մասնագետ եմ, հարմար է: Միայն գիտելիք ունեցողը պետք է գնահատվի: Նույնիսկ սեփականատերը գերադասում է կարևոր պաշտոններում մասնագետ պահել, որ իր գործը առաջ գնա:

- Հասարակական կազմակերպությունների հետ հույսեր կապու՞մ եք:

- Կապում եմ: Ինքս մտադիր եմ անդամակցել «Վերածնունդ» կազմակերպությանը: Ուղղակի, քաղաքական լարված իրավիճակ չասեմ, զբաղվածությունը խանգարեց: Ես անպայման կանդամագրվեմ: Ինչ վերաբերում է կին թեկնածուներին սատարելուն, կարող եմ ասել, որ ընտրողների համար պայքարն ավելի շուտ քաղաքական բնույթի է, քաղաքական կուսակցությունների միջև: Եթե անգամ մեծամասնականով է առաջադրվում, նայում են, թե որ կուսակցությունն է ներկայացնում, դա եմ նկատել, ժողովրդի հետ շփումներում հասկացել: Եթե անգամ անծանոթ մեկի նկարն են տեսնում, հարց են տալիս, թե որ կուսակցությունից է:

Ինչ վերաբերում է ցուցակներին, ապա մեր կուսակցությունում կանայք շատ կան: Ավելի շատ են: Կենցաղում էլ է լինում, որ ասում են. «Թող կինը գնա էս հարցով զբաղվի, տղամարդը տաքարյուն է», «Կինը կնոջը կհասկանա» և այլն: Մեր կուսակցությունում Ռաֆֆի Հովհաննիսյանի շուրջ կանայք են հավաքված: Տղամարդիկ էլ կան, բայց ինձ թվում է, որ կարևորը կանայք են: Դաշինքով ցուցակ կազմելիս մեր կուսակցության շատ կանայք դուրս մնացին, ես դրա համար ցավ եմ ապրում: Քվոտաների պարդադիր լինելը չեմ ընդունում, ինքնաբերաբար պիտի լինի: Իհարկե, դա միջազգային նորմերին համապատասխան են մտցրել, բայց ինձ մտահոգում է այն, որ թիվը լրացնելու, գլխաքանակի համար կողքից կուսակցության հետ կապ չունեցողներին կներգրավեն:

Ելենա Վարդանյան

«Քաղաքական դաշտի այն բացը, որը կարող էր լրացնել կանանց ներուժը, այսօր դեռ լրացված չէ»

Ավարտել է Սարատովի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Աշխատանքային գործունեությունն սկսել է որպես պատմության ուսուցիչ Լենինական քաղաքի թիվ 14 դպրոցում:

Հետագա տարիներին աշխատել է Գյումրու մանկավարժական ինստիտուտում որպես լաբորանտ, դասախոս, վերջին 20 տարիներին՝ պատմության և իրավագիտության ամբիոնի վարիչ: Եղել է կոմունիստական կուսակցության անդամ և ֆակուլտետի կուսակցության կազմակերպության քարտուղար:

1998 թ. ընտրվել է Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Գյումրու մասնաճյուղի նախագահ, իսկ 2000 թ. նրա նախաձեռնությամբ ստեղծվեց «Ծիածան» գենդերային հետազոտությունների կենտրոնը:

Գենդերային հավասարության, կանանց սոցիալական կարգավիճակի և քաղաքական մասնակցության բարձրացման հիմնախնդիրները հայ հասարակության արդի զարգացման և ժողովրդավարական գործընթացների հետազոտության համատեքստում դարձան Ելենա Վարդանյանի գիտական հետաքրքրությունների հիմնական ուղղությունը: Այդ թեմաներին են նվիրված նրա շուրջ 80 հոդվածները, զեկուցումները, ուսումնասիրությունները, ինչպես նաև ուսումնական ձեռնարկները բուհերի և միջնակարգ դպրոցի համար:

Ելենա Վարդանյանը մեծ ուշադրություն է դարձնում հասարակության իրավական և գենդերային իրազեկության բարձրացմանը, երիտասարդության գենդերային կրթության հիմնախնդիրներին: Գյումրու մասնաճյուղը, ակտիվորեն համագործակցելով այլ հասարակական կազմակերպությունների հետ, նպաստել է գենդերային գիտելիքների տարածմանը և ուսանողների, գիտաշխատողների, դպրոցների ու բուհերի դասավանդողների ներգրավմանը գենդերային հետազոտություններում:

Ելենա Վարդանյանը ՀՀ Հանրային խորհրդի գենդերային հարցերի և ժողովրդագրության հանձնաժողովի նախագահն է:

Ամուսնացած է, ունի երկու զավակ:

- Կանանց հասարակական կազմակերպություններն ի՞նչ դեր են կատարում կանանց քաղաքական սոցիալականացման գործում: Եվ այդ տեսանկյունից վերջին 5 տարիների ընթացքում կա՞ն փոփոխություններ:

- Առաջին հարցի առնչությամբ կարող ենք նշել, որ մեծ թվով կանանց կազմակերպություններ, իրոք, լուրջ դերակատարում ունեցան կանանց քաղաքական սոցիալականացման գործում: Հատկապես մեր կազմակերպությունը՝ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան, վերջին ոչ թե 5, այլ 15 տարվա ընթացքում մեծ ներդրում է ունեցել կանանց քաղաքական սոցիալականացման գործում: Ասոցիացիայի ոչ միայն միջոցառումները, ծրագրերը, Գենդերային հետազոտությունների, Քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնները, կանանց լիդերության դպրոցը, որը գործում է արդեն ավելի քան 10 տարի, մեծ դեր խաղացին:

Այսօր քաղաքական ոլորտում երևացող կանանց զգալի մասը Ասոցիացիայի կանանց լիդերության դպրոցի շրջանավարտներ են, այնպես որ դպրոցը միանշանակ մեծ դեր է կատարում: Կարող եմ նշել, որ Գյումրիում նույնպես վերջին 3-4 տարիների ընթացքում կազմակերպվեցին կանանց լիդերության դպրոցի 6-7 հոսքեր, և այն այժմ նույնպես շատ պահանջված է: Եվ պատահական չէ, ոչ այսօր մարզպետարաններում ստեղծված գենդերային հանձնաժողովները քաղաքացիական սոցիալականացման խնդրի լուծման գործում զգալի չափով համագործակցում են հենց մեր կազմակերպության հետ:

- Կանանց քաղաքական սոցիալականացման գործում կուսակցությունների ունեցած դերի Ձեր գնահատականը: Ի՞նչ է փոխվել 2007 թ. ընտրություններից հետո: Ի՞նչ ազդեցություն ունեն կանանց խորհուրդները կուսակցություններում կանանց դերի բարձրացման գործում, շահագրգռվա՞ծ են արդյոք կանանց առաջմղման հարցում:

- Կուսակցությունների դերի մասին, ի տարբերություն կանանց հասարակական կազմակերպությունների, չեմ կարող միանշանակ ասել, որովհետև կուսակցություններն ավելի շատ քաղաքական կարծրատիպերի ազդեցության տակ են, կանանց խնդիրները պատրաստ են քննարկելու, ոչ թե լուծելու, այն էլ՝ ընտրությունից ընտրություն:

Չեմ ուզում շատ քննադատ երևալ, բայց պետք է նշեմ, որ քաղաքական կուսակցությունների կանայք՝ ակտիվ կանայք, այսօր ընտրական

ցուցակներում չեն ընդգրկվել: Ցուցակներում հայտնվել են ոչ այդ կանայք, այլ նրանք, ովքեր «ծառայել են» տվյալ կուսակցության շահերին: Ակտիվ կանայք կարծես ընդունել են քաղաքական տղամարդկային խաղի կանոնները և կերպարանափոխվել են: Գալով շարժում, հայտնվելով քաղաքական գործունեության ոլորտում՝ նրանք ավելի շատ գործում են տղամարդկանց կանոններով:

Չեմ ուզում անուններ տալ, կարծում եմ՝ հասկանալի է, թե ինչ նկատի ունեմ: Ու չնայած ընտրական օրենսգրքում փոփոխություններ արվեցին և քվոտաների հարցում կուսակցությունների վրա որոշակի պարտավորություններ դրվեցին, սակայն առայժմ սա շատ փոքր քայլ է կանանց ակտիվ մասնակցության ապահովման ճանապարհին:

- Կա՞ն փոփոխություններ կանանց քաղաքական մասնակցության նկատմամբ հասարակության և ընտանիքների վերաբերմունքում:

- Մեր հասարակության վերաբերմունքը կանանց քաղաքական մասնակցությանը միշտ էլ շատ տարաբնույթ է եղել: Որովհետև հասարակության մեջ միշտ կա այն քաղաքակիրթ զանգվածը, որը չի տարանջատում այդ խնդիրը, չի տեսնում անհրաժեշտությունը, հաճախ զարմանում է, թե մի՞թե մեզ մոտ կանանց մասնակցության խնդիր կա: Նրանք անկեղծորեն, իրենց հայացքներից ելնելով, ենթադրում են, որ նման խնդիր գոյություն չունի:

Ինչ վերաբերում է ամբողջ հասարակությանը, իհարկե, այստեղ կարծրատիպերի ազդեցությունը մեծ է: Չգիտես ինչու, քանի գնում, հասարակությունն իբր ժողովրդավարացվում է, բայց կարծրատիպերն ավելի ու ավելի ամրանում են: Եվ սա հատկապես քաղաքական մասնակցությանն է վերաբերում:

Ես նկատել եմ, որ հատկապես մերժողական վերաբերմունքը կանանց քաղաքական մասնակցությանը ոչ թե միջին կամ ստորին խավում է դրսևորվում, այլ հենց վերին խավում: Այն նույն մարդիկ, որոնք ակտիվ մասնակցում են քննարկումներին, ստորագրում միջազգային պարտավորությունները, կարող են իրենց կարծիքը՝ որպես անձնական կարծիք, ներկայացնել, թե կնոջ տեղը ամեն դեպքում քաղաքականությունից դուրս է:

Զարմանալի է: Վերջերս լսեցի մարդու իրավունքների պաշտպանի կարծիքը, որը շատ ժամանակակից երիտասարդ լինելով և չհերքելով, որ իրենց կազմակերպությունում կա կանանց հարցերով զբաղվող անձնավորություն, փորձեց ասել, որ մենք ասիացի ենք: Նա չգիտե՞ր, որ Ասիայում եղել են Ինդիրա Գանդի և այլ կանայք, որոնք իրենց երկրների քաղաքական ճակատագիրն էին ուղղորդում: Իշխանությունը, մի կողմից,

օրենքներ է ընդունում, պարտավորություններ ստանձնում, իսկ մյուս կողմից՝ այդ հարցին կարծրատիպային մոտեցում է դրսևորում:

- Ի՞նչ գործոններ են խոչընդոտում այսօր կանանց քաղաքական մասնակցությունը:

- Քաղաքական մշակույթի ոչ բավարար ձևավորումը, որն այսօր ընդհանրապես շատ տխուր իրավիճակ է ստեղծել: Հետևում եմ քարոզչական հաղորդումներին և դրանց քննարկումներին: Հետաքրքիր է, որ ես էլ շատերի նման եմ մտածում. շատ տխուր է քարոզարշավը, նորույթներ չկան, հասարակությունը կարծես վարժվել է անձանց շուրջ խմբավորվելուն, գաղափար չկա:

Գաղափարախոսության բացակայությունը անդրադառնում է կանանց մասնակցության վրա, որովետև կանայք պետք է գան նոր խոսք ասելու, կանայք պետք է նոր գնահատական տան, պետք է նոր վերլուծություն տան հասարակության խնդիրներին, ինչը, ի վերջո, կբերի քաղաքական օրակարգի փոփոխմում: Սակայն այսօր դա պահանջված չէ: Ափսոս, բայց այդպես է: Եվ գլխավոր խոչընդոտը տեսնում եմ այստեղ. քաղաքական դաշտի այն բացը, որը կարող էր լրացնել կանանց ներուժը, այսօր լրացված չէ:

- Որո՞նք են կանանց պատգամավոր դառնալու դրդապատճառները: Դրանք տարբերվո՞ւմ են տղամարդկանցից:

- Կարծում եմ՝ այո: Կանանց դրդապատճառները, իմ կարծիքով, ավելի դասական, ազատական հիմքեր ունեն, այսինքն՝ դառնալ պատգամավոր հասարակությանը հուզող խնդիրներ առաջ քաշելու, լուծումներ գտնելու համար: Եվ այդ է վկայում այն փաստը, որ Ազգային ժողովում ունենք 12 կին պատգամավոր, և գրեթե բոլորն էլ միշտ շատ ակտիվ են, բոլոր քննարկումներին մասնակցում են, բոլորին անձամբ դեմքով ճանաչում ենք, ինչը չենք կարող ասել տղամարդ պատգամավորների մասին:

Այսինքն՝ նրանք եկել են և հասարակությանը ծանոթ են դարձել որպես պատգամավորներ: Այլ խնդիր է, թե որ կուսակցությունն են ներկայացրել, ինչ խնդիրներ են առաջ քաշել, բայց կարելի է ասել, որ շատ դեպքերում անկեղծ մղումով են այդ խնդիրներին անդրադարձել: Իսկ տղամարդիկ մեծ մասամբ խորհրդարանը դիտում են որպես իրենց բիզնեսն ավելի հաջող իրականացնելու միջոց:

Եվ այդ նպատակով նրանք տարբեր հնարներ են կիրառում, օրինակ՝ բիզնեսն ընտանիքի անդամների անունով են գրանցում: Կամ տարիներ շարունակ պատգամավորի պատվավոր կոչում ունեցողները, չգիտես ինչու, չեն հայտնվում ոչ պակաս պատվավոր խոշոր հարկատուների ցուցակներում:

- Վերջին տարիներին կանանց հասարակական կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների կանանց խորհուրդների միջև ձևավորվե՞լ է որոշ համագործակցություն: Ո՞ր ոլորտներում և ի՞նչ չափով է այն նպաստում Հայաստանում ժողովրդավարության զարգացմանը:

- Հարցի առաջին մասի առնչությամբ նշեմ, որ փորձեր արվում են. հաճախ միասնական քննարկումներ են տեղի ունենում, օրինակ՝ վերջերս ՀՀ ընտրական օրենսգրքի փոփոխությունների կամ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի առնչությամբ:

Բայց չեմ կարող ասել, թե դա որևէ կերպ անդրադարձել է ժողովրդավարացման վրա, առայժմ նկատելի չէ: Սակայն չասել, որ քայլեր արվում են, և այդ քայլերը բավականին լուրջ են օրենսդրական դաշտում, քննարկումների, հասարակական կարծիք ձևավորելու դաշտում, սխալ է:

Թեպետ իրական փոփոխություններ առայժմ դժվար է նշել: Ի՞նչն է խանգարում դրան: Իհարկե, կուսակցությունների ղեկավարների դիրքորոշումը և մասամբ իշխանությունների դիրքորոշումը, որովհետև ցանկացած համագործակցություն պետք է արդյունավետ լինի, եթե չկա համապատասխան արդյունք, չկա նաև գործունեություն:

- ՀՀ ընտրական օրենսգրքում գենդերային քվոտան բարձրացնելուց հետո քաղաքական կուսակցությունների ցուցակներում ընդգրկված կանայք կարդարացնե՞ն կանանց սպասելիքները: Որքանո՞վ կին պատգամավորները ազդեցություն կունենան օրենսդրական գործունեության վրա:

- Առայժմ կանայք պետք է արդարացնեն նրանց սպասելիքները, ովքեր ընդգրկել են իրենց ցուցակներում: Պետք է դարձյալ ասեմ, որ ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունների ցուցակներում միշտ չէ, որ ընդգրկվել են ակտիվ կանայք, ուստի չգիտեմ՝ կանանց սպասելիքները կարդարանա՞ն, թե՞ ոչ:

Գոնե կուսակցությունների սպասելիքներն արդարանան, այսինքն՝ կանանց ներգրավելով՝ նրանք կարողանան ազդել կարծրատիպերի վրա, կարողանան զարգացնել այդ կանանց քաղաքական հմտություններն ու կարողությունները: Այսօր, կանանց բերելով քաղաքականության ոլորտ, շատ մեծ արդյունքների չպետք է սպասենք: Այս անգամ մենք սպասում ենք ուղղակի, որ յուրաքանչյուր հնգյակում կին թեկնածու ունենալով՝ կունենանք Ազգային ժողովում հարաբերական համաչափ ներկայացվածություն:

- Ո՞ր ոլորտներում և ի՞նչ չափով են մասնակցում կանանց հասարակական կազմակերպությունները 2012 թ. ընտրական գործընթացներին: Նկատելի՞ է ակտիվացում նախորդ՝ 2007 թ. ընտրությունների համեմատությամբ:

- Համեմատությունը նախորդ ընտրությունների հետ, կարծում եմ, այսօր գործող կազմակերպությունների օգտին չէ: Օրենսդրության փոփոխություններն այնքան էլ նպաստավոր չեղան կանանց դիտորդական առաքելությունն իրականացնելու համար, բայց անսպասելիորեն որոշ կազմակերպություններ ստացել են ինչ-որ ծրագրեր իրականացնելու հնարավորություն: Չէի ասի, թե դրանք ավելի հմուտ, փորձառու կազմակերպություններ են, բայց սպասենք, տեսնենք՝ կունենա՞ն դրանք որևէ ազդեցություն, թե՞ ոչ: Սակայն մասշտաբային, ընդգրկուն առումով, կարծում եմ, զգալի տեղաշարժ չունենք:

- ՀՀ կառավարության կողմից գենդերային քաղաքականության հայեցակարգը և ռազմավարությունն ընդունելուց հետո ի՞նչ փոփոխություններ են տեղի ունեցել երկրի հասարակական-քաղաքական բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության ապահովման գործում:

- Սա այնպիսի մի խնդիր է, որը հազարամյակների բեռ ունի՝ հաղթահարելու, անցնելու: Չի կարելի ակնկալել, թե անմիջապես փոփոխություններ կլինեն, բայց, կարծում եմ, որ այսօր հայեցակարգ ու ռազմավարական ծրագիր ունենալը լուրջ նվաճում է:

Լուրջ նվաճում է, երբ ՀՀ վարչապետին կից կանանց խորհուրդն արդեն ստանձնում է ինստիտուցիոնալ մեխանիզմի պարտականություններ: Սա նշանակում է, որ կառավարությունում գիտակցական մակարդակում կա քաղաքականություն կերտելու և իրականացնելու միտում: Եվ դա անտեսել չի կարելի, ինձ թվում է՝ սա շատ լուրջ է: Լուրջ է և մարզային կառույցների ստեղծումը, լուրջ է նաև կրթական և տեղեկատվական ծրագրերի իրականացումը:

Բայց ինչ խոսք, հնարավոր չէ միանգամից կառավարության որոշմամբ մարդկանց գաղափարներն ու ընկալումները փոխել. դրա համար տարիներ են պետք: Տարիներ, փորձ, որը կանանց համար շատ կարևոր է:

Այնպես է ստացվել, որ կանայք փորձում են ներխուժել մի դաշտ, որն անվերապահորեն տղամարդկանցն է համարվում, ուստի պետք է շատ ընդգծված ներկայացնեն և՛ իրենց կարողությունները, և՛ իրենց կողմից բարձրացվող խնդիրները, և՛ ամենակարևորը՝ առաջարկեն իրատեսական լուծումներ, որպեսզի ընդունելի դառնան: Եվ միայն այդ դեպքում կարող ենք խոսել արդյունքների մասին:

Եթե XIX դարում ֆեմինիստուհիները խոցելի խումբ էին, այսօր այդ ծրագրերն արդեն գենդերային տեսք ունեն՝ տղամարդիկ կանանց կողքին կանգնած են: Կամա թե ակամա, ինչ-ինչ շահեր հետապնդելով, թե ոչ, բայց տեղաշարժ կա, և մեր խնդիրն է, որ ամեն կերպ, ամեն առիթից օգտվենք, որպեսզի այդ տեղաշարժը ավելի նկատելի դարձնենք:

Մարիա Թիթիզյան

«Սփյուռքն ուղղորդեց կնոջը՝ որպես հայապահպանության դրոշակակրի դեպի օջախ, խոհանոց, ընտանիք՝ այդպիսով դուրս մղելով քաղաքական գործընթացներից»

Եղել է Սոցինտերնի փոխնախագահը, ինչպես նաև ներկայացրել է Հայ հեղափոխական դաշնակցությունը Սոցինտերնի Կանանց խորհրդում: Հայաստանում աշխատել է մասնավոր, ինչպես նաև ոչ պետական ոլորտում և մի շարք ծրագրերում հանդես է եկել որպես կանանց հարցերով զբաղվող գլխավոր մասնագետ: Աշխատել է որպես գրող, խմբագիր ու թարգմանիչ և այժմ շարունակում է մշտական համագործակցությունը սփյուռքի մի շարք հայկական թերթերի հետ:

Նա եղել է ՀՅԴ Կանանց խորհրդի նախագահ, Հայաստանում Կանանց կոալիցիայի հիմնադիր անդամ, իսկ ներկայումս Ազգային ժողովրդավարական ինստիտուտի կանանց ֆորումի վարչության անդամ է:

Նախքան 2001 թ. Հայաստան տեղափոխվելն աշխատել է «Զորյան» հայկական ժամանակակից ուսումնասիրությունների և փաստաթղթային հիմնավորման հաստատությունում, եղել է Կանադայի խորհրդարանի անդամի ընտրատեղամասի օգնական, աշխատել է մի շարք ազգային քարոզարշավներում և զբաղեցրել Տորոնտոյի Հայ դատի հանձնախմբի նախագահի պաշտոնը, իսկ հետագայում եղել է Կանադայի Հայ դատի հանձնախմբի վարչության անդամ:

Ներկայումս Երևանում «Հրայր Մարուխյան» հիմնադրամի տնօրենն է:

- Ինչպե՞ս եղավ, որ ընտրեցիք քաղաքական ասպարեզը:

- Ծնվել-մեծացել եմ Կանադայում, փոքր տարիքից ակտիվ եմ եղել ոչ միայն Հայ հեղափոխական դաշնակցության շարքերում, այլև համայնքում կազմակերպվող տարբեր միջոցառումների ժամանակ: Հետևաբար ո՛չ իմ, ո՛չ էլ ծնողներիս համար զարմանալի չէր, որ իմ ապագան քաղաքական ասպարեզն է: Մասնագիտությամբ քաղաքագետ-պատմաբան եմ: Ինձ համար քաղաքականությունը շատ կարևոր և հետաքրքրական ոլորտ է, որովհետև անտարբեր անձնավորություն չեմ: Հավատում եմ, որ ազնիվ, պարկեշտ քաղաքական գործիչներ ունենալով՝ կկարողանանք վերականգնել երկիրը: Հենց այս ցանկությամբ 11 տարի առաջ տեղափոխվեցի Երևան:

- Քաղաքական կարիերայի ընթացքում Ձեր նկատմամբ՝ որպես կնոջ, խտրականություն զգացել ե՞ք:

-Իհարկե, բնականաբար, առանց դրա՞... Երկու տարբեր իրականությունների մեջ եմ ապրել՝ Արևմուտքում և Հայաստանում: Կանադայի ոչ հայկական շրջանակներում երբևէ խտրականություն չեմ զգացել. 60-ականների ֆեմինիստական շարժումն անհետևանք չի անցել, և այնտեղի հասարակությունն էվոլյուցիա է ապրել:

Թեպետ այդ շարժումն իմ սերնդի կանանց վրա նաև որոշ բացասական ազդեցություն թողեց: Մի կողմից՝ կանանց հորդորում էին տնից դուրս գալ, զբաղվել կարիերայով, կրթությամբ, մոռանալ խոհանոցի մասին, մյուս կողմից՝ լինելով հայ ընտանիքի զավակ՝ գիտակցում էի, որ այնուամենայնիվ կան տնային տնտեսուհու պարտականություններ: Ուստի փորձում էի և՛ խոհանոցում, և՛ հասարակական կյանքում լինել առաջամարտիկ:

Բոլոր դեպքերում այնտեղ հասարակությունը դրական է ընկալում կնոջ մուտքը քաղաքական ասպարեզ: Եթե դու խելացի ես, նպատակասլաց, ունես կրթություն և լուրջ առաջարկություններ, ապա կարող ես շատ առաջ գնալ: Մինչդեռ հայկական ավանդական կուսակցություններում բազմիցս զգացել եմ կանանց նկատմամբ խտրական վերաբերմունքը: Պատճառներից մեկը սփյուռքում առկա հայապահպանման խնդիրն է: Հենց այդ գաղափարախոսությամբ էլ սփյուռքն ուղղորդեց կնոջը՝ որպես հայապահպանության դրոշակակրի դեպի օջախ, խոհանոց, ընտանիք՝ այդպիսով դուրս մղելով քաղաքական գործընթացներից:

Տասնմեկ տարի առաջ, երբ եկա Հայաստան, քաղաքական ասպարեզում կին գործիչներ գրեթե չկային: Խաղի կանոնները տղամարդիկ էին որոշում, բեմահարթակում եղած կանայք էլ այդ միջավայրում գոյատևելու նպատակով կարծես վերածվել էին տղամարդկանց:

Մինչդեռ կարծում եմ, որ կինն այս ասպարեզում, բացի ուժեղ ու խելացի լինելուց, պետք է լինի կանացի: Կանացիությունը մեր օգտին է: Ես չեմ ուզում տղամարդկանց նմանվել, ուզում եմ լինել կին քաղաքական գործիչ: Խտրականություն կանանց նկատմամբ կա, բայց դա չի նշանակում, որ կանայք պետք է թևաթափ լինեն:

Ի դեպ, նույն այդ խտրականությունը դրսևորվում է նաև լրագրողների կողմից: Տղամարդկանց երբեք չեն հարցնում՝ ինչպե՞ս եք համատեղում ընտանիքն ու աշխատանքը, իսկ կնոջը գրեթե պարտադիր հարցնում են:

Սկզբում այդ հարցն ինձ զարմացնում էր, հետո դրան էլ վարժվեցի, մանավանդ որ ունեմ հրաշալի ամուսին, որն ինձ կաղապարի մեջ չի դնում: Ամուսինները պետք է միմյանց աջակցեն յուրաքանչյուր հարցում: Դա է պատճառը, որ կարողանում եմ և՛ խոհանոցում ճաշ պատրաստել, և՛ քաղաքական կյանքով զբաղվել:

- Փորձե՞լ եք պայքարել խտրականության դեմ:

- Դժվար էր: Սկզբնական շրջանում խտրականությունը գրեթե ամեն քայլափոխի է արտահայտվել, խոսքի միջոցով, հայացքով, վերաբերմունքով: Ամենապարզ մարդկային հարաբերություններում անգամ զգում էի դա: Օրինակ՝ սկզբում տղամարդիկ ինձ ձեռքով չէին բարևում: Իրականում շոկ ապրեցի, երբ աշխատանքային հանդիպման ժամանակ տղամարդ քաղաքական գործիչներն ինձ ձեռքով չբարևեցին: Վիրավորված էի: Հետո հասկացա, որ դա ոչ թե խտրականություն է, այլ մտածելակերպ:

Հայաստանում առաջին իսկ տպավորությամբ կարծիք ես կազմում, որ հայ տղամարդիկ ջենտլմեն են. դուռը բացում են, աթոռը քաշում: Սկզբում ինձ շատ լավ էի զգում, բայց հետո նկատեցի, որ ամուսինը կարող է կողմնակի անձանց ներկայությամբ կնոջը վիրավորել, այսինքն՝ փոխադարձ հարգանք չկար, կնոջ հանդեպ վերաբերմունքը կոշտ ու կոպիտ էր: Կինն ամուսնու գծած սահմաններից չի կարող դուրս գալ:

Ինձ համար դա անհասկանալի երևույթներ են: Ես և ամուսինս բոլորովին այլ հարաբերություններ ունենք: Մենք կյանքի ընկերներ ենք, կիսում ենք ուրախություն, հոգս ու դժվարություն: Բայց որոշ խավերի հայ ընտանիքներում դա գոյություն չունի:

Այս իմաստով սկզբնական շրջանը իրոք դժվար էր ինձ համար, հետո որոշեցի, որ առճակատման գնալը սխալ է: Երևի ժամանակ էր պետք, որ այս հարցերում էվոլյուցիա ապրենք Հայաստանում, սկսենք ընկալել, որ կինն ու տղամարդը պետք է միմյանց լրացնեն, ամբողջացնեն:

- Իսկ այսօր փոփոխություններ նկատո՞ւմ եք: Ինչպիսի՞ն է այսօր վերաբերմունքը կին քաղաքական գործիչների նկատմամբ:

- Փոփոխություններն ակնհայտ են: Ես դրանք առաջին հերթին նկատում եմ իմ կուսակցության շարքերում: Տարիներ առաջ գուցե ձեռքով չէին բարևում, իսկ այսօր հարգում են, գնահատում, քո կարծիքը լսում, հաշվի առնում: Առաջ, երբ խոսում էի կանանց իրավունքների մասին, տղամարդիկ այլ կերպ էին ընկալում, իսկ այսօր, սկսած ղեկավարությունից մինչև շարքային կուսակցական, հասկանում են խնդրի կարևորությունը:

Գուցե տարբեր կառույցներում կանանց ներկայացվածության առումով դեռևս շոշափելի չէ այդ առաջընթացը, բայց մեծ հաղթանակ է, որ այսօր արդեն ընկալելի է դարձել այն, որ կինը կարող է տղամարդկանց հավասար լինել և՛ իր գիտելիքներով, և՛ քաղաքական պատրաստվածությամբ ու առաջ գնալ:

- Ձեր կուսակցության ընտրական ցուցակներում կանայք ի՞նչ սկզբունքով են ընդգրկվում:

- Ես քվոտայի կողմնակից եմ: Հասկանում եմ, որ գուցե դրա մեջ վիրավորական հանգամանք կա, սակայն քվոտան պետք է դիտարկել որպես ժամանակավոր միջոց: Եվրոպան ապացուցել է, որ դա հաջողված տարբերակ է կանանց առաջընթացն ապահովելու առումով:

Մեր կուսակցությունը՝ ՀՅԴ-ն, իր համար քվոտա է սահմանել. համամասնական ցուցակի յուրաքանչյուր հինգերորդ անդամը պարտադիր պետք է կին լինի: Այսօր Դաշնակցությունը խորհրդարանում ներկայացված է 16 պատգամավորով, որից երեքը կանայք են: Ես հույս ունեմ, որ ապագա խորհրդարանում այդ տոկոսը ոչ միայն կպահպանվի, այլև կմեծանա: Կին քաղաքական գործիչները կարող են նոր երանգ, ոգի ու շունչ բերել:

- Ներկայիս խորհրդարանում կան 11 կին պատգամավորներ: Ինչպե՞ս եք գնահատում նրանց գործունեությունը:

- Եթե նայենք նրանց ակտիվությանը՝ քանի օրենքի նախագիծ են ներկայացրել, ինչպիսի ներկայություն են ապահովել, և նայենք մնացածին, ապա պարզից էլ պարզ է, որ իրենց թվի համեմատ կանայք շատ ակտիվ են եղել: Պատկերացրեք՝ եթե խորհրդարանում կրկնապատիկն ունենանք, որ արդարություն պահանջեն, որ ուրիշի փոխարեն կոճակ չսեղմեն, որ օրենքի նախագիծը նախ կարդան, հետո քվեարկեն… Ինչքա՞ն բան կփոխվի մեր իրականությունում:

Կինը պահանջում է արդարություն, նա որպես մայր է մոտենում խնդիրներին: Կնոջ յուրահատուկ մոտեցումն ու անհանգստությունը տարբերվում է տղամարդու վերաբերմունքից: Հենց դա է պատճառը, որ մենք իրար ամբողջացնում ենք: Եվ հետո մենք չենք կարող երազել ժողովրդավարության մասին, եթե ազգաբնակչության կեսը մասնակից չէ այդ գործընթացին:

- Ի՞նչ նպատակներով եք մտել քաղաքական ասպարեզ:

- Ես միշտ ասում եմ՝ չեմ ապրում միայն ինձ համար, ապրում եմ իմ զավակների, թոռների համար: Քսան տարի հետո, երբ զավակներս ինձ նայեն և հարցնեն՝ մամ ջան, քո սերունդն ի՞նչ արեց այս երկրի համար, ուզում եմ՝ պատասխան ունենամ: Իմ ժառանգությունը նրանք են: Ես ուրիշ բան այս երկրի վրա չեմ թողնելու: Ես հավատում եմ, որ մեզանից յուրաքանչյուրը կարող է կաթիլ առ կաթիլ փոխել այս երկիրը:

- Եթե առաջադրվեք, ովքե՞ր են լինելու Ձեր ընտրողները, ո՞ւմ եք ուղղելու Ձեր խոսքը:

- Քսանյոթ տարի դաշնակացական եմ: Իմ ընտրողն ազգային գաղափարախոսությամբ տոգորված ընտրազանգվածն է: Իմ ընտրողն այն մարդն է, որը սոցիալական արդարություն է ուզում, ընդամենն ուզում է նորմալ ապրել, ուզում է հաց վաստակել, ուզում է կարողանալ երեխաներին պահել: Ախր, ինչո՞ւ պետք է նա թողնի իր երկիրն ու գնա: Ինչո՞ւ: Չգիտի՝ այնտեղ ինչ կա, բայց թողնում ու գնում է, որովհետև այստեղ չի կարողանում ընտանիք պահել: Իսկ այն երիտասարդները, որոնք այստեղ աշխատանք ունեն, ապագա չեն տեսնում: Փայլուն լուսավոր սերունդը թողնում և հեռանում է այս երկրից, որովհետև այստեղ հեռանկար չի տեսնում:

Աիդա Թոփուզյան

«Անհաջողության պատճառը քաղաքական կամքի բացակայությունն է, յուրաքանչյուր կուսակցության «ներքին խոհանոցում» կանանց առաջմղման քաղաքական կամքի բացակայությունը»

Ավարտել է Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետը, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր է:

Եղել է ՀԼԿԵՄ Կենտկոմի առաջին քարտուղար, Հայաստանի կոմկուսի Երևանի քաղկոմի երկրորդ քարտուղար, ՀՀ կրթության փոխնախարար, ՀՀ կրթության և գիտության փոխնախարար:

Դասավանդում է Վ. Բրյուսովի անվան պետական լեզվագիտական համալսարանում:

Կանանց հանրապետական խորհրդի նախագահ, «Կին ընտրողների լիգա» հասարակական կազմակերպության հիմնադիր նախագահ:

- Հետընտրական իրավիճակի Ձեր գնահատականը. ի՞նչ սպասելիքներ ունեիք ընտրություններին կանանց մասնակցությունից, և իրականացա՞ն դրանք:

- Կանանց հանրապետական խորհուրդը դիտորդական առաքելությամբ հանդես եկավ: Յոթ մարզերում դիտորդական աշխատանք կատարեցինք: Կարող եմ ասել, որ միջազգային կազմակերպությունների արտահայտած կարծիքներին, դիտողություններին ընդհանուր առմամբ համաձայն ենք: Համեմատած 2007 թ. ընտրությունների հետ՝ այս տարվա ընտրությունների ժամանակ ներսում՝ քվեարկության սենյակներում, խախտումներ գրեթե չկային: Մեր կողմից նկատված խախտումն այն էր, որ սեղանների մոտ շատ հերթեր էին կուտակվում, ինչը կարող էր խառնաշփոթ առաջացնել, և հետևաբար, կրկնակի քվեարկության դեպքեր լինեին:

Բայց ընտրատեղամասերից դուրս մեծ խմբերով մարդկանց կուտակումներ էին նկատվում, թաղամասային հեղինակությունների և նրանց ներկայացուցիչների «կոնսուլտացիաներ», ցուցակներում նշված հասցեներում չապրող մարդկանց անուններ: Օրինակ՝ Օշականից ավտոբուսով մարդկանց են բերել, որոնք քվեարկել են Երևանում, հետո էլ նույն մարդիկ քվեարկել են Օշականում և այլն:

Ինչ վերաբերում է կանանց մասնակցությանը, կարող եմ ասել, որ ինձ համար ոչ մի անակնկալ չեղավ:

ՀՀ ընտրական նոր օրենսգրքի ընդունման նախաշեմին Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի կազմակերպած կլոր սեղանի ժամանակ, որին մասնակցում էր նաև ԱԺ պետա-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Դավիթ Հարությունյանը, ես առաջարկեցի օրենքում ամրագրել, որ կանայք 20% կազմեն կուսակցությունների ընտրությունների արդյունքներով ներկայացված վերջնական ցուցակներում, երբ ինքնաբացարկները կավարտվեն, և հենց այդ վերջնական ցուցակը պետք է ընդունի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Իսկ եթե կուսակցության վերջնական ցուցակում 20% կին չլինի, այդ կուսակցության ցուցակը չպետք է հաստատել: Առաջարկությունը չընդունվեց, և այսօր ունենք այն պատկերը, որ Ազգային ժողով անցած կուսակցություններից միայն երկուսն են իրենց վերջնական ցուցակներում ապահովել կանանց 20 տոկոսը: Բացի այդ, միայն համամասնական ընտրակարգով չէր էլ կարող Ազգային ժողովում ապահովվել կանանց 20% ներկայացվածություն, քանի որ 41 պատգամավոր ընտրվում է մեծամասնական համակարգով, որում կանանց հնարավորություններն ավելի սահմանափակ են:

Այսինքն՝ հերթական անգամ ցուցադրաբար տպավորություն ստեղծեցին, թե իբր անհրաժեշտ են համարում որպես ժամանակավոր քայլ կանանց համար քվոտա սահմանել, ամրագրեցին դա օրենքում, բայց իրականում ոչինչ չարվեց կանանց օրենքով սահմանված ներկայացվածությունն իրապես ապահովելու համար:

- Իսկ ինչպե՞ս եք գնահատում նորընտիր Ազգային ժողովում կանանց դերը:

- Նորընտիր խորհրդարանի այն կին պատգամավորները, որոնց ես ճանաչում եմ, արդեն կայացած մարդիկ են և կարող են աշխատել: Իսկ նորերին ես գրեթե չեմ ճանաչում ու չեմ հասկանում, թե ինչպես են հայտնվել ցուցակներում: Անկեղծ ասած, դա էլ է անհասկանալի: Վերջ ի վերջո, մինչև Ազգային ժողովի պատգամավորության թեկնածու դառնալը մարդը պետք է ինչ-որ ճանապարհ անցնի, որ իրեն ճանաչեն, գոնե մինչև ընտրությունները հանրությունը քիչ թե շատ ճանաչի այդ կնոջը:

Կին պատգամավորների կեսից ավելիին հասարակությունը չի ճանաչում, բայց հույս ունենանք, որ նրանք լավ կաշխատեն: Կուսակցությունների ներսում ողջ «սև» աշխատանքը կանայք են անում, բայց երբ պետք է

ղեկավար մարմնում ընտրել կամ պատգամավորի թեկնածու առաջադրել, կանայք արդեն երկրորդական, երրորդական դեր են խաղում: Համոզված եմ, որ կանայք են մեղավոր, չեն կարողանում պաշտպանել իրենց իրավունքները և արժանապատվությունը:

Առաջին տարին չէ, որ նույն իրավիճակում ենք հայտնվում, այդ պատճառով էլ առաջարկում էինք, որ կանայք վերջնական ցուցակում պետք է 20% կազմեն, որովհետև բազմաթիվ օրինակներ ունեինք, երբ քվեարկության արդյունքները հայտարարելուց հետո կանանց կողմից ինքնաբացարկներ էին ներկայացվում:

Նշեմ, որ օրենքում չընդունվեց նաև մեր մյուս առաջարկությունը՝ եթե ցուցակից կին է դուրս գալիս, նրա տեղը զբաղեցնի ցուցակի հաջորդ կինը: 20 տարի պահանջվեց գիտակցելու համար, որ քվոտան անհրաժեշտ է և ժամանակավոր միջոց է:

- Սատարե՞լ են կանանց հասարակական կազմակերպությունները համամասնական և մեծամասնական ընտրակարգերով առաջադրված կանանց, և ինչպե՞ս է դա դրսևորվել:

- Գուցե, բայց Կանանց հանրապետական խորհուրդը երբեք որևէ մեկին չի սատարել և չի պատրաստվում սատարել: Մենք արդար, թափանցիկ ընտրությունների գործընթացի կողմնակից ենք: Մեր կազմակերպությունը գործընթացն է վերահսկում, և ուզում ենք, որ այն արդար ու թափանցիկ լինի:

- 2012 թ. ընտրություններում կանայք հաջողության հասա՞ն: Եթե այո, ինչպե՞ս այն դրսևորվեց, իսկ եթե ոչ, ապա որո՞նք են անհաջողության պատճառները:

- Ոչ, չհասան: Անհաջողության պատճառը քաղաքական կամքի բացակայությունն է, յուրաքանչյուր կուսակցության «ներքին խոհանոցում» կանանց առաջմղման քաղաքական կամքի բացակայությունը: Դա արդեն նրանց խնդիրն է:

- Ի՞նչ եք կարծում, որո՞նք են կանանց՝ պատգամավորական մանդատից հրաժարվելու դրդապատճառները, և կարելի՞ է այդ երևույթը որակել որպես ճնշում և թաքնված խտրականություն կանանց նկատմամբ:

- Դա խնդիր է ոչ միայն կանանց համար: Տղամարդկանց էլ են պարտադրում ինքնաբացարկ հայտնել: Սա վկայում է, որ ցուցակները կազմելիս դարձյալ ձևականությունն է առաջնայինը: Չեմ կարող ասել, որ դա խտրականություն է կանանց, ոչ քիչ դեպքերում նաև տղամարդկանց նկատմամբ: Եվ, վերջ ի վերջո, ունեցել ենք նաև օրինակ, երբ 2007 թ. կանանց հրավիրել են և առաջարկել ինքնաբացարկ ներկայացնել, բայց կանանցից մեկը հրաժարվել է: Ուզում եմ ասել, որ դա նաև մարդու ընտրությունն է: Եթե չես ուզում, մի ներկայացրու ինքնաբացարկ, դու արդեն ընտրվել ես:

- Ի՞նչ ազդեցություն ունեցան ընտրությունները հասարակական կարծիքի վրա կանանց քաղաքական մասնակցության անհրաժեշտության գիտակցման առումով:

- Այդ ազդեցությունն ուղղակի ձևականորեն է ստեղծվում, որպեսզի ցույց տան, որ այն կա: Նույնիսկ այսքան աշխատանք տանելուց հետո, կլոր սեղաններ և այլ միջոցառումներ անցկացնելուց հետո համոզված եմ, որ ոչինչ չի փոխվի, քանի դեռ քաղաքական կամք չկա, քանի դեռ այն պաշտոնյաների, որոնք պետք է քաղաքական կամք դրսևորեն, խոսքը և գործը չի համընկնում: Նկատի ունեմ մասնավորապես Ազգային ժողովի հանձնաժողովների ղեկավարներին, որոնք պարտավոր են օրենսդրական փոփոխությունների միջոցով այդ ամենն անել, բայց մի բան ասում են և բոլորովին այլ բան անում:

Աղավնի Կարախանյան

«Չեմ կարող ասել, թե Ազգային ժողովում ներկայացված կանայք կին քաղաքական գործիչներ են, նրանք կանայք են քաղաքականության մեջ»

Ավարտել է Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի պատմության ֆակուլտետը և Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի ասպիրանտուրան: Պատմաբան-քաղաքագետ:

Մասնագիտական գործունեությունը սկսել է Երևանի Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտում՝ որպես Արևմտյան Եվրոպայի երկրների և ԱՄՆ-ի նոր և նորագույն պատմության դասախոս: Դասավանդել է անգլերեն Հայկական բաց համալսարանում: Աշխատել է Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնում որպես փորձագետ-վերլուծաբան: Դասավանդել է ՀՀ Կառավարման պետական ակադեմիայում: ՄԱԿ-ի փորձագիտական ակումբի անդամ է:

Ներկայումս ղեկավարում է «Քաղաքացիական հասարակության և տարածաշրջանային առաջընթացի ինստիտուտ» ՀԿ-ն:

Մի շարք մենագրությունների և գիտական հոդվածների հեղինակ է: Հեղինակ և մասնակից է բազմաթիվ միջազգային հետազոտական ծրագրերի և միջոցառումների: Արժանացել է Ջոն Դ. և Քեթրին Տ. Մակարթուրների հիմնադրամի անհատական գրանտի:

Ամուսնացած է, ունի երկու դուստր:

- Ինչպե՞ս կգնահատեք հետընտրական իրավիճակը. ի՞նչ սպասելիքներ ունեիք ընտրություններում կանանց մասնակցությունից, և իրականացա՞ն արդյոք դրանք:

- Ընտրությունների հետ կապված որևէ անձնական կամ հասարակական սպասելիքներ չեմ ունեցել: Գիտեի, որ բեկումնային ոչինչ չի կատարվելու: Իսկ ինչ վերաբերում է ներկայիս իրավիճակի գենդերային կտրվածքին, ապա ես չեմ տեսնում կտրուկ փոփոխություններ գենդերային հաշվեկշռում, բայց առկա են քանակական բնույթի որոշ փոփոխություններ: Չեմ նկատում նաև մեծ որակական փոփոխություններ, բացի փոխխոսնակի պաշտոնում Հերմինե Նաղդալյանին ընտրելուց: Սակայն կարող եմ ասել, որ նա արդեն վաղուց է քաղաքականության մեջ, խորհրդարանական մեծ, լուրջ փորձ

ունի: Նա քաղաքականության մեջ պատահական մարդ չէ: Շատ կարևոր է, որ մարդն այդ պաշտոնում պրոֆեսիոնալ լինի:

- Ինչպե՞ս եք վերաբերվում կանանց ներկայացվածությանը նորընտիր Ազգային ժողովում:

- Տոկոսային հարաբերակցության վերաբերյալ ես իմ կարծիքն եմ ունեցել, և իմ գնահատականը նույնն է մնացել. միշտ չէ, որ քանակը կարող է որակ ապահովել: Ձևական մասնակցությունը պետք է ցուցանիշի համար, բայց այն քիչ արդյունավետ է: Որպեսզի մասնակցությունը համարվի դրական արդյունք, որական տեղաշարժ, անհրաժեշտ է, որ մարդը պատահական չհայտնվի քաղաքականության մեջ, այն պետք է օժտված լինի քաղաքական գործունեության չափանիշներով:

Իհարկե, կարելի է կատարել քանակական փոփոխություններ, ինչը կհանգեցնի որակական փոփոխությունների: Սակայն կարծում եմ՝ քաղաքականությունն այն ոլորտը չէ, որտեղ վրաղրման եղանակով կարելի է որակական արդյունք ստանալ:

Շատ կարևոր է քաղաքական մոտիվացիան, և ես համոզված եմ, որ ընտրություններում առաջադրված կանանց մեծ մասը քաղաքականապես մոտիվացված չէ: Որոշ մասն ապահովում է կանանց ներկայությունը ցուցակներում, իսկ տոկոսն ու ձևական բովանդակությունն ինձ համար նշանակություն չունեն:

Նորընտիր Ազգային ժողովում ներկայացված կանանց մասին կարելի է ասել, որ նրանք իրենց տեղում են: Չեմ կարող ասել, թե նրանք կին քաղաքական գործիչներ են, նրանք կանայք են քաղաքականության մեջ: Կինը քաղաքականության մեջ պարզապես կարգավիճակ է: Իսկ կին քաղաքական գործիչը, որը կներկայացնի բովանդակային մասը, բոլորովին այլ է: Ինձ համար կին քաղաքական գործչի օրինակ է Ջեմմա Հասրաթյանը, մարդ, որը չի գնում քաղաքականություն, բայց փորձառու կին քաղաքական գործիչ է: Այդպիսի մոտիվացված կանայք քիչ են:

Խորհրդարանում ներկայացված մարդկանց՝ և՛ կանանց, և՛ տղամարդկանց որակները պետք է համապատասխան լինեն, քաղաքականապես մոտիվացված:

- Ինչպե՞ս եք գնահատում կանանց նշանակումները նորընտիր խորհրդարանում:

- Ես ողջունում եմ որակական մասնակցությունը: Թող փոքր տոկոս լինի, բայց որակյալ: Մեկ անգամ ևս ուզում եմ բերել Հերմինե Նաղդալյանի օրինակը:

Տվյալ դեպքում մեկ մարդու օգտակար գործողության գործակիցն ավելի մեծ կլինի, քան 10 մարդու գործակիցը: Իհարկե, լինում են պատահական մարդիկ, որոնք չեն տեսնում և չեն հասկանում իրենց խնդիրը, մասնակցությունը քաղաքականությանը դիտում են որպես զուտ անձնական շահերի լուծման հնարավորություն:

Ես համարում եմ, որ սխալ է կնոջը նախարար նշանակել սոսկ այն պատճառով, որ նա կին է, միայն հաշվեկշռի համար: Ինձ համար կարևոր է, որ այդ նախարարի գործունեության որակը համապատասխանի նրա պաշտոնին, իսկ կին կլինի նա, թե տղամարդ, ինձ համար էական դեր չունի: Նա պետք է մասնագետ լինի:

- Նկատո՞ւմ եք փոփոխություններ կանանց քաղաքական ակտիվության մեջ 2007 թ. ընտրությունների համեմատ:

- Առանձնակի եռուզեռ չեմ նկատել, չեմ կարող ասել, թե նրանք ավելի ակտիվ են դարձել քաղաքական գործընթացներում: Հակառակը, ինձ թվում է, որ որոշակի անկում է տեղի ունեցել: Ակնհայտ է հասարակության ընդհանուր անտարբերությունը՝ կապված քաղաքական ընտրական գործընթացի հետ, որը տարածվում է նաև կանանց վրա: Եվ այժմ կանայք մեծ մասամբ քաղաքականություն են գնում անձնական նպատակներով: Ես չեմ տեսնում քաղաքական գործընթացներում ընդհանուր մասնակցություն՝ որպես կանանց սոցիալական ակտիվություն, և ամենակարևորը՝ չեմ տեսնում համախմբված մասնակցություն: Այս ուղղությամբ հասարակական գործունեության ոլորտում դեռ շատ անելիքներ կան:

Սոցիալ-տնտեսական չկարգավորվածությունը խիստ բացասական ազդեցություն է ունենում կանանց քաղաքական մոտիվացիայի և քաղաքական ակտիվության վրա: Ակտիվ կինը պետք է կարողանա պաշտպանել իր իրավունքները, լինի մոտիվացված, լավ պատրաստված: Ստացվում է, որ կինը չի հասցնում զբաղվել քաղաքականությամբ, պարզապես ժամանակ չունի, նաև՝ ցանկություն: Ուստի կարծում եմ, որ կանանց շարժման որակական և քանակական ցուցանիշները պետք է սոցիալ-տնտեսական հիմք ունենան:

Հասարակական կազմակերպությունները կարող են, նախ, օգնել կանանց կազմակերպվել կառուցվածքային առումով, ձևակերպվել որպես կազմակերպություն՝ ասոցիացիա կամ միավորում, այսինքն՝ «հովանոցային» կազմակերպություն: Երկրորդ՝ բովանդակություն հաղորդել այդ կազմակերպությանը, մասնավորապես՝ տալ գիտելիքներ՝ և՛ ընդհանուր բնույթի, և՛ քաղաքական: Բայց գլխավոր հարցն այն է, թե ինչպես շահագրգռել այդ կանանց: Շատ դժվար է այդ ճանապարհին կոտրել կարծրատիպերը, ներգրավել մարդկանց, դաստիարակել, կրթել, մղել նրանց դեպի քաղաքականություն:

Դա պետք է լինի պետական քաղաքականություն երկրում տնտեսական վիճակի բարելավման, աշխատատեղերի ստեղծման ուղղությամբ: Դա բավական բարդ գործընթաց է, որը շատ ժամանակ և ուժ է պահանջում:

- Իսկ ո՞ր ոլորտներում և ի՞նչ չափով են կանանց հասարակական կազմակերպությունները մասնակցում 2012 թ. ընտրական գործընթացներին: Եվ այս կապակցությամբ ի՞նչ մասնակցություն է ունենում ձեր կազմակերպությունը:

- Կանանց հասարակական կազմակերպություններն այդ իմաստով շատ ակտիվ են: Առավել հաճախ հանդես են գալիս դիտորդական առաքելությամբ: Հասարակական կազմակերպությունները գործողությունների ազատություն ունեն, նրանք ճնշման տակ չեն, նրանց գործողությունները պետության կողմից չեն կարգավորվում: Կարծում եմ՝ մենք այդ տեսանկյունից շատ ազատություն ունենք:

Մեր կազմակերպությունն այս տարի ընտրական գործընթացներին չի մասնակցել: Մեր մասնակցությունը վերլուծությունն ու գնահատականներն են, որոնք մենք տալիս ենք մամուլին, քաղաքական ընտրական գործընթացը լուսաբանող լրագրողներին, մասնակցել ենք թոք-շոուի:

- 2011 թ. ՀՀ ընտրական օրենսգրքում կատարված փոփոխություններից մեկի արդյունքում գենդերային քվոտան 15 տոկոսից բարձրացավ մինչև 20 տոկոս: Ի՞նչ եք կարծում, այդ փոփոխությունը դրական արդյունք տվե՞ց:

- Կարծում եմ՝ ոչ: Դա, իմ կարծիքով, քանակի և որակի խնդիր է: Իհարկե, կարծիք կա, որ կանայք պետք է ավելի մեծ թվով ներկայացված լինեն, բայց, իմ համոզմամբ, բարձր բղավելուց ձայնդ ավելի լսելի չի դառնա: Պետք է պարզապես այնպես անել, որ խոսքդ ծանրակշիռ լինի:

- Ի՞նչ գնահատական կտաք նախընտրական քարոզարշավին կին թեկնածուների մասնակցությանը: Ի՞նչ չափով էր այդ մասնակցությունը տեսանելի հասարակությանը:

- Մեծամասնական ընտրակարգով առաջադրման կանոնները բավական կոշտ են, եթե հաշվի առնենք, որ այստեղ արդեն ամեն ինչ իրենցով են արել ու բաշխել: Մեծամասնական ընտրատարածքներում առաջադրվող թեկնածուներին մեծ ֆինանսական հնարավորություններ են անհրաժեշտ, «տանիք», աջակցություն: Կնոջ համար ավելի հեշտ է առաջադրվել

քաղաքական կուսակցությունների ընտրական ցուցակներով: Չեմ կարծում, թե հետագայում մեզանում մեծամասնական ընտրատարածքներում առաջադրվող կանանց թիվը կտրուկ կավելանա: Դա տեղի կունենա միայն այն ժամանակ, երբ ունենանք ֆինանսապես անկախ կանանց, երբ կհայտնվեն լուրջ բիզնես լեդիներ ոչ թե փոքր ու միջին, այլ խոշոր բիզնեսի բնագավառում: Այդպիսի կանայք կարող են քաղաքականություն գալ, առաջադրվել մեծամասնական ընտրակարգով:

Իսկ ինչ վերաբերում է կուսակցությունների ընտրական ցուցակներում ընդգրկված կանանց, ապա գաղտնիք չէ, որ կուսակցությունները պարզապես ձգտում էին ապահովել օրենքով պահանջվող քվոտան: Ավելին, կարծում եմ՝ կանայք իրենք էլ մեծ մասամբ տրամադրված են ձևական մասնակցության, այսինքն՝ օրենքով պահանջվող տոկոսի ապահովմանը: Նրանց խնդիրն իրենց անուններով, ազգանուններով և գենդերային ներկայացվածությամբ այդ տոկոսն ապահովելն էր:

Այդ խնդիրը լուծվել է, և վերջ: Նրանց մասնակցության անհրաժեշտությունը սպառվել է ի սկզբանե համաձայնեցված պայմանավորվածության հիման վրա: Կարող եմ ենթադրել, որ նրանց առաքելությունը օրինական շրջանակների ապահովումն էր: Կարիք չկա քաղաքական այլ պատճառաբանություն փնտրել: Կարծում եմ՝ այստեղ վիրավորանքի գործոն էլ չկա, քանի որ նրանք ի սկզբանե իրենց կամքով արդեն պատրաստ էին ինքնաբացարկի: Ինձ թվում է, որ կանանց այդ խումբն իրեն ինքնահիրացված է համարում և համոզված է, որ բարի գործ է արել իր կուսակցության համար: Նրանք կարող են կատարած առաքելությունից ինքնաբավարարման զգացում ունենալ:

- Ընտրությունները որևէ ազդեցություն ունեցա՞ն հասարակության կողմից կանանց քաղաքական մասնակցության անհրաժեշտությունը գիտակցելու տեսանկյունից:

- Ընտրությունների ընդհանուր ենթատեքստում, կարծում եմ, նշանակալի ազդեցություն դրանք չունեցան: Քանի որ ընտրությունների ընթացքում էական փոփոխություններ և արդյունքներ չեղան, դժվար է ասել, թե դրանք կարող էին որևէ ազդեցություն ունենալ: Կարող եմ նշել միայն, որ արդյունքը միջինից էլ ցածր էր:



Նոննա Մարգարյան

«Իրենք՝ քաղաքական գործիչները պետք է լինեն հասարակական կազմակերպությունների կողքին»

Ավարտել է Երևանի «Ռավվի» համալսարանի իրավաբանական ֆակուլտետը և ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի պետական և տեղական ինքնակառավարման ֆակուլտետը:

Մասնագիտական գործունեությունը սկսել է Սյունիքի մարզի Սյունիք գյուղական համայնքում՝ որպես իրավախորհրդատու:

2002-2004 թթ. աշխատել է ՀՀ պետական գույքի կառավարման (սեփականաշնորհման) նախարարությունում՝ որպես իրավաբան: 2005 թվականից աշխատում է հասարակական սեկտորում՝ «Պրոֆեսիոնալները հանուն քաղաքացիական հասարակության», «Դպրոցական ծնողխորհուրդների անդամների ազգային ասոցիացիա», «Հայկական Կարիտաս», «Լիարժեք կյանք» հասարակական կազմակերպություններում:

2011 թվականից «Պրոֆեսիոնալները հանուն քաղաքացիական հասարակության» ՀԿ-ի նախագահն է:

- Ի՞նչ դեր են խաղում կանանց հասարակական կազմակերպությունները կանանց քաղաքական սոցիալականացման գործում: Եվ այս տեսանկյունից վերջին 5 տարիներին տեղի՞ են ունեցել փոփոխություններ կանանց ՀԿ-ների գործունեության մեջ:

- Անկասկած, կանանց հասարակական կազմակերպությունները էական դեր են խաղում կանանց սոցիալականացման գործում, քանի որ նպատակ են դնում կարգավորել կամ լուծել կանանց հիմնախնդիրները, իրականացնում են գործունեություն՝ ուղղված հասարակությունում, պետական կառույցներում, տեղական մակարդակում և առհասարակ պետությունում կանանց դերի և մասնակցության ակտիվության բարձրացմանը:

Գենդերային հարցերը մեր կազմակերպության առաջնահերթությունը չեն: Մեր կազմակերպության առաքելությունը քաղաքացիական հասարակության ինստիտուտների դերի և նշանակության զարգացնումն ու կայունա-

ցումն է: Հիմնականում զբաղվում ենք քաղաքացիական հասարակության կառույցների շահերի պաշտպանությամբ, տեղական և ազգային մակարդակով սոցիալական գործընկերության հարցերով: Այդ ուղղությամբ ծրագրեր են իրականացվել համայնքներում, և նախարարությունների մակարդակով ընդունվել են կանոնակարգեր: Գենդերային հարցերը դուրս են մնացել մեր կազմակերպության տեսադաշտից: Մենք երբևէ հետազոտություններ չենք անցկացրել, որոնք առնչվեին գենդերային հարցերին կամ կանանց մասնակցության խնդիրներին:

Մեր անցկացրած հետազոտություններից մեկը նվիրված էր նախընտրական քարոզարշավի ընթացքում քաղաքական կուսակցությունների ծրագրերի վերլուծությանը, թե ինչ չափով են քաղաքական կուսակցությունների ծրագրերում ներառված հասարակական սեկտորի, քաղաքացիական հասարակության ինստիտուտների և ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության հարցերը: Տվյալները ներկայացվել և քննարկվել են կլոր սեղանի ժամանակ: Ֆորումի շրջանակում քաղաքական կուսակցությունները ստորագրեցին հռչակագիր այն մասին, որ խորհրդարանական ընտրությունների արդյունքում քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների ընտրվելու դեպքում նրանք աջակցելու են հասարակական սեկտորին և քաղաքացիական հասարակության կառույցներին:

Ընդ որում, քաղաքական կուսակցությունների նախընտրական ծրագրերն ուսումնասիրելիս մենք խնդիր չենք դրել հետազոտել որոշակի որոլտներ, օրինակ՝ տնտեսական, գենդերային, մեզ հետաքրքրում էր սոսկ վերը նշված համագործակցությունը:

Ինչ վերաբերում է կանանց քաղաքական սոցիալականացման գործում կանանց ՀԿ-ների դերի փոփոխմանը վերջին 5 տարվա ընթացքում, կարող եմ արտահայտել միայն իմ անձնական կարծիքը, առանց հղումներ անելու վիճակագրական տվյալներին: Գաղտնիք չէ, որ սնկի նման աճած շատ ՀԿ-ներ ներկայումս մարում են: Դրան, ըստ իս, նպաստում են հետևյալ գործոնները. օրենսդրական դաշտը, դրամաշնորհների կրճատումը, երկրից դոնոր կազմակերպությունների հեռացումը: Այսօր հասարակական գործունեության բոլոր ոլորտներում շատ են գրանցված, բայց չգործող ՀԿ-ները: Նկատվում է կանանց հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ների դերի որոշակի բարձրացում: Կանանց կազմակերպությունների ակտիվության շնորհիվ վերջին տարիներին քննարկվում են ընտանեկան բռնության հարցերը, հասարակության մեջ ձևավորվել է այն մոտեցումը, որ բարձրացել է կանանց դերը ընտանեկան բռնության դեպքերի վերլուծության հարցում: Նկատելի է ընտանիքում կնոջ դերի դրական տեղաշարժ, հասարակությունում ավելի ակտիվ են քննարկվում այն հարցերը, թե կարո՞ղ է արդյոք կինը լինել լիդեր, քաղաքական գործիչ, աշխատել կառավարման կառույցներում:

- Ինչպե՞ս կգնահատեք կուսակցությունների դերը կանանց քաղաքական սոցիալականացման գործում, ի՞նչն է փոխվել 2007 թ. ընտրություններից հետո: Ի՞նչ ազդեցություն ունեն կանանց խորհուրդները կուսակցություններում կանանց դերի բարձրացման առումով, կուսակցությունները շահագրգռվա՞ծ են առաջ մղել կանանց:

- Չեմ կարող պատասխանել այդ հարցերին, քանի որ հեռու եմ կուսակցություններից: Ես անկուսակցական եմ, և դրանք ինձ բոլորովին չեն հետաքրքրում: Բայց ինչքան իմ անձնական դիտարկումներն են հնարավորություն տալիս ինձ դատելու 2007 թ. ընտրություններից հետո տեղի ունեցած փոփոխությունների մասին, կարող եմ նշել, որ կանանց թիվը կուսակցությունների ընտրական ցուցակներում նկատելիորեն աճել է: Բայց ինչքանով կհաջողվի պահպանել այդ վիճակը, կամ կին թեկնածուներից քանիսը կընտրվեն, առայժմ հայտնի չէ: Ի՞նչ երաշխիք, որ նրանց չեն «խնդրի» հրաժարվել մանդատից:

Կուսակցությունների կանանց խորհուրդների առնչությամբ պետք է ասեմ, որ որևէ տեղեկություն չունեմ այդ մասին: Իսկ կանանց առաջ մղելու հարցում կուսակցությունների շահագրգռվածության կապակցությամբ կարող եմ ասել, որ հարաբերակցությունը մոտավորապես 50:50 է: Այսինքն՝ մի դեպքում կանայք իրենք են քաղաքականությանը մասնակցելու նախաձեռնություն ցուցաբերում, մյուս դեպքում՝ կուսակցությունները: Հասարակության մեջ արդեն ունենք կայացած կին առաջնորդներ:

Անշուշտ, բավական ժամանակ և ջանքեր պահանջվեցին դրան հասնելու համար: Այսօր կյանքի ցանկացած ոլորտում արդեն տեսնում ենք կին առաջնորդների: Գլխավորը՝ նրանք կան, իսկ թե ինչ դեր են կատարում՝ առաջնային, թե երկրորդական, արդեն այնքան էլ կարևոր չէ: Չի բացառվում, որ կուսակցություններն էլ հենց առաջ են քաշում ավելի մեծ թվով կանանց իրենց կուսակցություններում ներգրավելու համար: Թեպետ դա կարող է արվել նաև կանանց մտավոր ներուժն օգտագործելու նպատակով կամ պարզապես ցուցադրաբար:

- Փոխվե՞լ է արդյոք հասարակության և ընտանիքի վերաբերմունքը կանանց քաղաքական մասնակցության նկատմամբ:

- Ընտանիքի և հասարակության վերաբերմունքը կանանց քաղաքական մասնակցությանը բավականաչափ փոխվել է, վերջին 5 տարում առաջընթաց է նկատվում: Այդ փաստին արդեն կլորացված աչքերով չեն նայում, այլ հակառակը՝ որոշ չափով հպարտանում են, որ կանայք այս կամ այն ոլորտում հաջողության են հասնում:

- Որո՞նք են կանանց՝ պատգամավոր դառնալու դրդապատճառները: Տարբերվո՞ւմ են տղամարդկանց դրդապատճառներից:

- Մասամբ, որպեսզի առաջ մղեն այն հարցերը, որոնց շուրջ մտորում են, լուծումներն են որոնում: Մյուս դրդապատճառն այն է, որ կանայք փորձում են տեղ զբաղեցնել բիզնես միջավայրում, քանի որ հայ հասարակության մեջ արդեն ընտելացել են այն իրողությանը, որ կինը կարող է լավ նախարար լինել, աշխատակազմի լավ ղեկավար, օրենսդրական դաշտում կարող է որոշ փոփոխություններ կատարել, ինչպես նաև՝ գենդերային քաղաքականության մեջ և ընտանեկան բռնության կանխման հարցերում:

Պատգամավոր առաջադրվելու հարցում տղամարդկանց և կանանց դրդապատճառները միանգամայն տարբեր են: Տղամարդկանց համար դա անձեռնմխելիություն ստանալու հարց է, իսկ կանայք փորձում են պայքարել այս կամ այն հարցերի լուծման համար: Կանայք ավելի շատ են խորամուխ լինում քննարկվող հարցերի էության մեջ, ձգտում են գտնել խնդրի առավել բազմակողմանի լուծում:

- ՀՀ ընտրական օրենսգրքում գենդերային քվոտան բարձրացնելուց հետո արդյոք քաղաքական կուսակցությունների ցուցակներում ընդգրկված կանայք կարդարացնե՞ն կանանց սպասելիքները: Ի՞նչ չափով կին պատգամավորները կազդեն օրենսդրական գործունեության վրա:

- Քվոտաներն այնքան փոքր են, որ սպասելիքները ողջ ծավալով չեն կարող արդարացվել: Իհարկե, մոտ 20-30 տոկոսով դրանք կարդարանան, բայց չեմ կարծում, թե կարող են հատել 50 տոկոսի նշաձողը:

- Ինչպիսի՞ն պետք է լինի կանանց ՀԿ-ների դիրքորոշումը պատգամավորի կին թեկնածուներին աջակցելու հարցում:

- Համաձայն չեմ, որ հասարակական կազմակերպությունը պետք է լինի քաղաքական կուսակցության կողքին և առավել ևս՝ աջակցի թեկնածուներին: Ես՝ որպես հասարակական կազմակերպության նախագահ, չեմ տեսնում ընդհանուր եզրեր: Բացի այդ, կարծում եմ, որ իրենք՝ քաղաքական գործիչները, պետք է լինեն հասարակական կազմակրեպությունների կողքին:



Գոհար Շահնազարյան

«Աջակցությունը և համագործակցությունը պետք է մշտական բնույթ ունենան, ոչ թե սահմանափակվեն նախընտրական ժամանակահատվածով»

2004 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ «Ժամանակակից հայ հասարակության սոցիալական շերտավորման հիմնախնդիրները և միտումները. գենդերային վերլուծություն» թեմայով: Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ամբիոնի դոցենտ է: Ներկայումս դասավանդում է տարբեր առարկաներ սոցիալական հոգեբանության և գենդերային հետազոտությունների բնագավառում:

Վերապատրաստվել է Արիզոնայի պետական համալսարանի Հանրային կառավարման ֆակուլտետում և Կալիֆոռնիայի Բերկլիի համալսարանի Սլավոնական, Արևելյան Եվրոպայի և Եվրասիական ուսումնասիրությունների ինստիտուտում:

Մասնակցել է գենդերային հիմնախնդիրներին վերաբերող տարբեր հետազոտական և կրթական ծրագրերում, միջազգային գիտաժողովներին և թրեյնինգներին, տպագրել է «Գենդերի սոցիալական կառուցումը» ուսումնական ձեռնարկ և մի շարք գիտական հոդվածներ:

«Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի համահիմնադիր է:

- Ձեր կարծիքով՝ ի՞նչ դեր են խաղում կանանց հասարակական կազմակերպությունները կանանց քաղաքական սոցիալականացման գործում: Եվ այս տեսանկյունից վերջին 5 տարիներին տեղի՞ են ունեցել փոփոխություններ կանանց ՀԿ-ների գործունեության մեջ:

- Ես համարում եմ, որ հասարակական կազմակերպությունները կարևոր դեր են խաղում կանանց քաղաքական ակտիվացման գործում, քանի որ այսօր հենց դրանք են պատրաստում կանանց քաղաքական մասնակցության: Օրինակ՝ մեր կազմակերպությունն ուղղակիորեն չի զբաղվում կանանց քաղաքական լիդերությամբ, նրանց քաղաքական ակտիվությամբ, բայց մեր կազմակերպած ուսուցումը նպատակաուղղված է կանանց ներուժի զարգացմանը և դերի ակտիվացմանը: Սակայն ուրախալի է, որ կան հասարակական կազմակերպություններ, որոնք զբաղվում են հենց կանանց քաղաքական ակտիվությամբ, օրինակ՝ Համալսարանական կրթությամբ

կանանց ասոցիացիան, որը կազմակերպում և անցկացնում է կանանց լիդերության դպրոցներ: Այսօրվա դրությամբ միայն հասարակական կազմակերպություններն են զբաղվում կանանց դերի ակտիվացմամբ: Ցավոք, ինստիտուցիոնալ ֆորմալ կրթությունը չի անում այն, ինչ կարող էր և պետք է աներ այդ հարցում:

Մեր կազմակերպությունը ուսուցում է իրականացնում տարբեր թեմաներով, բայց հիմնականում՝ կանանց իրավունքների ուղղությամբ: Կարևորն այն է, որ մեր պարապմունքների ժամանակ մենք շեշտը դնում ենք աղջիկների և կանանց ինքնագնահատականի բարձրացման վրա: Չէ՞ որ գաղտնիք չէ՝ կանանց քաղաքական ակտիվությունը, ինչպես և ակտիվությունն ընդհանրապես, կախված չէ գիտելիքների պակասից կամ քաղաքականությամբ զբաղվելու ցանկության բացակայությունից, ինչպես ընդունված է համարել մեր հասարակությունում: Իրականում դրա պատճառը սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրներն են՝ կանանց ցածր ինքնագնահատականը և ինքնընկալումը:

Ինչ վերաբերում է կանանց քաղաքական ակտիվացմամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությանը, ապա դա տեղի է ունենում հիմնականում տարբեր կոալիցիաների շրջանակներում, օրինակ՝ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի հետ մենք ընդգրկված ենք գենդերային թեմատիկ խմբում, որն էլ մշակել է երկրի գենդերային քաղաքականության իրականացման 2011-2015 թթ. ռազմավարական ծրագիրը:

Վերջին 5 տարիների ընթացքում ավելացել է գենդերային հարցերով և մասնավորապես կանանց դերի ակտիվացման խնդիրներով զբաղվող ՀԿ-ների թիվը, բայց դրանց գործունեությունն ուղղակիորեն ուղղված չէ կանանց քաղաքական սոցիալականացմանը, պարզապես ՀԿ-ների գործունեությունը նպաստում է դրան:

Մեկ այլ ցուցանիշ. ընդլայնվել է պետական կառույցների հետ հասարակական կազմակերպությունների համագործակցությունը, ինչը նույնպես պակաս կարևոր չէ, և կարելի է ասել, որ դա որոշ իմաստով առաջընթաց է, քանի որ հիմքեր է ստեղծում կանանց քաղաքական ակտիվացման համար:

- Վերջին տարիներին կանանց հասարակական կազմակերպությունների և կուսակցությունների կանանց խորհուրդների միջև համագործակցություն ձևավորվե՞լ է: Ո՞ր ոլորտներում և ի՞նչ չափով է այն նպաստում Հայաստանում ժողովրդավարության զարգացմանը: Ի՞նչն է խանգարում այդ համագործակցությանը:

- Չեմ կարող այդ գործընթացը համագործակցություն անվանել, բայց տվյալ պահին քաղաքական կուսակցությունների այն ներկայացուցիչները, որոնք եղել են մեր հանդիպումներին, հետագա համագործակցության հետաքրքրություն են արտահայտել և ցանկանում են շարունակել այն: Նշանակում է՝ իրենք էլ գիտակցում են, որ շատ տեղեկություններ կարող են ստանալ հասարակական կազմակերպություններից. դրանք և՛ տվյալներ են, և՛ ՀԿ-ների անցկացրած հետազոտություններ, և՛ որոշակի դեպքեր: Հասարակական կազմակերպությունները քաղաքական գործիչների համար նաև մտքերի փոխանակման յուրօրինակ հարթակ են:

Ինձ ծանոթ չեն քաղաքական կուսակցությունների կանանց խորհուրդների հետ համագործակցող հասարակական կազմակերպություններ, ուստի դժվարանում եմ պատասխանել այդ համագործակցությունը խոչընդոտող գործոններին վերաբերող հարցին: Մեր նախաձեռնությամբ անցկացվել են հանդիպումներ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների հետ, որոնք զբաղվում են կանանց հիմնախնդիրներով: Մասնակիցները հիմնականում քաղաքական կուսակցությունների կանանց խորհուրդների ներկայացուցիչներն էին:

Ելնելով մեր կազմակերպության անցկացրած հանդիպումների արդյունքից՝ կարելի է ասել, որ համագործակցությունը որոշ կուսակցությունների հետ բավական դժվար կլինի, քանի որ կուսակցություններում դեռևս գործում է այն կարծրատիպը, թե հայ կինը պետք է առաջին հերթին լինի մայր, օջախի պահապան, ոչ թե կարիերայով զբաղվի: Նման մոտեցումն ինքնին խոչընդոտ է:

Բայց, օրինակ՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը ներկայացնող կանայք թերևս միակ մասնակիցներն էին, որոնք չէին վախենում հնչեցնել «ֆեմինիզմ» բառը, նշել, որ իրենք ֆեմինիստուհիներ են, և փորձում են փոխել հասարակության վերաբերմունքն այդ հասկացությանը: Այս մոտեցումը, իհարկե, կապված է նրանց կուսակցության սոցիալիստական ուղղվածության հետ:

Միաժամանակ նման հանդիպումները օգտակար են քաղաքական կուսակցությունների կին ներկայացուցիչների համար, քանի որ

հանդիպումների ընթացքում արծարծվում էին տարբեր գենդերային հիմնախնդիրներ, ինչպես նաև՝ Հայաստանում ընդունվող օրենքների և ազգային ծրագրերի վերլուծության և մշտադիտարկման խնդիրը:

Կուսակցությունների շատ ներկայացուցիչներ ընդգծում էին հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության կարևորությունը, ընդ որում շեշտում, որ համագործակցությունը կարող է տարբեր ձևեր ունենալ՝ տեղեկատվության տրամադրումից մինչև հանդիպումների անցկացումը, որտեղ կարող են քննարկվել գենդերային հավասարության և այլ հարցեր:

Ընդ որում, իմ կարծիքով, հասարակական կազմակերպությունները պետք է համագործակցեն ոչ միայն կուսակցությունների կանանց խորհուրդների հետ, որոնք ընկալում են գենդերային հավասարության հիմնախնդիրները, այլև՝ կուսակցության մյուս անդամների:

- Ո՞ր ոլորտներում և ի՞նչ չափով են կանանց հասարակական կազմակերպությունները մասնակցում 2012 թ. ընտրական գործընթացներին: Նկատելի՞ է ակտիվացում նախորդ՝ 2007 թ. ընտրությունների համեմատ:

- Կարծում եմ՝ կանանց շատ հասարակական կազմակերպություններ մասնակցում են ընտրություններին նույն ձևաչափով, ինչ մենք: Նկատի ունեմ կուսակցությունների ներկայացուցիչների հետ հանդիպումների կազմակերպումը: Չեմ բացառում, որ կան կանանց ՀԿ-ներ, որոնք ավելի ակտիվ են ընդգրկված այդ գործընթացներում:

Այս տարի զգալիորեն աշխուժացել է նախընտրական գործընթացներում կանանց ՀԿ-ների ներգրավվելը: Կարծում եմ՝ դա պայմանավորված է կանանց ՀԿ-ների ուժեղացմամբ և ակտիվացմամբ, ինչը, ըստ իս, կապված է դրանց ռեսուրսների մեծացմամբ:

Հասարակական կազմակերպությունները մտավոր առումով ավելի պատրաստված են, ավելի լավ են գիտակցում իրենց դերը: Ընդամենը 5 տարի առաջ հասարակական կազմակերպությունն ընկալվում էր սոսկ որպես ծառայություններ մատուցող կամ կիսաբարեգործական կազմակերպություն: Հայաստանում այժմ ՀԿ-ներն ավելի պատրաստված են և ավելի լավ են հասկանում իրենց դերը, հետզհետե փոխվում են գործառույթների առումով՝ ուժեղանալով լոբբինգի և շահերի պաշտպանության ոլորտում: Իսկ ընտրություններն առիթ են, որ կանանց ՀԿ-ները ակտիվորեն դրսևորեն իրենց:

Մեր կազմակերպությունը չի մասնակցում նախընտրական գործընթացներին: Ես համարում եմ, որ աջակցությունը և համագործակցությունը պետք է մշտական բնույթ ունենան, ոչ թե սահմանափակվեն նախընտրական ժամանակահատվածով:

Կարծում եմ՝ կին թեկնածուներն իրենք պետք է մեզ դիմեն, իսկ կանանց լիդերության դպրոցը կարող է ծառայել որպես ցատկահարթակ ակտիվ կանանց համար: Իսկ մեր կազմակերպության օգնությունը կին թեկնածուներին կարող է լինել գրականության տրամադրումը, տարբեր շերտերի ներկայացուցիչների հետ հանդիպումների կազմակերպումը՝ կանանց հիմնախնդիրներ քննարկելու համար, քանի որ փորձը ցույց է տալիս, որ կին թեկնածուներն էլ բավարար չափով իրազեկ չեն կանանց հիմնախնդիրների մասին:

- Ի՞նչ փոփոխություններ են կատարվել երկրի բոլոր հասարակական-քաղաքական ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության ապահովման գործում ՀՀ կառավարության կողմից գենդերային քաղաքականության հայեցակարգը և դրա իրականացման ռազմավարությունը հաստատելուց հետո:

- Իրականում որևէ փոփոխություն չի կատարվել: Այո, մենք մասնակցում ենք հանդիպումների, լսում ենք հաշվետվություններ կատարած աշխատանքի մասին, բայց միևնույն է, առանց մշտադիտարկման մեխանիզմների անհնար է տեսնել, թե ինչ է արված: Թղթի վրա գրվածն ընդամենը 10 տոկոսով է համապատասխանում իրականում կատարված աշխատանքին: Հանդիպումների ժամանակ ասվում էր այն մասին, ինչ վաղուց արդեն պետք է արված լիներ. գենդերային դասընթացների ներդրումը երկրի ուսումնական հաստատություններում, կանանց մասնակցությունը բանակցային գործընթացներին: Տպավորություն է ստեղծվում, որ գենդերային հարցերին բավարար ուշադրությամբ չեն վերաբերվում:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՄԲ ԿԱՆԱՆՑ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ԿԱՆԱՅՔ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գենդերային հետազոտությունների կենտրոնի ղեկավար

Ջեմմա Հասրաթյան

Խմբագրական կազմ՝ Ջեմմա Հասրաթյան (գլխ.խմբագիր),
Լիլիթ Զաքարյան, Թամարա Հովնաթանյան,
Գայանե Արմաղանովա, Գայանե Մերոյան

Հարցազրույցներն անցկացրել են Հասմիկ Հարությունյանը, Իրինա Մանուկյանը, Նարինե Դավթյանը, Մարիաննա Աբովյանը, Արմինե Մխիթարյանը, Մարիամ Մուղդուսյանը, Լիա Խոջոյանը:

Խմբագիր՝ Անահիտ Հարությունյան

Մակետավորումը՝ Նաիրա Խաչատուրյանի

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա
0002, Երևան, Սարյան, 22, 12-րդ հարկ
Հեռախոս՝ (374 10) 53 68 02
Ֆաքս՝ (374 10) 53 67 92
e-mail: awue.armenia@gmail.com

Տարածվում է անվճար

ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24 (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am

ARMENIAN ASSOCIATION OF WOMEN WITH UNIVERSITY EDUCATION
CENTER FOR GENDER STUDIES

WOMEN IN POLITICS
AND
ABOUT POLITICS

Collection of interviews conducted immediately before and in the aftermath of the 2012 parliamentary elections in Armenia

Head of the Center for Gender Studies: Jemma Hasratian

Editorial Board: Jemma Hasratian (Editor-in-Chief), Lilit Zakarian, Tamara Hovnatanian, Gayaneh Armaghanova and Gayaneh Meroyan

Interviews were conducted by: Hasmik Harutiunian, Irina Manukian, Narineh Davtian, Marianna Abovian, Armineh Mkhitarian, Mariam Mughdoussian and Lia Khojoyan

Editor: Anahit Harutiunian

Layout: Naira Khachaturyan

Armenian Association of Women with University Education
22 Sarian Street, 12th floor, Yerevan, 0002
Tel.: (374 10) 53 68 02
Fax: (374 10) 53 67 92
E-mail: awue.armenia@gmail.com

Distributed for free

ASOGHIK

Printed by “Asoghik” printing house
24 Sayat-Nova str., Yerevan (office)
45 Davit Malyan str., Avan (printing house)
Tel: (374 10) 54 49 82, 62 38 63
E-mail: info@asoghik.am